ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» մարտի 2019 թվականի N 4/1

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել քաղաքացիական ավիացիայի կոմիտեում իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2019թ. մարտի 5-ի թիվ 4/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/4, հոկտեմբերի 30-ի թիվ 14/1 և նոյեմբերի 27-ի թիվ 17/2 որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվության տեխնոլոգիաների նախարարությանը ենթակա քաղաքացիական ավիացիայի կոմիտե:
Ստուգման օբյեկտը	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018 թվականի հուլիսի 6-ից մինչև 2019 թվականի մարտի 4-ը ներառյալ:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում իրականացվել է ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը: «Հայաէրոնավիգացիա» և «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ներում իրականացվել է համապատասխանության և կատարողականի ստուգում, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 6-րդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 6-րդ վարչության հաշվեքննության խումբը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ա. և բ. ենթակետերի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և 2-րդ մասի դրույթները, հաշվեքննության է ենթարկել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 2017 թվականի և 2018 թվականի ինը ամիսների ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսատնտեսական գործունեությունը:

Ղեկավարության պատասխանատվությունը

Հաշվեքննության օբյեկտի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ֆինանսատնտեսական գործունեությունը ՀՀ օրենքների և իրավական ակտերի համապատասխան իրականացնելու համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Հաշվեքննության օբյեկտի ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն, իր կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, հաշվի առնելով նաև Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտները: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որ ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռք բերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի

դատողությունից, ներառյալ՝ խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 2017 թվականի և 2018 թվականի ինն ամիսների հաշվետվություններն արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և հաշվեքննության ու ստուգման ֆինանսական տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և ստուգման համապատասխանության տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

Դավիթ Չիբուխչյանյան՝
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
4 մարտի 2019 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Արտաբյուջետային եկամուտների և ծախսերի վերաբերյալ

2017 թվականին ճշտված նախահաշվով ՔԱԳՎ-ի եկամուտները նախատեսվել են 289,528.8 հազ. դրամի չափով, փաստացի եկամուտները կազմել են 289,814.4 հազ. դրամ:

Արտաբյուջետային միջոցների հաշվին նախահաշվով ՔԱԳՎ-ի ծախսերը հաստատվել են 409,934.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսերը կազմել են 292,157.6 հազ. դրամ կամ նախատեսվածի 71.3%-ը:

Հաստատված ընդհանուր ծախսերից 63,870.2 հազ. դրամը (15.6%-ը) նախատեսվել և նույն չափով ուղղվել է «աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված ծախսերի կատարմանը:

«Գործուղումների և շրջագայության ծախսեր» հոդվածով նախատեսվել է 71,535.1 հազ. դրամի ծախս (հաստատված ծախսերի 17.5%-ը), դրամարկղային ծախսը կազմել է 26,239.8 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշի 36.7%-ը:

Պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերման նպատակով նախատեսվել են 44,599.7 հազ. դրամի ծախսեր (հաստատված ընդհանուր ծախսերի 10.9%-ը), դրամարկղային ծախսը կազմել է 9,710.6 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշի 21.8%-ը:

«Ընթացիկ պահպանում և նորոգում» հոդվածով նախատեսվել են 15,400.0 հազ. դրամի ծախսեր (հաստատված ընդհանուր ծախսերի 3.8%-ը), դրամարկղային ծախսը կազմել է 9,483.8 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշի 61.6%-ը:

«Նյութեր (ապրանքներ)» հոդվածով նախատեսվել են 11,240.0 հազ. դրամի ծախսեր (հաստատված ընդհանուր ծախսերի 2.7 %-ը), դրամարկղային ծախսը կազմել է 6,289.9 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշի 56.0%-ը:

2018 թվականին ճշտված նախահաշվով ՔԱԳՎ-ի եկամուտները նախատեսվել են 840,420.3 հազ. դրամի չափով, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի եկամուտները կազմել են 844,394.4 հազ. դրամ՝ արդեն իսկ ապահովելով տարեկան նախահաշվային ցուցանիշի կատարումը:

2018 թվականին արտաբյուջետային միջոցների հաշվին ՔԱԳՎ-ի նախահաշվով ծախսերը հաստատվել են 958,482.6 հազ. դրամ (որը 233.8%-ով գերազանցել է 2017

թվականի նույն ցուցանիշը), դրամարկղային ծախսերը 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 328,355.8 հազ. դրամ:

Հաստատված ընդհանուր ծախսերից 64,668.8 հազ. դրամը (հաստատված ծախսերի 6.7%-ը) նախատեսվել է ուղղել «աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված ծախսերի կատարմանը, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դրամարկղային ծախսը կազմել է 41,640.5 հազ. դրամ, կամ տարեկան նախատեսված ծախսի 64.4%-ը:

«Գործուղումների և շրջագայության ծախսեր» հոդվածով՝ չնայած 2017 թվականի 36.7%-ի չափով ցածր կատարողականին, 2018 թվականին ծախսերը նախատեսվել են 99,744.1 հազ. դրամի չափով (հաստատված ընդհանուր ծախսերի 10.4%-ը), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դրամարկղային ծախսը կազմել է 23,362.4 հազ. դրամ, որը կազմում է տարեկան ցուցանիշի 23.4%-ը:

Նույն պատկերն է արձանագրվել նաև «պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերում» հոդվածով նախատեսված ծախսերի մասով: Այսպես՝ 2018 թվականի ծախսերը նախատեսվել են 104,231.9 հազ. դրամ, մինչդեռ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ դրամարկղային ծախսը կազմել է ընդամենը 2,642.3 հազ. դրամ, կամ տարեկան ցուցանիշի 2.5%-ը:

«Ընթացիկ պահպանում և նորոգում» հոդվածով նախատեսվել են 436,425.2 հազ. դրամի ծախսեր (հաստատված ընդհանուր ծախսերի 45.5%-ը), դրամարկղային ծախսը կազմել է 171,298.7 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշի 39.3%-ը:

«Նյութեր (ապրանքներ)» հոդվածով նախատեսվել են 20,893.8 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսը կազմել է 6,021.9 հազ. դրամ, կամ նախատեսված ցուցանիշի 28.8%-ը: Ընդ որում, 2017 թվականին 11,240.0 հազ. դրամի չափով հաստատված ծախսերի պարագայում դրամարկղային ծախսը կազմել է 6,289.9 հազ. դրամ, իսկ կատարողականը՝ 56.0%-ը:

Այսպիսով՝ ՔԱԳՎ-ի կողմից արտաբյուջետային միջոցների ծախսերի պլանավորումը կատարվել է թերություններով՝ հաշվի չեն առնվել և չեն գնահատվել կատարվելիք ծախսերի իրական ծավալներն ու նախորդ տարվա փաստացի ծախսերը, իսկ առանձին դեպքերում դրանք անհիմն ավելացվել են՝ ծախսային հոդվածների միջև արտաբյուջետային միջոցներն ամբողջությամբ բաշխելու նպատակով, ինչը հիմնավորվել է նաև կատարողականների ցածր մակարդակով:

Ընտրանքային կարգով առանձին հոդվածներով կատարված ծախսերի արդյունավետության և օրինականության շուրջ իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

➢ ՔԱԳՎ-ի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին 2017 թվականի տարեկան հաշվետվության համաձայն՝ «աշխատանքի վարձատրություն» հոդվածով պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների մասով տարեկան ճշտված նախահաշվով հաստատվել է 63,870.2 հազ. դրամի ծախս, դրամարկային (փաստացի) ծախսը կազմել է 63,870.2 հազ. դրամ, որից՝

- 30,592.2 հազ. դրամի չափով ծախսը կատարվել է ՔԱԳՎ-ի պետի 2017 թվականի ապրիլի 7-ի թիվ 96-Ա, հունիսի 22-ի թիվ 172-Ա, օգոստոսի 30-ի թիվ 227-Ա, սեպտեմբերի 25-ի թիվ 246-Ա և դեկտեմբերի 12-ի թիվ 316-Ա հրամանների հիման վրա,
- 29,762.0 հազ. դրամի չափով ծախսը կատարվել է ՔԱԳՎ-ի աշխատակազմի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 7-ի թիվ 33-Ա, հունիսի 22-ի թիվ 66-Ա, օգոստոսի 30-ի թիվ 110-Ա, սեպտեմբերի 25-ի թիվ 115-Ա, դեկտեմբերի 12-ի թիվ 159-Ա հրամանների հիման վրա,
- 3,388.0 հազ. դրամի չափով պարգևատրվել են երեք վարորդներ և մեկ օպերատոր՝ ՔԱԳՎ-ի աշխատակազմի ղեկավարի 2017 թվականի մայիսի 10-ի թիվ 52-Ա, հունիսի 5-ի թիվ 60-Ա, հուլիսի 4-ի թիվ 69-Ա, օգոստոսի 2-ի թիվ 92-Ա, սեպտեմբերի 5-ի թիվ 112-Ա, հոկտեմբերի 4-ի թիվ 118-Ա և նոյեմբերի 2-ի թիվ 134-Ա հրամանների հիման վրա,
- Մեկ աշխատակցի տրվել է 128.0 հազ. դրամի չափով օգնություն:

Պարգևատրումների գործընթացը պատշաճ կանոնակարգված չէ

Աշխատակիցներին պարգևատրելու վերաբերյալ ՔԱԳՎ-ի պետի և աշխատակազմի ղեկավարի հրամաններում հղումներ չեն կատարվել այն չափանիշներին, համապատասխան աշխատանք-ների գնահատականներին կամ ստացված արդյունքներին, որոնք թույլ կտան գնահատել պարգևատրման ենթակա պաշտոնատար անձանց (հանրային ծառայողների) ընտրությունը, նրանց պարգևատրման հիմքերը և չափերը:

Հատկանշական է, որ 2017 թվականի ընթացքում անձնակազմի պարգևատրումը կատարվել է եռամսյակային պարբերականությամբ, մինչդեռ չորս աշխատակիցներ (երեք վարորդ և մեկ գործավար-օպերատոր) ապրիլ-դեկտեմբեր ամիսներին պարգևատրվել են ամսական կտրվածքով:

Պարգևատրման հրամանի նախագծերը չեն համաձայնեցվել ՔԱԳՎ-ի պետի տեղակալի և իրավաբանական ստորաբաժանման պետի հետ

Չի ապահովվել նաև ՔԱԳՎ-ի աշխատակազմի ներքին գործավարության կարգի վերաբերյալ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին

ընդունված թիվ 257-Ն հրամանի 59-րդ կետի պահանջի կատարումը՝ կապված պարգևատրման հրամանների պատրաստման և արձակման գործընթացների հետ: Մասնավորապես, աշխատակիցների պարգևատրման մասին ոչ մի հրամանի նախագիծ չի համաձայնեցվել ՔԱԳՎ-ի պետի տեղակալի և իրավաբանական ստորաբաժանման պետի հետ:

ՔԱԳՎ-ի պետն ինքնապարգևատրվել է 2,683.0 հազ. դրամի չափով, մինչդեռ նշված պաշտոնատար անձի պարգևատրման լիազորությունները պատկանում են ՀՀ վարչապետին

Չի պահպանվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջը՝ 2017 թվականին ՔԱԳՎ-ի պետն իր արձակած հրամաններով իրեն պարգևատրել է 2,683.0 հազ. դրամի չափով, այն դեպքում, երբ նշված պաշտոնատար անձի պարգևատրման լիազորությունները պատկանում են ՀՀ վարչապետին:

2017թ. 5,371.0 հազ. դրամի չափով պարգևատրման գումարների վճարումը պատշաճ չի հիմնավորվում: Որոշ պարգևատրված աշխատակիցներ ՔԱԳՎ-ում չեն ունեցել անգամ երկամսյա աշխատանքային ստաժ

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց (ոչ հանրային ծառայողների) պարգևատրման գործընթացները, որի արդյունքում պարզվել է, որ 2017 թվականի ընթացքում՝ առանց պատշաճ իրավական հիմնավորումների, վճարվել են 5,371.0 հազ. դրամի չափով պարգևատրման գումարներ, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ առանձին դեպքերում աշխատակիցները չեն ունեցել ՔԱԳՎ-ում անգամ երկամսյա աշխատանքային ստաժ: Օրինակ՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատակիցն ընդունվել է աշխատանքի 2017 թվականի նոյեմբերի 2-ին, իսկ նույն թվականի դեկտեմբերի 12-ին, կամ 40 օր անց՝ առանց հիմնավորման, պագևատրվել է 386.0 հազ. դրամի չափով: Բերված օրինակը վկայում է այն մասին, որ ՔԱԳՎ-ում պարգևատրման մասով արդյունավետ չի գործում

Պարգևատրման մասով, ցածր է ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը

ներքին հսկողական համակարգը, և լիարժեք չեն օգտագործվում վերջինիս հնարավորությունները՝ պարգևատրման համար նախատեսված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու գործում:

➢ ՔԱԳՎ-ի բյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին 2017 թվականի տարեկան հաշվետվության համաձայն՝ *«աշխատանքի վարձատրություն» 4112000 քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում* հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով հաստատվել է 13,293.6 հազ. դրամի ծախս,

դրամարկղային (փաստացի) ծախսը կազմել է 13,293.6 հազ. դրամ, որից՝ հունվար և հուլիս ամիսներին 6,646.8 հազարական դրամ հավասար չափերով:

Չի պահպանվել Օրենքի պահանջը, ըստ որի քաղ. ծառայողը չի կարող ստանալ պարգևատրում, եթե պարգևատրում տալու վերաբերյալ որոշում ընդունելու պահին նա չի հանդիսացել քաղ. ծառայող

Քաղաքացիական ծառայողներին վճարված պարգևատրումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ չի պահպանվել «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ ըստ որի քաղաքացիական ծառայողը չի կարող ստանալ պարգևատրում, եթե կիսամյակային հաշվետվությունը գնահատվել է բացասական, կամ պարգևատրում տալու վերաբերյալ որոշում ընդունելու պահին նա չի հանդիսացել քաղաքացիական ծառայող: Այսպես, աշխատակիցը որպես քաղաքացիական ծառայող (վարչության պետ), նշանակվել է ՔԱԳՎ-ի պետի 21.03.17թ.-ի թիվ 80-Ա հրամանով, իսկ նույն թվականի հուլիս ամսին ստացել է քաղաքացիական ծառայության պարգևատրում՝ 282.0 հազ. դրամի չափով: Նույն կերպ, անձը ՔԱԳՎ-ի աշխատակազմի ղեկավարի 03.05.2017 թվականի թիվ 47-Ա հրամանով նշանակվել է վարչության պետի տեղակալի պաշտոնում, իսկ հուլիս ամսին ստացել է քաղաքացիական ծառայողի պարգևատրում 248.7 հազ. դրամի չափով:

➢ ***Աշխատողների ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններ գործուղման ծախսեր***

Չի պահպանվել գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ տրամադրելու պահանջը

Չի պահպանվել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Ընդհանուր դրույթներ» գլխի 9-րդ կետի պահանջն՝ ըստ որի գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ:

Օրինակ՝

- ✓ 24.03.2017 թվականի թիվ 27-Ա հրամանով գործուղումը նախատեսվել է մարտի 28-29-ին, վճարումը կատարվել է 04.04.2017 թվականին,
- ✓ 08.02.2017 թվականի թիվ 13-Ա հրամանով գործուղումը նախատեսվել է փետրվարի 10-11-ին, վճարումը կատարվել է 04.04.2017 թվականին և այլն:

Չի պահպանվել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Ընդհանուր դրույթներ» գլխի 9-րդ կետի պահանջն՝ ըստ որի գործուղումից վերադառնալուց և աշխատանքի

ներկայանալուց հետո գործուղման ծախսերը հաստատող փաստաթղթերը ներկայացվելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում հատուցման ենթակա է համարվում գիշերավարձի և ճանապարհածախսի գումարի տարբերությունը, բայց ոչ ավելի, քան կարգով սահմանված առավելագույն չափով: ***Չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Ընդհանուր դրույթներ» գլխի 10-րդ կետի պահանջը***, որով սահմանվել է, որ «ոչ պետական և ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորման դեպքում Հայաստանի Հանրապետության տարածքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և օտարերկրյա պետություններ գործուղման դեպքում գործուղման ծախսերի՝ որոշման թիվ 2 հավելվածով նախատեսված չափերը համարվում են նվազագույն չափեր»: Իրականում, 5 դեպքում գործուղված աշխատակիցներին վճարվել է սահմանված չափերից ավելի գումար:

5 դեպքում գործուղված աշխատակիցներին վճարվել է սահմանված չափերից ավելի գումար

➢ ***Ներկայացուցչական ծախսեր***

Բացահայտվել են մի շարք դեպքեր, երբ որոշակի միջոցառման ընթացքում կատարման համար նախատեսված ներկայացուցչական ծախսերը կատարվել են միջոցառման ավարտից հետո

ՔԱԳՎ-ի արտաբյուջետային միջոցներից 2017 թվականի հաստատված նախահաշվով «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով նախատեսվել է 21,503.3 հազ. դրամի ծախս, փաստացի ծախսը կազմել է 4,690.3 հազ. դրամ (21.8%): 2018 թվականին հաստատված նախահաշվով նույն հոդվածով ծախսերը նախատեսվել են 38,984.2 հազ. դրամ, 01.10.2018թ.-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 1,366.3 հազ. դրամ:

Կատարված ներկայացուցչական ծախսերի ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը՝

- 2017 թվականի սեպտեմբերի 25-ից 29-ը Երևանում տեղի է ունեցել ICAO 24-րդ հանդիպումը, որի շրջանակներում, համաձայն 05.10.2017 թվականի թիվ 1 ընդունման-հանձնման արձանագրության՝ հոկտեմբերի 5-ին, հյուրասիրության նպատակով, կատարվել է 194.2 հազ. դրամի ապրանքների գնում: Նույն օրը՝ համաձայն 05.10.2017 թվականին դուրս գրված հաշիվ-ապրանքագրի և թիվ 1 ընդունման-հանձնման արձանագրության, մեկ այլ մատակարարից ձեռք են բերվել ևս 78.6 հազ. դրամի ապրանքներ, այլ կերպ՝ հյուրասիրության նպատակով ապրանքները ձեռք են բերվել պատվիրակության մեկնելուց հետո:
- 2018 թվականի ապրիլի 14-ից 18-ը Սիրիայի Արաբական Հանրապետության պատվիրակության այցի շրջանակներում նախատեսվել է երկու անգամ 8 անձի համար կազմակերպել հյուրասիրություն: 2018 թվականի ապրիլի 25-ին ձեռք են

բերվել 215.4 հազ. դրամի ապրանքներ, որի վերաբերյալ նույն օրը կազմվել է ընդունման-հանձնման արձանագրություն: Փաստորեն, ըստ 25.04.2018 թվականի հաշիվ-ապրանքագրի՝ ապրանքների մատակարարումը կատարվել է պատվիրակության մեկնելուց հետո, և այլն:

➢ ***Վառելիքի ծախսեր***

ՔԱԳՎ-ի 2017 թվականի ճշտված բյուջեով «տրանսպորտային նյութեր» հոդվածով նախատեսվել են 1,941.4 հազ. դրամի, իսկ արտաբյուջետային միջոցների հաշվին՝ 3,274.8 հազ. դրամի ծախսեր: Բյուջետային միջոցների հաշվին փաստացի ծախսը կազմել է 4,236.8 հազ. դրամ, իսկ արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված դրամարկղային ծախսը կազմել է 2,411.7 հազ. դրամ:

2018 թվականի ճշտված բյուջեով «տրանսպորտային նյութեր» հոդվածով նախատեսվել են 2,441.4 հազ. դրամի, իսկ արտաբյուջետային միջոցների հաշվին՝ 3,035.0 հազ. դրամի ծախսեր: 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ բյուջետային միջոցների հաշվին փաստացի ծախսը կազմել է 909.2 հազ. դրամ, իսկ արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված դրամարկղային ծախսը կազմել է 1,137.5 հազ. դրամ:

ՔԱԳՎ-ի կողմից հաշվետու ժամանակաշրջանում շահագործվել են 3՝ Shkoda Rapid 111 SS 60, Shkoda Rapid 101 SS 60 և Տոյոտա Կոռոլա 110 SS 60 մակնիշի ավտոմեքենաներ, որոնց կողմից 2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ օգտագործվել է համապատասխանաբար՝ 12960 և 9380 լիտր վառելիք:

Ավտոմեքենաների երթուղային թերթերում հաշվառումը կատարվել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ավտոմեքենաների երթուղային թերթերում հաշվառումը կատարվել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի: Ընդ որում, վառելիքի ծախսում ներառվել են նաև շաբաթ և կիրակի օրվա ծախսերը, մինչդեռ այդ օրերի համար չեն արձակվել հրամաններ դրանք աշխատանքային օր համարելու համար: Ելնելով վերոնշյալից, շաբաթ-կիրակի օրերի համար դուրս գրված վառելիքի քանակը (2017 թվականին՝ 3776 լիտր և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 2636 լիտր) փաստաթղթերով (համապատասխան հրամաններով) չի հիմնավորվել:

Շաբաթ-կիրակի օրերի համար դուրս գրված վառելիքի քանակը (6412 լիտր) չի հիմնավորվել: Ավելի վճարված գումարը կազմել է 2,250.2 հազ. դրամ

Հաշվարկները ցույց են տվել, որ 2017 թվականին ավելի վճարված գումարը կազմել է 1,260.7 հազ. դրամ, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 989.5 հազ. դրամ:

2. «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացված դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ

ՔԱԳՎ-ի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին 2017 թվականի տարեկան հաշվետվության համաձայն՝ «ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով տարեկան ճշտված նախահաշվով հաստատվել է 142,966.4 հազ. դրամի ծախս, դրամարկային (փաստացի) ծախսը կազմել է 137,111.2 հազ. դրամ:

ՔԱԳՎ-ի աշխատակազմի և «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2017 թվականի փետրվարի 22-ին կնքվել է թիվ 4 պայմանագիրը՝ համաձայն որի օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների իրականացման և թռիչքային հմտություններ ձեռք բերելու նպատակով ՔԱԳՎ-ն ընկերությանը հատկացնում է 141,033.2 հազ. դրամ, որը փոխանցվում է ընկերությանը 2017 թվականի հունվար ամսից՝ 10 օդաչու-ուսանողների 480 թռիչքային ժամ (մեկ ժամի արժեքը սահմանվել է 293.0 հազ. դրամ)՝ ուսումնավարժանքային թռիչքներն իրականացնելու նպատակով:

Ընդ որում, պայմանագիրը կնքվել է փետրվարի 22-ին, մինչդեռ պայմանագրում նշվել է, որ 10 օդաչու-ուսանողների 480 թռիչքային ժամ ուսումնավարժանքային թռիչքներն իրականացնելու են հունվար ամսից:

Վերոնշյալ պայմանագրով սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման հաշվարկն իրականացվել է վառելիքի ծախսի հաշվարկով, իսկ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին մատուցված ծառայությունների համար Diamond DA 40 ինքնաթիռի վարձակալության համար վճարումներն իրականացվել են առանց վառելիքի ծախսի: Վառելիքի ծախսի ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը՝

Ըստ ներկայացված տեղեկանք-հաշվարկների, վառելիքի փաստացի ծախսը կազմել է 2,435.0 հազ. դրամ այն դեպքում, երբ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին փոխանցվել է 4,032.0 հազ. դրամ

Կնքված պայմանագրային գումարի մեջ ներառվել է 4,334.4 հազ. դրամի չափով վառելիքի ծախս, իսկ ըստ ներկայացված տեղեկանք-հաշվարկների, փաստացի ծախսը կազմել է 2,435.0 հազ. դրամ այն դեպքում, երբ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին փոխանցվել է 4,032.0 հազ. դրամ: Առանց վառելիքի ծախսի՝ պայմանագրի գումարը հաշվարկվել է 136,699.0 հազ. դրամի, իսկ փաստացի ծախսը՝ 136,141.0 հազ. դրամի չափով:

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ հունվար-դեկտեմբեր ամիսներին օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների ծախսերը հաշվարկվել են 138,581.0 հազ. դրամի, այդ թվում՝ վառելիքի ծախսը 2,435.0 հազ. դրամի չափով, որը հատկացվում է «Ավիաուսումնական

կենտրոն» ՓԲԸ-ի կողմից: Փաստորեն, վճարումը կազմել է 136,141.0 հազ. դրամ՝ որից 5,000.0 հազ. դրամն «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին նախորդ տարիներին ավելի վճարված գումարն է:

ՔԱԳՎ-ի աշխատակազմի և «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքվել է թիվ 2 պայմանագիրը (պետական պատվերի շրջանակներում գումար հատկացնելու մասին)՝ համաձայն որի օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների իրականացման և թռիչքային հմտություններ ձեռք բերելու նպատակով Գլխավոր վարչությունն ընկերությանը հատկացնում է 78,700.2 հազ. դրամի դրամաշնորհ, որը փոխանցվում է ընկերությանը 2018 թվականի մայիս ամսից սկսած՝ 6 օդաչու-ուսանողների 300 թռիչքային ժամ (մեկ ժամի արժեքը սահմանվել է 262.3 հազ. դրամ)՝ ուսումնավարժանքային թռիչքներն իրականացնելու նպատակով: Կողմերի միջև պայմանագրային պարտավորությունների կատարման հիմքում ընկած հաշվարկում, նախորդ տարվա օրինակով, չի ներառվել վառելիքի ծախսը:

Կողմերի միջև պայմանագրային պարտավորությունների կատարման հիմքում ընկած հաշվարկում, նախորդ տարվա օրինակով, չի ներառվել վառելիքի ծախսը

2018 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկանք-հաշվարկով մատուցված ծառայությունները Diamond DA 40 ինքնաթիռի 240 թռիչքային ժամի դիմաց վարձակալության վճարը կազմել է 64,360.9 հազ. դրամ, այդ թվում՝ 2017 թվականին վճարված 1,417.4 հազ. դրամի վառելիքի ծախսը: Նույն ժամանակաշրջանի համար վճարվել է 62,943.0 հազ. դրամ, այդ թվում՝ կատարվել է նախորդ տարիներին «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին 8,332.7 հազ. դրամի չափով ավելի հաշվանցված գումարներից պակաս վճարում:

Վերոնշյալ հաշվանցված գումարների հետգանձումը կատարվել է ՔԱԳՎ-ի ներքին աուդիտի բաժնի պետի կողմից 14.12.2016թ.-ին կազմված աուդիտորական վերջնական հաշվետվության հիման վրա, որով առաջարկվել է «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին՝ վերադարձնել ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին 17,798,732.0 դրամ, այդ թվում՝ «Մեյն Ավիէյշն Տեքնիքս» ՍՊԸ-ից 13,332.7 հազ. դրամ (8,332.7+5,000.0), որը հաշվարկներով նվազեցվել է, ինչպես նաև 4,466.0 հազ. դրամի գումար՝ «Արմենիա էյրվեյզ» ՍՊԸ-ից: 2018 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ «Արմենիա էյրվեյզ» ՍՊԸ-ից ընկերությունը հաշվարկված գումարի վերադարձը չի ապահովվել:

2018 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ «Արմենիա էյրվեյզ» ՍՊԸ-ից ընկերությունը հաշվարկված գումարի վերադարձը չի ապահովվել

3. ՔԱԳՎ-ի գործառույթների իրականացման վերաբերյալ

3.1. ՀՀ-ում օդանավերի պետական գրանցում, ապագրանցում, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրում

ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման գործընթացները կարգավորվում են Չիկագոյի «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի և ՔԱԳՎ-ի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 192-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ օդանավերի պետական գրանցման, օդանավերի պետական ռեգիստրի վարման ու թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման» կարգով (այսուհետ՝ Կարգ):

2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցվել և/կամ վերագրանցվել են համապատասխանաբար՝ 22 և 24 օդանավեր

2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցվել և/կամ վերագրանցվել են համապատասխանաբար՝ 22 և 24 օդանավեր (հավելված 1): Համաձայն Կարգի՝ օդանավերի գրանցումը կատարվում է օդանավի սեփականատիրոջ հայտի հիման վրա՝ դրան կից բոլոր փաստաթղթերի առկայության դեպքում: Վարչության համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է փաստաթղթերի ուսումնասիրություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև օդանավի ֆիզիկական վիճակի տեսչական ստուգում:

Օդանավի գրանցումը և վկայականի տրամադրումը կատարվում է հայտը մուտքագրվելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

Որոշ օդանավերի գրանցումը և թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրումը կատարվել է 3-ից մինչև 20 օր ուշացումով

Ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը՝

✓ EK-H001, EK32408, EK32703 ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավերի գրանցումը և թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրումը կատարվել է 3-ից մինչև 20 օր ուշացումով: Կարգի 4-րդ կետով սահմանվել է, որ օդանավի ֆիզիկական վիճակն ուսումնասիրելու նպատակով տեսչական ստուգման անհրաժեշտության դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել՝ առանց այդ ժամկետի տևողությունն ամրագրելու: Այս պարագայում օդանավերի գրանցման և թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրման համար Կարգի անկատարության հետևանքով սահմանված ժամկետները կորցնում են իրենց իմաստը՝ ժամկետային սահմանափակումների բացակայության պատճառով,

ինչը կարող է հանգեցնել գրանցման և սերտիֆիկացման գործընթացներում սուբյեկտիվ մոտեցման դրսևորմանը:

✓ Օդանավերի գրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման համար ներկայացված հայտերի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությամբ արձանագրվել են ՔԱԳՎ-ի կողմից որոշ հայտերի մերժման դեպքեր: Օրինակ՝ մերժել են

- «Մարս Ավիա» ՓԲԸ-ի կողմից շահագործմանն ընդունվող (ԱՆ-72-100Դ տիպի գ/հ 365.720.30.425) օդանավի գրանցման հայտը (2018 թվականի մայիսի 14-ի N1.4/7.1/1006-18 գրություն, հետագայում ընկերությունը տվյալ օդանավի մասով այլևս չի դիմել գրանցման),
- «Մարս Ավիա» ՓԲԸ-ի կողմից շահագործվող Ան-26 (EK26005) օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման հայտը (2017 թվականի մայիսի 22-ի N1.4/7.1/1030-17 գրություն, ընկերությունը հետագայում ստացել է սերտիֆիկատ),
- «Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ-ի կողմից շահագործվող Բ737-500 տիպի (EK73736) օդանավի գրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման հայտերը (2017 թվականի հունիսի 13-ի N1.4/7.1/1172-17 գրություն, հետագայում ստացել է սերտիֆիկատ),
- «Ատլանտիս Յուրոփիան Էյրվեյզ» ՍՊԸ-ի կողմից շահագործման ընդունվող (Ա-320-231 տիպի գ/հ 0260) օդանավի գրանցումը և թռիչքային պիտանիության տրամադրման հայտերը (2018 թվականի հուլիսի 31-ի N1.4/7.1/1650-18 գրություն, հետագայում տվյալ օդանավի մասով այլևս չի դիմել գրանցման),
- «Ատլանտիս Յուրոփիան Էյրվեյզ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող Բ737-500 տիպի գ/հ 26297 (EK73797) օդանավի գրանցումը և թռիչքային պիտանիության տրամադրման հայտերը (2018 թվականի մայիսի 25-ի N1.4/7.1/1102-18 գրություն, հետագայում ստացել է սերտիֆիկատ),
- «Ատլանտիս Յուրոփիան Էյրվեյզ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող Ա320-211 տիպի, գ/հ 0229 (EK32008) օդանավի գրանցումը և թռիչքային պիտանիության տրամադրման հայտերը (2017 թվականի հունիսի 15-ի N1.4/7.1/1210-17 գրություն, հետագայում ստացել է սերտիֆիկատ):

ՔԱԳՎ-ի կողմից չի պահպանվել Կարգի 4-րդ կետի պահանջը, որով թերի փաստաթղթերով հայտերի մերժում նախատեսված չէ

Կարգի 4-րդ կետով սահմանվել է, որ ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանության կամ ոչ լրիվ ներկայացման դեպքում ՔԱԳՎ-ն գրավոր պետք է տեղեկացնի ավիաընկերությանը թերությունների մասին, այլ ոչ թե մերժի ներկայացված հայտերը: Այլ կերպ՝ ՔԱԳՎ-ի կողմից չի պահպանվել Կարգի 4-րդ կետի պահանջը, որով թերի փաստաթղթերով հայտերի մերժում նախատեսված չէ:

Թույլ են տրվել գործընթացների հերթականությունը չպահպանելու դեպքեր: Առանց մասնագետի կարծիքի տրվել է սերտիֆիկատ

✓ Թռիչքային պիտանիության սերտիֆիկատ ստանալու նպատակով սեփականատիրոջ կողմից ներկայացված հայտում ՔԱԳՎ-ի ներկայացուցչի կողմից՝ օդանավի վերաբերյալ փաստաթղթերի և իրականացված տեսչական ստուգումների արդյունքների ուսումնասիրությունից հետո, կատարվում է գրառում, որ օդանավը պիտանի է թռիչքների, որից հետո կարող է տրվել թռիչքային պիտանիության սերտիֆիկատ: Իրականում, թույլ են տրվել գործընթացների հերթականությունը չպահպանելու դեպքեր, մասնավորապես, EK2815 և EK73797 ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավեր թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման համար հայտում ՔԱԳՎ-ի ներկայացուցչի գրառումը կատարվել է սեփականատիրոջը թռիչքային պիտանիության սերտիֆիկատ տրամադրելուց հետո 1-30 օր ուշացումով, այսինքն՝ առանց մասնագետի կարծիքի տրվել է սերտիֆիկատ:

Օդանավերի մեծ մասը (2017 թվականին՝ 18, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 15 օդանավ) բազավորված են օտարերկրյա պետություններում (հիմնականում՝ աֆրիկյան երկրներում):

ՔԱԳՎ-ն օժտված չէ օդանավերի բազավորման երկրում ավիաընկերությունների գործունեության նկատմամբ հսկողական գործառույթներով, որը կարող է հանգեցնել ՀՀ-ում գրանցված օդանավերի այլ երկրներում անօրինական գործարքներում ներգրավմանը

✓ ՀՀ-ում օդանավերի գրանցման և թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրման համար՝ համաձայն Կարգի 4-րդ կետի, ՔԱԳՎ-ի համապատասխան ստորաբաժանման մասնա-գետների կողմից իրականացվում են օդանավի ֆիզիկական վիճակի տեսչական ստուգումներ: Ելնելով այն հանգամանքից, որ օդանավերի մեծ մասը (2017 թվականին՝ 18, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 15 օդանավ, տե՛ս հավելված 2) բազավորվել են օտարերկրյա պետություններում (հիմնականում աֆրիկյան երկրներում), տեսչական ստուգում իրականացնելու համար ավիաընկերությունները դիմել են ՔԱԳՎ-ին, և պետի հրամանների հիման վրա ու ավիաընկերությունների միջոցների հաշվին, մասնագետները գործուղվել են օդանավի բազավորման երկիր: Հարկ է նշել, որ ՔԱԳՎ-ն օժտված չէ օդանավերի բազավորման երկրում ավիաընկերությունների գործունեության նկատմամբ հսկողական գործառույթներով, որը կարող է հանգեցնել ՀՀ-ում գրանցված օդանավերի այլ երկրներում անօրինական գործարքներում ներգրավմանը:

Համապատասխան հսկողական մեխանիզմների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում տիրապետել նրանց կողմից իրականացված

գործունեության փաստացի ծավալներին, ինչի արդյունքում առկա են հնարավոր հասույթների թերի հայտարարագրման ռիսկեր: Այսպես, 2017 թվականի ընթացքում երկու ավիաընկերություններ, որոնք ունեցել են 10-ից ավելի օդանավեր (բազավորման վայրը աֆրիկյան երկրներ), համախառն եկամուտ են ցույց տվել համապատասխանաբար, մեկ օդանավի մասով, տարեկան միջինը 1,727.6 հազ. դրամ և 4,733.3 հազ. դրամ:

Տեսչական ստուգումների կատարման հետ կապված գործուղումների ձևակերպումները կատարվել են՝ չպահպանելով գործընթացի սահմանված հաջորդականությունը:

Տեսչական ստուգումների կատարման հետ կապված գործուղումների ձևակերպումները կատարվել են՝ չպահպանելով գործընթացի սահմանված հաջորդականությունը: Օրինակ՝

- ԵԿ 74923 (հուլիս 2018թ.), ԵԿ 2815 (հուլիս 2018թ.), ԵԿ 26005 (հունիս 2018թ.) ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավերի սերտիֆիկացման նպատակով տեսչական ստուգում կատարելու համար ՔԱԳՎ-ի մասնագետը գործուղվել է օդանավի բազավորման օտարերկրյա պետություն՝ առանց ՔԱԳՎ-ի պետի հրամանի:
- Գործուղման հրամանն արձակվել է մինչև օդանավի սեփականատիրոջ կողմից հայտ ներկայացնելը, օրինակ՝ ԵԿ2809 օդանավի տեսչական ստուգում իրականացնելու համար գործուղման թիվ 144-Ա հրամանը տրվել է 18.05.2017թ.-ին, իսկ հայտը ներկայացվել է 10.06.2017թ.-ին, ԵԿ26133՝ թիվ 11-Ա հրամանն արձակվել է 31.01.2017թ.-ին, հայտը ներկայացվել է 27.02.2017թ.-ին, ԵԿ74923՝ թիվ 110-Ա հրամանն արձակվել է 14.04.2017թ.-ին, հայտը ներկայացվել է 27.04.2017թ.-ին, ԵԿ2811՝ թիվ 129-Ա հրամանն արձակվել է 10.05.2017թ.-ին, հայտը ներկայացվել է 16.06.2017թ.-ին, ԵԿ2801՝ թիվ 293-Ա հրամանն արձակվել է 09.11.2017թ.-ին, իսկ հայտը ներկայացվել է 23.11.2017թ.-ին, ԵԿ32008՝ թիվ 165-Ա հրամանն արձակվել է 13.06.2017թ.-ին, հայտը ներկայացվել է 15.06.2017թ.-ին:

- Համապատասխան մասնագետները 2017 թվականի մայիսի 10-ին թիվ 129-Ա (ԵԿ 2811) և 2017 թվականի նոյեմբերի 17-ին թիվ 304-Ա (ԵԿ 74923) հրամանով գործուղվել են Կիրժաչու և Մոսկվա քաղաքներ (Ռուսաստանի Դաշնություն), իսկ օդանավերն ըստ փաթեթում առկա փաստաթղթերի (սեփականատիրոջ կողմից ներկայացված հայտում նշված է բազավորման երկիրը, այլ փաստաթուղթ օդանավի տեղափոխման վերաբերյալ չկա), բազավորված են եղել Ջուբա քաղաքում (Հարավային Սուդան):
- Մասնագետը մեկնել է գործուղման՝ առանց հրամանի, որն արձակվել է գործուղման մեկնելուց հետո (ԵԿ32002 օդանավի տեսչական ստուգումն

իրականացնելու համար 2017 թվականի մայիսի 29-ին արձակվել է թիվ 150-Ա հրամանը, որով մասնագետը գործուղվել է մայիսի 27-ից):

ՀՀ-ում վարվում է օդանավերի պետական ռեգիստր, որում, համաձայն «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջի, պետք է գրանցվեն օդանավերի վերաբերյալ որոշակի տեղեկություններ, այդ թվում՝ օդանավի ձեռք բերման մասին, սակայն ոչ ռեգիստրում, և ոչ էլ՝ ռեգիստրի հավելվածում այդ տեղեկատվությունը առկա չէ: ***Չի կատարվել օդանավերի պետական ռեգիստրի վարման վերաբերյալ «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջը:***

Չի կատարվել օդանավերի պետական ռեգիստրի վարման վերաբերյալ «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջը

Չի կատարվել նաև Կարգի 6-րդ կետի և 6-րդ կետի բ) ենթակետի պահանջն, ըստ որի՝ ՀՀ-ում գրանցված օդանավերն ընդգրկվում են պետական ռեգիստրում, իսկ գործունեության ժամկետային սահմանափակում ունեցողները՝ ռեգիստրի հավելվածում: Այսպես, EK31001, EK31002, EK72425, EK32003 ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավերը, որոնց չի տրվել թռիչքային պիտանիության սերտիֆիկատ և դրանք գտնվել են տեխնիկական սպասարկման և վերանորոգման գործընթացներում, ժամանակավորապես ռեգիստրի հավելվածի փոխարեն գրանցվել և մուտքագրվել են պետական ռեգիստրում:

Չի կատարվել Կարգի 3-րդ կետի պահանջը՝ EK32400, EK26005 և EK2815 ազգային և գրանցման նիշեր ունեցող օդանավերը համապատասխանաբար՝ 11.04.2016թ.-ին, 26.03.2018թ.-ին և 27.07.2018թ.-ին ստացել են օդանավի գրանցման վկայական, որը պետք է մուտքագրվեր ռեգիստրում: Վերոնշյալ օդանավերի գրանցման վերաբերյալ ***տեղեկատվությունը չի ընդգրկվել ռեգիստրում:***

Չի կատարվել Կարգի 29-րդ կետի ե) ենթակետի պահանջը, համաձայն որի՝ օդանավը ռեգիստրից կամ ռեգիստրի հավելվածից հանվում է, եթե օդանավը վերջին 3 տարվա ընացքում չի ունեցել թռիչքային պիտանիության սերտիֆիկատ, տվյալ դեպքում EK86117 (Իլյուշին, Վասոր 1991թ. ԻԼ 86, ուղևորատար), EK20014 (Բոմբարե, Կանադա, CRJ 200, 7282, ուղևորատար) ազգային և գրանցման նիշեր ունեցող օդանավերը համապատասխանաբար՝ 17.04.2004 և 28.09.2009 թվականներին ստացել են անժամկետ օդանավի գրանցման վկայական և վերջին 3 տարվա ընացքում չեն դիմել և չեն ստացել թռիչքային պիտանիության սերտիֆիկատ: Այժմ վերը նշված օդանավերը գտնվում են անօգտագործելի վիճակում ու բազավորված են՝ ԻԼ 86 օդանավը՝ Մոսկվայի Դոմոդեդովո, իսկ CRJ 200 օդանավը՝ Երևանի Զվարթնոց օդակայաններում:

Օդանավերի գրանցման գործողության ժամկետները լրանալուց հետո, որոշ դեպքերում, պետական ռեգիստրում և ռեգիստրի հավելվածում չեն կատարվել գրառումներ օդանավի դուրս գրման, ժամկետի երկարաձգման մասին: EK26008 (օդանավի գրանցման ժամկետը լրացել է 13.10.2015 թվականին), EK32968 (15.09.2016

Օդանավերի գրանցման գործողության ժամկետները լրանալուց հետո, որոշ դեպքերում, պետական ռեգիստրում և ռեգիստրի հավելվածում չեն կատարվել գրառումներ օդանավի դուրս գրման, ժամկետի երկարաձգման մասին

թվականին), EK2809 (20.06.2018 թվականին), EK2815 (27.07.2018 թվականին), EK32805 (08.04.2015 թվականին), EK26310 (06.08.2015 թվականին), EK26710 (06.08.2015 թվականին), EK32803 (08.04.2015 թվականին), EK26804 (06.08.2015 թվականին) ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավերի վերաբերյալ ռեգիստրի հավելվածում կատարվել է գրառում ժամանակավոր գրանցման ժամկետի մասին: Վերոնշյալ օդանավերի գրանցման գործողության ժամկետը լրանալուց հետո գրանցման ժամկետի երկարաձգման համար հայտ չի ներկայացվել: Համաձայն Կարգի 8-րդ, 10-րդ և 29-րդ կետերի պահանջի, ռեգիստրում կատարված ***գրառումը համարվում է անվավեր և օդանավը ենթակա է դուրս գրման***: Բացի այդ, գործողության ժամկետը լրանալու և նոր սերտիֆիկատ ձեռք բերելու դեպքում նախկինում ստացված հին սերտիֆիկատները ենթակա են վերադարձման ՔԱԳՎ: Սակայն EK32703 ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավին (օդանավի գրանցման

Գրանցման սերտիֆիկատի գործողության ժամկետը լրանալուց հետո այն չի վերադարձվել

սերտիֆիկատը տրվել է 01.12.2016 թվականից մինչև 01.12.2017 թվականը) տրված ***գրանցման սերտիֆիկատի գործողության ժամկետը լրանալուց հետո այն չի վերադարձվել:***

Նույն կերպ չեն վերադարձվել նաև EK74036 (օդանավի գրանցման սերտիֆիկատը 13.04.2017-20.07.2017 թվականը), EK26133 (օդանավի գրանցման սերտիֆիկատը 13.04.2017-19.01.2018 թվականը, թռիչքային պիտանիության սերտիֆիկատը՝ 13.04.2017-22.06.17 թվականը) ազգային և գրանցման նիշ ունեցող օդանավերի սերտիֆիկատները: Հարկ է նշել, որ Կարգի 10-րդ կետով կարգավորված չէ սերտիֆիկատի վերադարձման գործընթացը, մասնավորապես, չեն սահմանվել վերադարձի թույլատրելի ժամկետները:

Ռեգիստրում և ռեգիստրի հավելվածում գրանցված յուրաքանչյուր քաղաքացիական օդանավին շնորհվում է ազգային և գրանցման նիշ՝ ըստ Կարգի 22-րդ հոդվածի: Բոինգ 737-500 սերիա 26336, Ան-28 սերիա 1Aj005-01 օդանավերի մասով, մինչև ռեգիստրում գրանցելը և օդանավի գրանցման վկայական տրամադրելը, սեփականատիրոջ կողմից ներկայացված օդանավի գրանցման հայտում արդեն նշվել են նախապես շնորհվող ազգային և գրանցման նիշերը՝ համապատասխանաբար՝ EK73736 և EK2801:

3.2 ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայականի տրամադրում

ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայականի տրման գործընթացը կարգավորվում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) թիվ 6 հավելվածով, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 963-Ն որոշմամբ հաստատված՝ «Օդանավ շահագործողի վկայական տալու» կարգով (այսուհետ՝ Կարգ):

ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայական ստանալու համար՝ համաձայն Կարգի 10-րդ կետի 8-րդ ենթակետի, 11-րդ կետի 2-րդ ենթակետի, ավիաընկերությունը հայտ է ներկայացնում ՔԱԳՎ (պահանջվող այլ փաստաթղթերի հետ միասին)՝ առնվազն մեկ պիտանի օդանավի սեփականատեր կամ վարձակալ (ենթավարձակալ) լինելու վերաբերյալ, կամ կնքել է օդանավի ձեռք բերման, վարձակալության կամ ենթավարձակալության հանձնման վերաբերյալ մտադրությունների հուշագիր:

«Ատլանտիս Արմենիան Էյրլայնզ» ՍՊԸ-ն օդանավ շահագործողի վկայական ստանալու համար ներկայացրել է մտադրությունների հուշագիր (կնքվել է 2018 թվականի փետրվար 15-ին՝ «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ), որի հիման վրա 2018 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 22-ն ընկած ժամանակահատվածի համար «Ատլանտիս Արմենիան Էյրլայնզ» ՍՊԸ-ին տրվել է օդանավ շահագործողի վկայական: Հիմք ընդունելով Կարգի 39-կետի 5-րդ ենթակետի պահանջն, ըստ որի՝ օդանավ շահագործողի վկայական ստանալու օրվանից օդանավ շահագործողը, 30-օրյա ժամկետում, պետք է ներկայացնի օդանավի ձեռք բերման, վարձակալության կամ ենթավարձակալության հանձնման վերաբերյալ մտադրությունների հուշագրի հիման վրա ձեռք բերված կամ վարձակալված, կամ ենթավարձակալված օդանավի մասին համապատասխան պայմանագիր, այլապես՝ օդանավ շահագործողի վկայականի գործողությունը դադարեցվում է: Տվյալ դեպքում «Ատլանտիս Արմենիան Էյրլայնզ» ՍՊ ընկերությունը օդանավ շահագործողի վկայական ստանալու օրվանից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 15-ը (անցել է 53 օր) չի ներկայացրել համապատասխան պայմանագիր, ուստի՝ ավիաընկերությանը տրված օդանավ շահագործողի վկայականի գործողությունը պետք է դադարեցվեր, որը չի կատարվել՝ չպահպանելով Կարգի 39-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը:

Օդանավ շահագործողի վկայականի գործողությունը պետք է դադարեցվեր, որը չի կատարվել՝ չպահպանելով Կարգի 39-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը

Չի կատարվել նաև Կարգի 10-րդ կետի պահանջը, ըստ որի՝ օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար ավիաընկերությունը հայտ է ներկայացնում ՔԱԳՎ՝ օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի ավարտից առնվազն 60 օր առաջ:

Կարգով սահմանված ժամկետը չի պահպանվել և 60 օրվա փոխարեն ժամկետի երկարաձգման հայտը ներկայացվել է 57 օր առաջ

Համադրելով 2017 թվականի «Մարս Ավիա» ավիաընկերության կողմից ներկայացված օդանավ շահագործողի վկայականի ժամկետի երկարաձգման հայտի ժամկետն (Կարգով պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթով) արդեն իսկ երկարաձգված ժամկետի հետ՝ պարզվել է, որ ***կարգով սահմանված ժամկետը չի պահպանվել*** և 60 օրվա փոխարեն ժամկետի երկարաձգման հայտը ներկայացվել է 57 օր առաջ:

Օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի դադարեցման դեպքում՝ օդանավ շահագործողը ՔԱԳՎ-ին է հանձնում օդանավ շահագործողի վկայականի բնօրինակը: Հետ վերադարձված վկայականների ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ-ի կողմից հետ չի վերադարձվել 2016 թվականի փետրվարի 20-ին տրված (գործողության ժամկետը՝ մինչև 2018 թվականի փետրվարի 20-ը) վկայականը՝ ***չկատարելով Կարգի 41-րդ կետի պահանջը***: Ի դեպ, Կարգի 41-րդ կետով լիարժեք կարգավորված չեն վկայականի վերադարձման թույլատրելի ժամկետները՝ նպաստելով սուբյեկտիվ մոտեցման դրսևորմանը:

Օդանավ շահագործողի վկայական ստանալու համար տրվող հայտին կից ներկայացվում է ֆինանսական միջոցների՝ բանկային դեպոզիտների առկայության կամ բանկային երաշխիքի մասին տեղեկանքի բնօրինակը (Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ աշխատակազմ և գրասենյակ պահելու, անձնակազմի անհրաժեշտ ուսուցման հնարավորության հավաստման համար), որի վերաբերյալ ՔԱԳՎ-ի աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժինը ծառայողական գրությամբ ներկայացնում է կարծիք: Կարգով սահմանված չեն այն ժամկետները, որոնց համար պետք է հաշվարկվեն գրասենյակի և անձնակազմի պահպանմանն ուղղված ֆինանսական միջոցները: Կանոնակարգված չեն նաև օդանավ շահագործողի վկայական ստանալու համար նրա կողմից որոշակի պարբերականությամբ ՔԱԳՎ-ին ֆինանսական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցերը, որոնք կարող են առաջացնել որոշակի ռիսկեր՝ ավիաընկերությունների նկատմամբ ՔԱԳՎ-ի աշխատակիցների կողմից կողմնակալ մոտեցումների դրսևորման տեսանկյունից:

3.3. Թռիչքային անձնակազմի անդամներին վկայականների տրամադրում

Թռիչքային անձնակազմի անդամների լիցենզավորումն իրականացվում է ՔԱԳՎ-ի աշխատակազմի թռիչքային գործունեության վարչության կողմից, որի հիմնական գործառույթներն են՝ համապատասխան վկայականների տրամադրումը, դրանց գործողության ժամկետի երկարձգումը, կասեցումը կամ դադարեցումը, օտարերկրյա պետությունների կողմից տրված վկայականների ճանաչումը, թռիչքային անձնակազմի անդամների որակավորման համապատասխանության, նրանց գիտելիքների, արհեստավարժության մակարդակի, թռիչքի ժամանակ և վարժասարքերի վրա կատարվող պրակտիկ աշխատանքի պլանային ստուգումների իրականացումը և այլն:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ հաշվետու ժամանակաշրջանում թռիչքային գործունեության վարչության կողմից, ըստ առանձին գործառույթների, կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում՝

Աղյուսակ 1

Գործառույթի բովանդակությունը	2017 թ.	2018 թ. հուլիսի 1-ի դրությամբ
Թռիչքային անձնակազմի անդամների վկայականներում ինքնաթիռի տիպի և/կամ սարքավորումներով թռիչքներ կատարելու որակավորման նիշերի գործունեության ժամկետի երկարաձգում	100	38
Թռիչքային անձնակազմի անդամների վկայականներում ինքնուրույն աշխատանքների թույլտվություն	46	59
Օտարերկրյա պետությունների կողմից տրված թռիչքային անձնակազմի անդամների վկայականների ճանաչում	150	91
Թռիչքային անձնակազմի անդամների վկայականներում անգլերեն լեզվի իմացության որակավորման նիշի երկարաձգում	27	10
Թռիչքային անձնակազմի անդամներին նոր տիպի վկայականների տրամադրում	32	35
Թռիչքային անձնակազմի անդամներին վկայականի կրկնօրինակի տրամադրում	--	--

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ թռիչքային անձնակազմի անդամներին համապատասխան վկայականների տրամադրման, դրանց գործողության ժամկետի

երկարձգման, օտարերկրյա ավիացիոն իշխանությունների կողմից թռիչքային անձնակազմի անդամներին տրված վկայականների ճանաչման գործառույթների իրականացման համար ***ՀՀ օրենսդրությամբ վճարումներ չեն նախատեսվել*** (բացառությամբ՝ վկայականի համար նախատեսված 12.0 հազ. դրամի գանձումը), մինչդեռ միջազգային ավիացիայի փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նման մոտեցումն օտարերկրյա պետություններում չի կիրառվում, իսկ ***ՀՀ-ում դրա կիրառումը տնտեսական նպատակահարմարության և շահավետության տեսանկյունից չունի որևէ խելամիտ և բավարար հիմնավորվածություն*** (հավելված 3-ում ներկայացված է որոշ երկրներում գանձվող վճարների վերաբերյալ տեղեկատվությունը):

Վարչության կողմից կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներն իրականացվել են ավիաընկերությունների ֆինանսավորման հաշվին, ինչը վարչության աշխատակիցների ֆինանսական կախվածության պայմաններում ստեղծում է որոշակի կաշկանդվածություն՝ կապված ստուգումների որակի և օբյեկտիվության ապահովման հետ

2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՔԱԳՎ-ի կողմից կատարվել են համապատասխանաբար՝ 9 և 6, կամ ընդամենը 15 տեսչական ստուգումներ և ուսումնասիրություններ և 11 պլանային ստուգումներ: Այդ գործառույթների կատարումն ապահովելու նպատակով՝ առանց համապատասխան իրավական հիմքերի, ՔԱԳՎ-ի աշխատակիցները գործուղվել են տարբեր օտարերկրյա պետություններ՝ համապատասխան հրամանների հիման վրա, որոնց համար հիմք են հանդիսացել ավիաընկերությունների կողմից ներկայացված գրությունները: Ըստ էության, վարչության կողմից կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներն իրականացվել են ավիաընկերությունների ֆինանսավորման հաշվին, ինչը վարչության աշխատակիցների ֆինանսական կախվածության պայմաններում ստեղծում է որոշակի կաշկանդ-վածություն՝ կապված ստուգումների որակի և օբյեկտիվության ապահովման հետ:

Նույն պայմաններով է կատարվում նաև օդանավ շահագործողին վկայական տալու գործընթացը, սակայն այս դեպքում ավիաընկերությունների միջոցների հաշվին ՀՀ-ից դուրս ուսումնասիրությունների իրականացումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 06.08.2015 թվականի «Օդանավ շահագործողների վկայական տալու կարգը հաստատելու մասին» թիվ 963-Ն որոշման 23-րդ կետի դրույթներով: Այդուհանդերձ, վերջինիս առկայությունը չի ենթադրում ՔԱԳՎ-ի կողմից աշխատակիցների գործուղման այնպիսի մեխանիզմի կիրառում, երբ ավիաընկերությունները՝ ՔԱԳՎ-ի փոխարեն, որոշում են գործուղման կազմակերպչական և ֆինանսավորման հարցերը:

Փաստորեն, ՔԱԳՎ-ի կողմից պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել ֆինանասական հոսքերի կառավարմանը, ոլորտի զարգացմանը և կանոնադրական

ՔԱԳՎ-ի կողմից պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել ֆինանասական հոսքերի կառավարման, ոլորտի զարգացմանը և կանոնադրական նպատակների լիարժեք իրականացմանն ուղղված եկամուտների ավելացման ուղղությամբ:

նպատակների լիարժեք իրականացմանն ուղղված եկամուտների ավելացման ուղղությամբ: Մասնավորապես, չեն օգտագործվել հնարավորությունները վկայականների տրման և այլ գործողությունների կատարման ծառայությունների մատուցման մասով լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման համար, ինչը մասամբ կլուծեր նաև ստուգումների իրականացման ընթացքում ավիաընկերություններից ֆինանսական անկախության խնդիրը: Բացի այդ, ***թռիչքային անվտանգության վերահսկման, ստուգումների օրինականության և արդյունավետության բարձրացման նպատակով չեն մշակվել նաև գործուղման հետ կապված ծախսերն ավիաընկերությունների հետ կնքված պայմանագրերով և վերջիններիս կողմից մշակված ծախսերի նախահաշիվներին համապատասխան իրականացնելու մեխանիզմները:***

Ավիաընկերությունների միջոցների հաշվին ստուգումների իրականացումը հանգեցրել է նաև ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2335-Ն որոշման 3-րդ կետի գ) ենթակետի պահանջների չպահպանմանը: Այսպես՝ գործուղման մեկնած աշխատակիցների կողմից, բացի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններից, գործուղման մեկնելու կապակցությամբ այլ փաստաթղթեր չեն ներկայացվել, որոնք կհավաստեին գործուղման մեկնելու փաստը, մինչդեռ աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերում գործուղված անձանց վերաբերյալ կատարված նշումներին համապատասխան նրանք վարձատրվել են:

4. Հատուկ պաշտպանվածություն պահանջող՝ պետական նշանակության փաստաթղթերի շրջանառության վերաբերյալ

Համաձայն «Ապրանքի պահեստային հաշվառման քարտի» տվյալների՝ 2009 թվականի ապրիլի 23-ին ՔԱԳՎ-ն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից («Ամերիքն Բենք Նոթ քոմփանի» կազմակերպության կողմից պատրաստված) ձեռք է բերել 20, նույն թվականի մայիսի 20-ին՝ 500 և 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 14 պայմանագրի հիման վրա՝ ևս 2000 հատ հատուկ պաշտպանվածություն ունեցող պետական նշանակության բլանկ (այսուհետ՝ բլանկ):

ՔԱԳՎ-ի կողմից մշակված և ընդունված չէ բլանկների շրջանառությունը կարգավորող որևէ իրավական ակտ կամ հրաման, բացարձակ չի իրականացվում նաև դրանց նկատմամբ վերահսկողություն, բլանկների հաշվառման գործառույթներն ամրակցված չեն և ոչ մի ստորաբաժանմանը

Հատուկ պաշտպանվածություն ունեցող պետական նշանակության բլանկերի շրջանառության և դրանց շարժի ձևակերպման օրինականության ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՔԱԳՎ-ի կողմից մշակված և ընդունված չէ բլանկների շրջանառությունը կարգավորող որևէ իրավական ակտ կամ հրաման, բացարձակ չի իրականացվում նաև դրանց նկատմամբ վերահսկողություն, բլանկների հաշվառման գործառույթներն ամրակցված չեն և ոչ մի ստորաբաժանման:

Այսպես, 2009 թվականին և մինչև 2010 թվականի փետրվարի 2-ն ընկած ժամանակահատվածում բլանկների հաշվառումը և բաշխումը կատարվել է ՔԱԳՎ-ի հաշվապահական հաշվառման բաժնի կողմից, որից հետո, առանց համապատասխան հրամանի կամ պաշտոնի անձնագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու, բանավոր հանձնարարությամբ, բլանկների հաշվառման և բաշխման գործընթացը փոխանցվել է ՔԱԳՎ-ի առաջին բաժնին: Գործնականում առաջին բաժնում հաշվառումը կատարվում է հանձնման-ընդունման ակտով՝ առանց պահանջագրի, իսկ մատյանում գրանցվում են միայն բլանկ ստացող վարչությունների աշխատակցի անձնական տվյալները: Ինչ վերաբերում է ստացված բլանկների հետագա շրջանառությանն, ապա համապատասխան վարչություններում հաշվառում չի կատարվում, ինչը մեծամասամբ պայմանվորված է այն հանգամանքով, որ այդ արժեթղթերը չունեն հատուկ հաշվառման բլանկներին բնորոշ հատկանիշեր:

Բլանկների շրջանառության (դրանց ստացման, բաշխման և խոտանված, օգտագործված ու ժամկետանց բլանկների վերադարձման, ինչպես նաև գրանցման) ուսումնասիրությամբ պարզվել է, որ ստացված, բաշխված և վերադարձված բլանկների թվաքանակների միջև գոյացել են ***մեծաքանակ տարբերություններ:*** Մասնավորապես, 2009 թվականից մինչև 2018 թվականի օգոստոսի 7-ն ընկած ժամանակահատվածում

2520 բլանկների բաշխվածությունն ու մնացորդներն, ըստ վարչությունների, ունեցել են հետևյալ պատկերը՝

- Օդային փոխադրումների կարգավորման վարչությունը ստացել է 358 հատ բլանկ, որից օգտագործված 134 հատը վերադարձվել է առաջին բաժին, տարբերությունը կազմել է 224 հատ:
- Թռիչքային գործունեության վարչությունը ստացել է 7 հատ:
- Թռիչքային պիտանիության վարչությունը ստացել է 1518 հատ, որից օգտագործված 800-ը վերադարձվել է, մնացորդը կազմել է 718 հատ:
- Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչությունը ստացել է 14 հատ, օգտագործված 5-ը վերադարձրել է, մնացորդը կազմել է 9 հատ:

Վարչություններում ընթացիկ պահի դրությամբ առկա մնացորդների վերլուծությունը ցույց է տվել, որ՝

166 բլանկների վերաբերյալ տեղեկություններ չկան

Օդային փոխադրումների կարգավորման վարչությունում 224 հատ բլանկից 50-ը (գործողության ժամկետը ավարտվել է և վերադարձվել է ավիաընկերությունների կողմից) գտնվում են վարչությունում, 8-ը գործող են և գտնվում են ավիաընկերությունների մոտ, իսկ 166-ի վերաբերյալ տեղեկություններ չկան:

Թռիչքային գործունեության վարչությունում 7 բլանկից 3-ը, որպես ժամկետանց, վերադարձվել է ավիաընկերությունների կողմից, 4-ը գործող են և գտնվում են ավիաընկերությունների մոտ:

9 բլանկներ կորել են, իսկ 203 հատը տեղում բացակայում են

Թռիչքային պիտանության վարչությունում 718 հատ բլանկից 24-ը մաքուր վիճակում են (չօգտագործված), օգտագործված 397-ը (գործողության ժամկետն ավարտվել է և վերադարձվել է ավիաընկերությունների կողմից) գտնվում են վարչությունում, 85-ը գործող են և գտնվում են ավիաընկերությունների մոտ, 9-ը, համաձայն ներկայացված գրությունների, կորել են, իսկ 203 հատ բլանկներ տեղում բացակայում են:

Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևուկության կազմակերպման վարչությունում 9 հատ բլանկից մաքուր վիճակով առկա է 2-ը, իսկ 7-ը գործող են և գտնվում են ավիաընկերությունների մոտ:

Այսպիսով՝ բլանկների շարժի հաշվառման և ձևակերպման գործընթացի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընդամենը 369 արժեթուղթ բացակայում է: Ստացված բլանկների շրջանառության նկատմամբ պատշաճ հսկողություն չի իրականացվել ՔԱԳՎ-ի ղեկավարության կողմից, որն ուշադրությունից դուրս է թողել այդ հարցերը՝ պատշաճ կերպով չկանոնակարգելով պետական նշանակության բլանկների շրջանառությանը ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված գործառույթները, առկա են չվերադարձվող բլանկներով գործունեություն իրականացնելու ռիսկեր:

5. Գնումների գործընթացի վերաբերյալ

ՔԱԳՎ-ի կողմից 2017 թվականին կնքված 48 պայմանագրերով իրականացվել է 65,137.3 հազ. դրամ գումարով գնում, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կնքվել է 39 գնման պայմանագիր՝ 464,220.2 հազ. դրամ գումարով:

Ընտրանքային կարգով գնումների գործընթացի ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

Գնումների պլանում միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ բացակայում են շուկայական գների փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները

Գնումների պլանում միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ բացակայում են շուկայական գների փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները: Չնայած դրան՝ փաստացի գնման գները և գնումների պլանում դրանց համար նախատեսած գները էականորեն մոտ են:

Օրինակ՝ «Կոնսէլ» ՍՊԸ-ն վերը նշված ժամանակահատվածում 3 առանձին գնումներով, 3 առանձին պայմանագրերի շրջանակներում մատակարարել է ձեռք բերված օդորակիչների ամբողջ ծավալը՝ 50 «Միտցուբիշի էլեկտրիկ» մակնիշի օդորակիչներ՝ 22,080.4 հազ. դրամ ընդհանուր գումարով: Դրանց համար գնումների պլանով նախատեսվել է 24,860.0 հազ. դրամ: Գնումներն իրականացվել են գնանշման եղանակով: Բոլոր երեք գնումներում միակ մասնակիցը եղել է «Կոնսէլ» ՍՊԸ, որն էլ, առանց մրցակցի, հաղթող է ճանաչվել, և նրա հետ կնքվել են համապատասխանաբար՝ թիվ ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-22/17 ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-09/18, ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-19/18 պայմանագրերը:

Օդորակիչների գնումների ժամանակ տեխնիկական բնութագրերում հղում է կատարվել ֆիրմային անվանմանը և մոդելին (օրինակ՝ MITSUBISHI ELECTRIC MSZ-

HJ50VA/MUZ-HJ50VA կամ համարժեքը), հետևաբար՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրի չափորոշիչներն իրենց նվազագույն և առավելագույն սահմանաչափերով համապատասխանում են ընտրված մոդելի տեխնիկական բնութագրիչներին:

Նկարագրված գնման առարկայի տեխնիկական բնութագրում տեղ գտած բազմաթիվ չափորոշիչների առկայությունը բազմակողմանիորեն բնութագրում է գնման բովանդակությունը

Չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը, որի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Նկարագրված գնման առարկայի տեխնիկական բնութագրում տեղ գտած բազմաթիվ չափորոշիչների առկայությունը բազմակողմանիորեն բնութագրում է գնման բովանդակությունը, ինչը նշանակում է, որ որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղման անհրաժեշտություն չի եղել:

2017 թվականի գնումների պլանում «ինքնությունը հաստատող քարտեր տպագրող մեքենա» հոդվածով նախատեսվել է 1,500.0 հազ. դրամ կողմնորոշիչ արժեքով գնում: Նույն թվականի հուլիսի 19-ին ՔԱԳՎ-ի և հաղթող ճանաչված «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի միջև կնքվել է 768.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով թիվ ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-19/17 պայմանագիրը՝ պահանջված «ինքնությունը հաստատող քարտեր տպագրող մեքենայի» գնման նպատակով:

Գնման ընթացակարգի ժամանակ տեխնիկական բնութագրում հղում է կատարվել այն մոդելին, որը փաստացի գնվել է

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ գնման ընթացակարգի ժամանակ տեխնիկական բնութագրում հղում է կատարվել այն մոդելին, որը փաստացի գնվել է (DATACARD SD 360), ավելին՝ բնութագրիչների մեջ առկա է նաև հղում արտաքին տեսքին, որի նկարագրությունը տրված է DATACARD SD 360-ի նկարի տեսքով: Բացի այդ, տեխնիկական բնութագրում գնման առարկայի և փաստացի գնված ապրանքի ընտրված բնութագրող հատկանիշներն ամբողջությամբ նույնն են: Արդյունքում, չեն կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, ըստ որի՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Ինքնությունը հաստատող քարտեր տպագրող մեքենան փաստացի չի շահագործվել և չէր կարող շահագործվել՝ անհրաժեշտ ծրագրային ապահովման բացակայության պատճառով

Ընդ որում, գնման առարկայի տեխնիկական բնութագրում պատվիրատուի կողմից պահանջվել է նաև «ծրագրային ապահովում»՝ առանց հստակ և բազմակողմանիորեն նկարագրելու դրա նշանակությունը, մինչդեռ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ինքնությունը հաստատող քարտեր տպագրող մեքենան փաստացի չի շահագործվել և չէր կարող շահագործվել՝ անհրաժեշտ ծրագրային ապահովման բացակայության պատճառով:

2018 թվականի գնումների պլանում տեղ է գտել նաև «օպերացիոն համակարգի բարելավման համակարգչային ծրագրային փաթեթներ» հոդվածով գնումը՝ 4,400.0 հազ. դրամ կողմնորոշիչ գնով: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ գնումը վերաբերում է այն ծրագրին, որով հնարավոր է շահագործել նախորդ տարում ձեռք բերված՝ ինքնությունը հաստատող քարտեր տպագրող DATACARD SD 360 տեսակի մեքենան: Վերը նկարագրված ծրագրի մատակարարումը գնանշման ընթացակարգի արդյունքում վերապահվել է «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին՝ 2018 թվականի օգոստոսի 27-ին կնքված թիվ ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-/18 պայմանագրով: Հատկանշական է, որ գնման մասնակցության ժամանակ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն իր առաջարկում գնման առարկան ներկայացրել է պատվիրատուի կողմից պահանջված համանման տեխնիկական բնութագրով՝ առանց ծրագրի նույնականացման: Ծրագիրը փաստացի մատակարարվել է 2018 թվականի հոկտեմբերի 4-ին՝ 3,380.0 հազ. դրամ արժեքով: Փաստացի էլեկտրոնային կրիչով հանձնման ժամանակ միայն պարզ է դարձել ծրագրի անվանումը՝ CARDPRESSO 1.6.0 XM տարբերակը: Ինտերնետային կայքերի տեղեկատվության համաձայն՝ ստուգման պահի դրությամբ գնված ծրագրի և համարժեք ծրագրերի արժեքը դրամային արտահայտությամբ կազմում է 200.0-ից մինչև 600.0 հազ. դրամ[1]:

Վերը նկարագրված փաստերը ցույց են տվել, որ ինքնությունը հաստատող քարտեր տպագրող մեքենան ծրագրային ապահովման հետ միասին հնարավոր էր ձեռք բերել ի սկզբանե գնումների պլանավորմամբ նախատեսված գնի՝ շուրջ 1,500.0 հազ. դրամի շրջանակներում:

ՔԱԳՎ-ի վարչական շենքի ավտոմատային հեռախոսային կայանների համակարգերի ձեռք բերման «ՔԱԳՎ-ԳՀԱՊԾԲ-14/17» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում մրցույթին մասնակցության համար հայտ են ներկայացրել 3 կազմակերպություններ: 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերի բացման

[1] https://www.idsecurityonline.com/cardpresso-software, https://www.idcardgroup.com/cardpresso, https://store.softline.ru/cardpresso/, https://allsoft.ru/software/vendors/cardpresso/card-presso/#ver_7984628

արդյունքում հրապարակվել է գնման ենթակա ավտոմատային հեռախոսային կայանների համակարգերի նախահաշվային գինը՝ 16,000.0 հազ. դրամի չափով:

Հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկներն՝ առանց ԱԱՀ-ի

«Նեթվորք Բիլդերս» ՍՊԸ– 13,220.0 հազ. դրամ,

«Էյչ Գրուպ» ՍՊԸ– 15,000.0 հազ. դրամ,

«Իայսիտելեկոմ» ՍՊԸ– 11,000.0 հազ. դրամ:

«Նեթվորք Բիլդերս» ՍՊԸ-ի և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը մերժվել են՝ փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության պատճառով:

Գնումների պլանում ավտոմատային հեռախոսային կայանների համակարգեր ձեռք բերելու համար նախատեսվել է 16,000.0 հազ. դրամ այն դեպքում, երբ գնման առարկայի ձեռք բերման մրցույթի հիմքում բացակայում է մասնագիտական շուկայական գների հաշվարկը

Գնումների գործընթացի օրինականության ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2017 թվականի գնումների պլանում ավտոմատային հեռախոսային կայանների համակարգեր ձեռք բերելու համար նախատեսվել է 16,000.0 հազ. դրամ այն դեպքում, երբ գնման առարկայի ձեռք բերման մրցույթի հիմքում բացակայում է մասնագիտական շուկայական գների հաշվարկը:

Թիվ 1 և 2 պայմանագրերի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված ընդունման-հանձնման արձանագրություններում նկարագրված ապրանքների շուկայական գների ուսումնասիրության նպատակով, հաշվեքննություն իրականացնող հանձնաժողովի կողմից օգտագործվել են ինտերնետային կայքերում զետեղված տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող վաճառքի առավելագույն գներն՝ արտահայտված ԱՄՆ դոլարին և ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամի փախարժեքով, ինչը կազմել է շուրջ 6,091.9 հազ. դրամ, իսկ ԱԱՀ-ով՝ 7,310.2 հազ. դրամ (առանց մատակարարի շահույթի և այլ ծախսերի): 14.06.2017 թվականին տեղի է ունեցել «ՔԱԳՎ-ԳՀԾՁԲ-03/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գրքերի կազմման և կարման ծառայությունների ձեռք բերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի նիստ, որում հաստատվել է ծառայությունների գնման հրավերի տեքստը:

21.06.2017թ.-ին տեղի ունեցած գնահատող հանձնաժողովի նիստում հրապարակվել է 400 հատ գրքի կազմման և կարման ծառայությունների արժեքը՝ 650.0 հազ. դրամ գումարով՝ մեկ հատ գրքի գինը սահմանելով 1625 դրամի չափով այն դեպքում, երբ վերոնշյալ ծառայությունների գումարն, ըստ գնման հայտի հավելված 1-ի, կազմել է 640.0 հազ. դրամ:

Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Ի. Մ.» Ա/Ձ-ն՝ 299.6 հազ. դրամ (մեկ հատի գինը՝ 750 դրամ) գնառաջարկով, որն էլ հաղթող է ճանաչվել, և նրա հետ կնքվել է ծառայությունների գնման համապատասխան պայմանագիր:

Պայմանագրային պարտավորությունները թերի են կատարվել, մինչդեռ ընդունող հանձնաժողովի կողմից մատուցված ծառայություններն ընդունվել են և վճարումը կատարվել է ամբողջությամբ

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Ի. Մ.» Ա/Ձ-ն թերի է կատարել իր պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝ չեն կատարվել պայմանագրին կից հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրի 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 13-րդ կետերի պահանջները, մինչդեռ ընդունող հանձնաժողովի կողմից մատուցված ծառայություններն ընդունվել են և վճարումը կատարվել է ամբողջությամբ:

6. Շինարարական աշխատանքների վերաբերյալ

Նախահաշվային ցուցանիշների հաշվարկում թույլ է տրվել ակնհայտ թերություն, որը չի ճշտվել

ՔԱԳՎ-ի վարչական շենքի աշխատասենյակների և տանիքի վերանորոգման աշխատանքների վերաբերյալ նախահաշիվը կազմվել է «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ-ի, իսկ նախահաշվի փորձաքննությունը՝ «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից: Կազմված նախահաշվի բացատրագրում նշվել է, որ հաշվարկի հիմքում ընկած նյութերի արժեքները վերցվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից 2017 թվականի թիվ 5 տեղեկագրով հրատարակված գներից և շուկայական արժեքներից: Սակայն նախահաշվային ցուցանիշների հաշվարկում թույլ է տրվել ակնհայտ թերություն, որը չի ճշտվել նախահաշվի փորձաքննությունն իրականացնող «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից:

Նախահաշվում «վարչական շենքի աշխատասենյակների շինվերանորոգման աշխատանքներ» մասի 7-րդ կետով նախատեսվել է 30.5 ք.մ մակերեսով միջսենյակային փայտյա դռների տեղադրում՝ մեկ ք.մ փայտյա դռների գինը սահմանելով 64.08 հազ. դրամի չափով այն դեպքում, երբ ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակված վերոնշյալ տեղեկագրի համաձայն՝ 900 x 2050 մմ չափերի մեկ փայտյա դռան գինը կազմել է 69.444 հազ. դրամ, կամ մեկ ք.մ-ի համար այն կազմել է 37.64 հազ. դրամ (69.444/2.05 X 0.9):

Նախահաշվային արժեքը բարձր է 1,474.75 հազ. դրամով

Ճշտված նախահաշվով վերանորոգման աշխատանքների նախահաշվային գումարը նախատեսվել է 14,167.64 հազ. դրամ, մինչդեռ վերը բերված

հաշվարկի պարագայում դրանց նախահաշվային իրական արժեքը կկազմեր 12,692.9 հազ. դրամ, կամ նախահաշվային արժեքը բարձր է 1,474.75 հազ. դրամով:

Հարկ է նշել, որ 2017 թվականի գնումների պլանում ծախսը նախատեսվել է 14,000.0 հազ. դրամի չափով:

Չեն ուսումնասիրվել կատարվելիք աշխատանքի իրական ծավալները և քանակը

05.12.2017թ.-ին ՔԱԳՎ-ի աշխատակազմի ղեկավարի թիվ 153-Ա հրամանով ստեղծվել է շին. վերանորոգման աշխատանքների ընդունման ոչ մասնագիտական հանձնաժողով, որոնց կողմից ստորագրվել և հաստատվել են շինարարական աշխատանքների կատարողական ակտերը: Չեն ուսումնասիրվել կատարվելիք աշխատանքի իրական ծավալները և քանակը:

Բացակայում է քանդման ապամոնտաժման համար նախատեսված վերադարձվող նյութերի համար կազմվող հանձնաժողովի ակտը:

7. Գույքի և սարքավորումների վարձակալության վերաբերյալ

2017 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ «գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով, համաձայն ներկայացված հաշվետվությունների, փաստացի ծախսը կազմել է 1,116.0 հազ. դրամ, այդ թվում՝ 216.0 հազ. դրամը՝ շենքի վարձակալության, և 900.0 հազ. դրամը՝ մեքենայի վարձակալության վճարի մասով:

23.02.2016թ.-ին «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և ՔԱԳՎ-ի միջև կնքվել է թիվ 7.1 պայմանագիրը, որի 1.1 կետով սահմանվել է, որ վերջինիս հանձնարարությամբ ՓԲԸ-ն Skoda Superb մակնիշի սև մետալիկ կամ Skoda Superb մակնիշի սև գույնի տրանսպորտային որևէ միջոցով մատուցի ծառայություններ՝ կապված պաշտոնական պատվիրակությունների դիմավորման և ճանապարհման, հատուկ չվերթների, ստուգայցերի սպասարկումների և այլ նպատակով օգտագործման հետ: Վերոնշյալ ծառայությունների պայմանագրային արժեքը սահմանվել է տարեկան 900.0 հազ. դրամ:

2018 թվականին, առանց գումար վճարելու և պայմանագրի գործողության ժամկետը դադարեցնելու, նախկինում վարձակալված մեքենաներից մեկը շարունակում է շահագործվել

Բացի այդ, պայմանագրով նախատեսվել է, որ ՓԲԸ-ն պարտավոր է կատարել ամսական 1500 կիլոմետր վազքի մասով տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը, որն իր մեջ է ներառում «Պրեմիում» վառելիքի տրամադրում, ինչպես նաև՝ ընթացիկ վերանորոգում: 2018 թվականին, առանց գումար վճարելու և պայմանագրի գործողության ժամկետը դադարեց-

նելու, նախկինում վարձակալված մեքենաներից մեկը շարունակում է շահագործվել:

8. Ներքին աուդիտի բաժնի գործունեության վերաբերյալ

Ներքին աուդիտի բաժնի կողմից՝ չնայած աուդիտի առաջադրանքների փոփոխությանը և պլանավորված ուսումնասիրությունների քանակի նվազեցմանը, նախատեսված ուսումնասիրությունները թերի են իրականացվել

Ըստ ՔԱԳՎ-ի կառուցվածքի՝ ներքին աուդիտի բաժնի հաստիքացուցակում ընդգրկվել է երկու՝ բաժնի պետի և գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոն: 2017 թվականին ներքին աուդիտի բաժինն ունեցել է բաժնի պետ և ներքին աուդիտի մեկ փորձագետ, իսկ 2018 թվականին՝ միայն բաժնի պետ:

ՔԱԳՎ-ի պետի 15.02.2017թ.-ին՝ սահմանված ժամկետի ուշացումով, վավերացվել է ներքին աուդիտի բաժնի 2017 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ծրագիրը, որով նախատեսվել է 7 աուդիտորական առաջադրանքի իրականացում, որից 2-ն՝ 1-ին, և 5-ը՝ 2-րդ կիսամյակում:

Հետագայում՝ 21.11.2017թ.-ին, ՔԱԳՎ-ի պետի կողմից ներքին աուդիտի բաժնի 2017 թվականի տարեկան ծրագրում կատարվել է փոփոխություն՝ 7-ի փոխարեն նախատեսվել է իրականացնել 6 աուդիտորական ուսումնասիրություն, որից 2-ը՝ 1-ին, և 4-ը՝ 2-րդ կիսամյակում:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 1-ին կիսամյակում իրականացված 2 ուսումնասիրության արդյունքում բաժնի պետի կողմից ներկայացվել են վերջնական հաշվետվություններ, իսկ 2-րդ կիսամյակում նախատեսված 4-ից ուսումնասիրությամբ ընդգրկվել և վերջնական հաշվետվություն ներկայացվել է միայն մեկի մասով:

Համաձայն ՔԱԳՎ-ի պետի 29.12.2017թ.-ին հաստատված ներքին աուդիտի բաժնի 2018 թվականի տարեկան ծրագրի՝ ներքին աուդիտի բաժնի պետի կողմից նախատեսվել է իրականացնել ընդամենը 10՝ յուրաքանչյուր կիսամյակում 5-ական, աուդիտորական ուսումնասիրություն:

Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ 1-ին կիսամյակում իրականացվել և վերջնական հաշվետվություն ներկայացվել է ընդամենը 2 ուսումնասիրության վերաբերյալ, ընդ որում՝ առանց հաստատված ծրագրում համապատասխան փոփոխություն կատարելու, ուսումնասիրությունն իրականացվել է նորանշանակ բաժնի պետի կողմից:

Հետագայում՝ 03.08.2018 թվականին ՔԱԿ-ի նախագահի կողմից վավերացված՝ ներքին աուդիտի բաժնի 2018 թվականի տարեկան ծրագրի փոփոխությամբ

նախատեսվել է իրականացնել 6 աուդիտորական ուսումնասիրություն, որից 2-ը՝ 1-ին, և 4-ը՝ 2-րդ կիսամյակում:

01.11.2018 թվականի դրությամբ 2-րդ կիսամյակի համար նախատեսված 4 ուսումնասիրությունից դեռևս ոչ մեկը չի ավարտվել և հաշվետվություն չի ներկայացվել:

Այսպիսով՝ հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի բաժնի կողմից՝ չնայած աուդիտի առաջադրանքների փոփոխությանը և պլանավորված ուսումնասիրությունների քանակի նվազեցմանը, նախատեսված ուսումնասիրությունները թերի են իրականացվել:

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընկերության խորհրդի նիստերի կազմակերպման և խորհրդի անդամների վարձատրության վերաբերյալ

Կանոնադրության համաձայն, Ընկերության խորհրդի նիստերը պետք է գումարվեին առնվազն երեք ամիսը մեկ, ինչը չի ապահովվել

Կանոնադրության 8.3.9. կետի պահանջն՝ Ընկերության խորհրդի նիստերը պետք է գումարվեին առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչը չի ապահովվել: 2017 թվականի ընթացքում գումարվել է խորհրդի երկու նիստ՝ 30.05.2017 թվականին և 25.12.2017 թվականին, որի վերաբերյալ կազմվել են համապատասխանաբար՝ թիվ 1/17 և 2/17 արձանագրությունները: 2018 թվականին ստուգման պահի դրությամբ խորհրդի նիստ դեռևս չի անցկացվել:

Համաձայն կանոնադրության 8.3.2 կետի՝ Ընկերության խորհուրդը կազմված է 7 անդամից, սակայն գործող խորհուրդը բաղկացած է 6 անդամից:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարգևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևավճարի և (կամ) փոխհատուցման չափն ու վճարման կարգը սահմանվում են ժողովի որոշմամբ:

10.12.2012 թվականի Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրության համաձայն՝ որոշվել և խորհրդի ոչ գործադիր և անկախ անդամների համար սահմանվել է 119.8 հազ. դրամի չափով աշխատանքի վարձատրություն:

Խորհրդի անդամների համար պետք է սահմանվեր պարգևավճար, սակայն սահմանվել է աշխատանքի վարձատրություն ամսական 119.8 հազ. դրամ գումարով

Հարկ է նշել, որ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար պետք է սահմանվեր **պարգևավճար**, սակայն ըստ 10.12.2012 թվականի Ընկերության խորհրդի ժողովով սահմանվել է **աշխատանքի վարձատրություն** ամսական 119.8 հազ. դրամ գումարով:

Եվ չնայած այն հանգամանքին, որ չեն կատարվել խորհրդի նիստերի գումարման պարբերականության վերաբերյալ կանոնադրական պահանջները, այդ ժամանակաշրջանի համար խորհրդի անդամներին հաշվարկվել և վճարվել է ոչ միայն պարգևավճար, այլև լրավճար և պարգևատրման գումար:

2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 6 խորհրդի անդամներին վճարվել է համապատասխանաբար՝ 16,168.3 հազ. դրամի (8,625.6 հազ. դրամ պարգևավճար, 431.3 հազ. դրամ լրավճար, 7,111.4 հազ. դրամ պարգևատրում) և 7,501.9 հազ. դրամի (6,024.2 հազ. դրամ պարգևավճար, 323.5 հազ. դրամ լրավճար, 1,148.2 հազ. դրամ պարգևատրում), կամ ընդամենը 23.664,2 հազ. դրամի չափով գումարներ:

2. Աշխատավարձի հաշվարկման և վճարման վերաբերյալ

Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարումը կրել է ձևական բնույթ, քանի որ չի արտացոլել աշխատակցի աշխատած ժամերի իրական պատկերը

Աշխատավարձի հաշվարկման և վճարման ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերությունում համատեղության կարգով աշխատել են ՔԱԳՎ-ի հինգ աշխատակիցներ, որոնցից մեկը ԱևԳԿՏ տրանսպորտի բաժնում, երկուականը՝ ԱևԳԿՏ կադրերի կառավարման և ընդհանուր բաժնում: Վերոնշյալ աշխատակիցներին վճարվել է 2017 թվականին 15,243.3 հազ. դրամ (8,081.7 հազ. դրամ աշխատավարձ, 479.8 հազ. դրամ արձակուրդային, 6,682.5 հազ. դրամ պարգևատրում) և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 9,936.5 հազ. դրամ (5,608.1 հազ. դրամ աշխատավարձ, 2,345.4 հազ. դրամ արձակուրդային, 1,983.0 հազ. դրամ պարգևատրում), կամ ընդամենը վճարվել է 25,179.8 հազ. դրամ:

Ընկերության և ՔԱԳՎ-ի կողմից ներկայացված 2017-2018 թվականների աշխատակիցների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի համեմատական վերլուծությունից պարզվել է հետևյալը՝

Ընկերության աշխատակիցներից՝

- 2017 թվականի մարտի 19-ից մինչև 25-ը՝ գտնվել է գործուղման մեջ Ֆրանսիայի Թուլուզ քաղաքում, 28-29-ին՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում, մայիսի 15-ից մինչև 18-ը՝ ՌԴ Մոսկվա քաղաքում, մայիսի 23-ին՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, հունիսի 14-ից մինչև 18-ը՝ ներառյալ՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում, հունիսի 30-ին՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում: Միաժամանակ, ապրիլի 25-ից մինչև 28-ը և մայիսի 2-ից մինչև 5-ը՝ ներառյալ, գտնվել է վերապատրաստման մեջ, սակայն այդ օրերի համար Ընկերության տեղեկագրի փաստացի աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ տողում այդ օրերի համար կատարվել է գրառում 4-ժամյա հաճախելիության վերաբերյալ:
- 2017 թվականի հոկտեմբերի 30-31-ին, սեպտեմբերի 1-ից մինչև 11-ը՝ ներառյալ, գտնվել է գործուղման մեջ, սակայն Ընկերության տեղեկագրի փաստացի աշխատած

ժամանակահատվածի վերաբերյալ տողում այդ օրերի համար կատարվել է գրառում 4-ժամյա հաճախելիության վերաբերյալ:

Փաստորեն, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարումը կրել է ձևական բնույթ, քանի որ չի արտացոլել աշխատակցի աշխատած ժամերի իրական պատկերը:

- 21.02.2018 թվականից մինչև 12.06.2018 թվականն աշխատել է Ընկերության տրանսպորտի բաժնում որպես մեքենաների վառելիք լիցքավորող՝ 0.5 դրույքաչափով, այն դեպքում, երբ վառելիքի հաշվառումը և բաշխումը կատարվել է կտրոններով:

3. ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին չփոխանցված գումարի վերաբերյալ

13,164.4 հազ. դրամ գումար ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին չի փոխանցվել

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի օգոստոսի 15-ի թիվ 44-Ա հանձնարարագրի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից Ընկերությունում անցկացվել է պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին համապատասխանող շահութաբաժինների հաշվարկման և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման ճշտության ստուգում: 2017 թվականի հոկտեմբերի 2-ին ստուգում կատարած խմբի կողմից Ընկերությանը ներկայացվել է 2017 թվականի սեպտեմբերի 27-ին կազմված թիվ 44-Ա ակտի նախագիծը: Ակտի նախագծի վերաբերյալ Ընկերության գլխավոր տնօրենը 06.10.2017 թվականի թիվ 398 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարին ներկայացրել է բացատրություններ և առարկություններ, որից հետո՝ 12.10.2017 թվականին ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից կազմվել է Ընկերությունում կատարված ստուգման թիվ 44-Ա ակտը, որով արձանագրվել է 87,521.1 հազ. դրամի ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումար:

Հետագայում, ՀՀ ֆինանսների նախարարի 09.12.2017 թվականի գրությամբ՝ ուղղված ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի 01.12.2017 թվականի թիվ 01/3790-17 գրությանն ի պատասխան, նշվել է, որ ելնելով վերջինիս կողմից ներկայացված՝ նոր ի հայտ եկած փաստական հանգամանքներից և հիմնավորումներից, կատարվել է ճշտում՝ ըստ որի ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կազմել է 9,789.2 հազ. դրամ՝ ներառյալ 1,012.9 հազ. դրամի տույժի գումարը:

14.12.2017 թվականին «ՀՀ պետական բյուջեի բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներ» թիվ 900005200655 հաշվին

փոխանցվել է 9,789.2 հազ. դրամ, այդ թվում՝ 1,012.9 հազ. դրամի չափով տույժի գումարը:

Համաձայն ՀՀ կառավարության 25.05.2005 թվականի թիվ 673-Ն որոշման 2-րդ կետի ա) ենթակետի 2-րդ պարբերության՝ ՔԱԳՎ-ի կառավարմանը հանձնված՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող 100 տոկոս պետական մասնակցությամբ ՓԲԸ-ներում ստացված զուտ շահույթից բաշխման ենթակա է 50 տոկոսը, որից՝ 40%-ը վճարվում է ՀՀ պետական բյուջե, իսկ 60 %-ը՝ ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ եթե Ընկերության կողմից ընդունվել է վերը նշված թիվ 44-Ա ստուգման ակտը, ուստի, 13,164.4 հազ. դրամ գումարը (50% շահութաբաժնի գումարը կազմել է 21,940.7 հազ. դրամ x 40 %=8,776,3 հազ. դրամ, 21,940.7 հազ. դրամ x 60%=13,164.4 հազ. դրամ) ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին չի փոխանցվել:

4. Ընկերության աշխատակիցների համատեղության կարգով աշխատելու վերաբերյալ

2017 թվականին Ընկերության աշխատակիցների՝ այլ աշխատավայրերում աշխատելու վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 36 աշխատակից, բացի Ընկերությունից, աշխատել են նաև այլ կազմակերպություններում՝ ըստ աղյուսակ 4-ում ներկայացված աշխատանքի ձևերի:

Աղյուսակ 4

Հ/Հ	Աշխատանքի ձևը	Աշխատողների թվաքանակը
1	Հերթափոխային	16
2	Համատեղություն, շաբաթական 20 ժամ	6
3	Ամենօրյա 8 ժամյա աշխատանք	13
4	Ամենօրյա 75% դրույքաչափով	1
	Ընդամենը	**36**

5. Պարտադիր բուժստուգումների, դեռատիզացիայի և դեզինսեկցիայի ծախսերի վերաբերյալ

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Ընկերության 2017 թվականի հաստատված նախահաշվով «պարտադիր բուժստուգումներ, դեռատիզացիա և դեզինսեկցիա» հոդվածով նախատեսվել են 55,000.0 հազ. դրամի ծախսեր, փաստացի

ծախսը կազմել է ընդամենը 54,930.1 հազ. դրամ, որից կարգավարների բուժստուգման գծով փաստացի ծախսերը կազմել են 48,138.0 հազ. դրամ, իսկ դեռատիզացիայի և դեզինսեկցիայի գծով ծախսերը՝ 6,792.1 հազ. դրամ:

2018 թվականին դիտարկվող ծրագրով ծախսերը նախատեսվել են նախորդ տարվա չափով՝ 55,000.0 հազ. դրամ գումարով, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է ընդամենը 38,199.5 հազ. դրամ, որից կարգավարների բուժստուգման գծով փաստացի ծախսերը կազմել են 31,858.5 հազ. դրամ, իսկ դեռատիզացիայի և դեզինսեկցիայի գծով ծախսերը՝ 6,341.0 հազ. դրամ:

Բժշկական ծառայությունների կազմում արհեստականորեն ներառվել են դեռատիզացիայի, դեզինսեկցիայի և դեզինֆեկցիաների ծառայություններ, որոնք իրենց բնույթով և բովանդակությամբ չեն կարող դասվել բժշկական ծառայությունների ցանկին

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2018 թվականին բժշկական ծառայությունների գնման նպատակով՝ համապատասխանաբար՝ «ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/17» և «ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18» ծածկագրերով գնման ընթացակարգին մասնակցել և գնառաջարկ է ներկայացրել միայն «Ավիաբուժ» ԲԿ ՓԲԸ-ն, որի հետ էլ հաղթող ճանաչվելու արդյունքում կնքվել են ծառայությունների գնման պայմանագրեր: Ընդ որում, բժշկական ծառայությունների կազմում արհեստականորեն ներառվել են դեռատիզացիայի, դեզինսեկցիայի և դեզինֆեկցիաների ծառայություններ, որոնք իրենց բնույթով և բովանդակությամբ չեն կարող դասվել բժշկական ծառայությունների ցանկին: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ի տարբերություն բժշկական ծառայությունների, որոնց համար պահանջվում է ավիացիոն բժշկության ոլորտում գործունեության լիցենզիա, դեռատիզացիոն, դեզինֆեկցիոն ծառայություններ մատուցելու համար նման լիցենզիա չի պահանջվում և դրանց մասով գնումները պետք է կազմակերպվեին առանձին մրցութային ընթացակարգով:

Ըստ Ընկերության և «Ավիաբուժ» ԲԿ ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի հավելված 1-ի՝ բժշկական հետազոտությունների կազմում ընդգրկվել են ռեկրեացիայի ծառայություններ որոնց համար գնացուցակով նախատեսվել է վճարում 1 ժամի համար 6.0 հազ. դրամի չափով, իսկ նախատեսված 24 ժամի համար՝ 144.0 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում «Ավիաբուժ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա Ընկերությունը 2017 թվականին վերոնշյալ ծառայությունների դիմաց վճարել է 11,664.0 հազ. դրամ, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 6,192.0 հազ. դրամ:

Պայմանագրով հստակեցված չէ թե ինչ ռեկրեացիոն ծառայություններ պետք է մատուցվեն, և նախատեսված չեն դրանց մատուցումը վերահսկելու կոնկրետ ընթացակարգեր:

6. Ներկայացուցչական ծախսեր

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Ընկերության կողմից 2017 թվականին ներկայացուցչական ծախսերը նախատեսվել են 18,300.0 հազ. դրամի չափով, փաստացի ծախսը կազմել է 11,729.6 հազ. դրամ, կամ նախատեսվածի 64.1 %:

2018 թվականին «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով նախատեսվել են 12,100.0 հազ. դրամի չափով, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 3,451.0 հազ. դրամ:

Ուսումնասիրությամբ ընդգրկվել են 2017 թվականին և 2018 թվականի 9 ամսվա ընթացքում դիտարկվող ծախսի նպատակայնության և օրինականության հարցերը, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

- Գործուղման մեկնող աշխատակիցներին, բացի օրենսդրությամբ սահմանված վճարումներից, «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով հատկացվել են այլ գումարներ, որոնց նպատակը հրամանով չի հստակեցվել:
- Կազմակերպված միջոցառումների իրականացման, արտասահմանյան պատվիրակությունների ընդունման, համաժողովների կազմակերպման նպատակով կատարվել են գնումներ, որոնց վերաբերյալ չեն ներկայացվել ծախսը հիմնավորող փաստաթղթեր:

532.9 հազ. դրամի ներկայացուցչական ծախսերը փաստաթղթերով չեն հիմնավորվել

«Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով կատարված ծախսերից 532.9 հազ. դրամի ծախսը (2017 թվականին 413.7 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 119.2 հազ. դրամ) փաստաթղթերով չի հիմնավորվել և, թեև շահութաբաժնի հաշվարկման ժամանակ զուտ շահույթի որոշման ընթացքում դրանք չեն ներառվել նվազեցվող ծախսերի գումարի մեջ, այդուհանդերձ՝ առանց հիմնավորող փաստաթղթերի այդ ծախսերը ենթակա չէին վճարման:

7. Վառելիքի ծախսի վերաբերյալ

Ընկերության գլխավոր տնօրենի կողմից 06.01.2017 թվականին հաստատվել են տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսի վերաբերյալ հաշվարկի նորմաները, որոնց համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 01.06.2005 թվականի թիվ 1001 որոշման պահանջն՝ ըստ որի 0.5 միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքային պայմաններում վառելիքի ծախսը պետք է հաշվարկվի 15%-ի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ընկերությունում (Գյումրու տեղամաս) շահագործվում է 2 ավտոմեքենա՝ «ՀՈՒՆԴԱՅԻ ՎԵՌԱՔՌՈՒԶ» և «ՈՒԱԶ» 220602, որոնց համար ծախսի նորմա է հաստատվել 15%, մինչդեռ պետք է նախատեսվեր մինչև

Շահագործվող ավտոմեքենաների համար սահմանվել ծախսի նորմաներում հայտնաբերվել են անհամապատասխանություններ

500 000 քաղաքային բնակչություն ունեցող բնակավայրերի համար սահմանված նորմայի, կամ 10% ծախսի չափով: Միաժամանակ, նույն հաշվարկում նախատեսվել է ДТ-75 թրթռուռավոր տրակտորի քաղաքային պայմաններում օգտագործման համար վառելիքի ծախս 15%-ի չափով, այն դեպքում, երբ այն քաղաքային պայմաններում չի շահագործվել:

Մյուս կողմից, հակառակ պատկերն է արձանագրվել ՈՒԱԶ 220602 627 UL 65 և ՀՈՒՆԴԱՅԻ ՎԵՌԱՔՌՈՒԶ 232 LL 10 ավտոմեքենաների վառելիքի ծախսի հաշվարկի մասով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Գյումրի քաղաքի համար կիրառվել է ծովի մակերևույթից 500-1500 մ բարձրության համար նախատեսված 5%-ի չափով նորմը՝ 10%-ի փոխարեն: Արդյունքում, այդ մեքենաների համար նորմերից ավելի և պակաս հաշվարկված վառելիքի ծախսերը հավասարակշռվել են, իսկ 2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 91.4 հազ. դրամի (15 %-ը՝ 258լ x 342.5 դրամ և 9լ x 340.4 դրամ) չափով ավելի տրամադրված վառելիքը վերաբերում է միայն ДТ-75 թրթռուռավոր տրակտորին:

Երթուղային թերթիկները չեն համապատասխանում սահմանված ձևաչափերին

Ընկերության վառելիքի ծախսի վերաբերյալ լրացվում են մարդատար (բեռնատար) ավտոմեքենայի երթուղային թերթիկներ, որոնք չեն համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016 թվականի թիվ 37-Ն հրամանի ձև Ծխ-6 և Ծխ-7 ձևաչափերին: Իրականում երթուղային թերթիկներում մեքենաների երթուղին լրացված է ըստ օրերի, իսկ մեքենայի վազքն՝ ամբողջական: Այս պարագայում երթուղային թերթիկներում կիլոմետրով արտահայտված ընդհանուր վազքի ցուցանիշների ճշտությունը հնարավոր չէ գնահատել, քանի որ երթուղային թերթիկները լրացվել են ըստ երթուղիների և ընդհանրական՝ որպես վազքի չափ նշելով Երևան, Էջմիածին և Գյումրի քաղաքների տարածքները:

8. «Skoda Superb» մակնիշի ավտոմեքենայի վարձակալության վերաբերյալ

Ընկերության և ՔԱԳՎ-ի միջև 23.02.2016 թվականին կնքվել է թիվ 7.1 պայմանագիրը, որի 1.1 կետով սահմանվել է, որ վերջինիս հանձնարարությամբ Ընկերությունը «Skoda Superb» մակնիշի սև մետալիկ կամ «Skoda Superb» մակնիշի սև գույնի տրանսպորտային որևէ միջոցով պետք է մատուցի ծառայություններ՝ կապված պաշտոնական պատվիրակությունների դիմավորման և ճանապարհման, հատուկ չվերթների, ստուգայցերի սպասարկումների և այլ նպատակով օգտագործման հետ:

Վերոնշյալ ծառայությունների պայմանագրային արժեքը սահմանվել է տարեկան 900.0 հազ. դրամի չափով:

Բացի այդ, պայմանագրով նախատեսվել է, որ Ընկերությունը պարտավոր է կատարել ամսական 1500 կիլոմետր վազքի մասով տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը, որն իր մեջ ներառում է «Պրեմիում» վառելիքի տրամադրում, ինչպես նաև ավտոմեքենայի ընթացիկ վերանորոգում:

2018թ. առանց գումար վճարելու կամ պայմանագրի գործողության ժամկետը դադարեցնելու, ավտոմեքենան շահագործվել է

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տարիներ շարունակ ՔԱԳՎ-ի պետի կողմից շահագործվել է Ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցը, 2017 թվականի ընթացքում ծառայության մատուցման համար վճարվել է 900.0 հազ. դրամ, իսկ 2018 թվականին՝ առանց գումար վճարելու կամ պայմանագրի գործողության ժամկետը դադարեցնելու, ավտոմեքենան շահագործվել է:

Ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերի համաձայն՝ նշված ավտոմեքենայով ՔԱԳՎ-ի պետին սպասարկման ծախսերն՝ ըստ տարիների, կազմել են համապատասխանաբար՝ 2017 թվականին 8,008.8 հազ. դրամ (1,087.3 հազ. դրամի 3661 լիտր վառելիք, 6,594.0 հազ. դրամի վարորդի աշխատավարձ և 327.0 հազ. դրամի այլ ծախսեր), իսկ 01.10.2018 թվականի դրությամբ՝ 5,737.7 հազ. դրամ (692.3 հազ. դրամի 2143 լիտր վառելիք, 4,679.7 հազ. դրամի վարորդի աշխատավարձ և 365.0 հազ. դրամի այլ ծախսեր):

9. Գործուղման ծախսեր

2017 թվականի ճշտված նախահաշվով «գործուղման ծախսեր» հոդվածով նախատեսվել են 105,000.0 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսվել է 133,355.8 հազ. դրամ, որից ՀՀ տարածքից դուրս՝ 132,660.0 հազ. դրամ (այդ թվում՝ 60,073.5 հազ. դրամ գիշերավարձ, օրապահիկ և այլն, 45,353.8 հազ. դրամ կադրերի պատրաստում և վերապատրաստում հոդվածով (այդ թվում՝ 30,879.7 հազ. դրամ գիշերավարձ, օրապահիկ և այլն, 14,474.1 հազ. դրամ պատրաստման և վերապատրաստման մեկնած աշխատակիցներին 20 եվրոյի կամ 20 ֆունտ ստեռլինգի չափով լրացուցիչ վճարված օրապահիկ և նրանց մուտքի վիզաներ), 26,454.3 հազ. դրամ ավիատոմսեր, 382.4 հազ. դրամ ապահովագրություն, 396.0 հազ. դրամ մուտքի վիզա), իսկ ՀՀ տարածքում՝ 695.0 հազ. դրամ:

2018 թվականի ճշտված նախահաշվով «գործուղման ծախսեր» հոդվածով նախատեսվել են 135,500.0 հազ. դրամի ծախսեր, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսվել է 97,753.4 հազ. դրամ, որից ՀՀ տարածքից դուրս՝ 96,878.4 հազ. դրամ (այդ թվում՝ 48,185.9 հազ. դրամ գիշերավարձ, օրապահիկ և այլն,

23,579.2 հազ. դրամ կադրերի պատրաստում և վերապատրաստում (այդ թվում՝ 15,813.9 հազ. դրամ գիշերավարձ, օրապահիկ և այլն, 7,765.2 հազ. դրամ մասնակիցներին լրացուցիչ օրապահիկ 20 եվրո կամ 20 ֆունտ ստերլինգ և նրանց մուտքի վիզա), 24,738.0 հազ. դրամ ավիատոմսեր, 375.3 հազ. դրամ ապահովագրություն), իսկ ՀՀ տարածքում՝ 875.0 հազ. դրամ:

Գործուղումների ծախսերը հաշվարկվել և վճարվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.02.2005 թվականի թիվ 2335-ն որոշման դրույթների, ինչպես նաև Ընկերության գլխավոր տնօրենի հրամանը:

Ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը՝

ՀՀ տարածքում աշխատակիցների համար ձևակերպված գործուղման վկայականները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 29.02.2005 թվականի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված գործուղման վկայականի օրինակելի ձևին:

Գործուղման հրամաններում գործուղման նույն ժամանակահատվածը ձևակերպվել է տարբեր բովանդակությամբ՝ գործուղման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար առանձին դեպքերում օգտագործելով «մինչև», իսկ մյուսներում՝ «ներառյալ» բառերը, ինչը գործուղման օրերի հաշվարկի ժամանակ կարող է հանգեցնել սուբյեկտիվ մոտեցման դրսևորմանը:

Գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը կատարվել է մեկնելու օրը, մինչդեռ պետք է կատարվեր մեկնելուց առնվազն մեկ օր առաջ

Գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը կատարվել է մեկնելու օրը (27.07.2017 թվականի թիվ 595-Ա, 17.05.2017 թվականի թիվ 329-Ա, 15.03.2017 թվականի թիվ 176-Ա հրամաններ), որի արդյունքում չի ապահովվել ՀՀ կառավարության 29.02.2005 թվականի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 9-րդ կետի պահանջի կատարումը, այն է՝ գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ:

Որոշ դեպքերում գործուղումից հետո ներկայացման ենթակա փաստաթղթերը ներկայացվել են 1-ից մինչև 8 օր ուշացումով

Նույն Կարգի 9-րդ կետի համաձայն՝ աշխատակիցը գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն, գործուղման ծախսերը հավաստող փաստաթղթերը, սակայն որոշ դեպքերում (13.04.2017 թվականի թիվ 272-Ա, 09.06.2017 թվականի թիվ 407-Ա, 13.06.17 թվականի թիվ 416-Ա, 08.09.2017 թվականի թիվ 718-Ա, 12.03.2018 թվականի թիվ 199-Ա, 22.08.2018 թվականի թիվ 748-Ա հրամաններ) համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են 1-ից մինչև 8 օր ուշացումով:

«ԱՎԻԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընկերության անձնակազմի վերաբերյալ

Հրավիրովի դասախոսական կազմի ձևավորումը կատարվել է հիմնականում առանց մրցույթի

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հրավիրովի դասախոսական կազմի ձևավորումը կատարվել է հիմնականում առանց մրցույթի, իսկ 2011 թվականից ի վեր՝ անցկացվել է միայն մեկ մրցույթ 2017 թվականի սեպտեմբերի 14-ին:

Ընկերության հաստիքացուցակով նախատեսվել է թռիչքային գործունեության ծառայության պետի պաշտոն, որը զբաղեցրել է ՔԱԳՎ-ի թռիչքային վարչության պետն, այսինքն, նույն անձը միաժամանակ զբաղեցրել է երկու վարչական պաշտոն, որի պայմաններում՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի, նրա աշխատանքային պայմանագրերով ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից: Իրականում, թռիչքային ծառայության պետի հետ կնքված պայմանագրով նախատեսված գործառույթների ցանկը վկայում է ներկայացվող պահանջից շեղումների մասին, ավելին, դրանց մի մասը չի համապատասխանում օդաչու-ուսանողների մասնագիտական պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման ծառայությունների մատուցման կազմակերպմանն առնչվող աշխատանքներին:

Նույն անձը միաժամանակ զբաղեցրել է երկու վարչական պաշտոն

2. ՔԱԳՎ-ի կողմից Ընկերությանը հատկացված դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ

ՔԱԳՎ-ի աշխատակազմի և Ընկերության միջև 2017 թվականի փետրվարի 22-ին կնքվել է թիվ 4 պայմանագիրը՝ համաձայն որի օդաչու ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների իրականացման և թռիչքային հմտությունների ձեռք բերման նպատակով ՔԱԳՎ-ն ընկերությանը հատկացնելու է 141,033.2 հազ. դրամ, որը փոխանցվելու է Ընկերությանը 2017 թվականի հունվար ամսից՝ 10 օդաչու-ուսանողների 480 թռիչքային ժամ (մեկ ժամի արժեքը սահմանվել է 293.8 հազ. դրամ)՝ ուսումնավարժանքային թռիչքներն իրականացնելու համար:

Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային

թռիչքների ծախսերը կազմել է 138,581.0 հազ. դրամ, այդ թվում՝ վառելիքի ծախսը 2,435.0 հազ. դրամ, որը հատկացվել է Ընկերության կողմից:

Վճարումը կազմել է 136,141.0 հազ. դրամ՝ որից 5,000.0 հազ. դրամն Ընկերության նախորդ տարիներին ավելի վճարված գումարն է:

ՔԱԳՎ-ի աշխատակազմի և Ընկերության միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքվել է թիվ 2 պայմանագիրը (պետական պատվերի շրջանակներում գումար հատկացնելու մասին)՝ համաձայն որի օդաչու ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների իրականացման և թռիչքային հմտությունների ձեռք բերման նպատակով ՔԱԳՎ-ն Ընկերությանը հատկացնելու է 78,700.2 հազ. դրամի դրամաշնորհ, որը փոխանցվելու է Ընկերությանը 2018 թվականի մայիս ամսից սկսած՝ 6 օդաչու-ուսանողների 300 թռիչքային ժամ (մեկ ժամի արժեքը սահմանվել է 262.3 հազ. դրամ)՝ ուսումնավարժանքային թռիչքներն իրականացնելու համար: Կողմերի միջև պայմանագրային պարտավորությունների կատարման հիմքում ընկած հաշվարկում չի ներառվել վառելիքի ծախսը:

2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Ընկերության կողմից ՔԱԿ-ին (նախկին ՔԱԳՎ) ներկայացված տեղեկանք-հաշվարկով մատուցված ծառայությունները Diamond DA 40 ինքնաթիռի 300 թռիչքային ժամի դիմաց վարձակալության վճարը կազմել է 80,360.1 հազ. դրամ, այդ թվում՝ 2017 թվականին վճարված 1,765.5 հազ. դրամի վառելիքի ծախսը, արդյունքում, վճարման ենթակա և վճարված գումարը կազմել է 78,594.6 հազ.դրամ, այդ թվում՝ կատարվել է նախորդ տարիներին Ընկերությանը 8,332.7 հազ. դրամի չափով ավելի վճարված գումարներից պակաս վճարում:

Վերոնշյալ հաշվանցված գումարների հետ գանձումը կատարվել է ՔԱԳՎ-ի ներքին աուդիտի բաժնի պետի կողմից 14.12.2016 թվականին կազմված աուդիտորական վերջնական հաշվետվության, ինչպես նաև ՔԱԳՎ պետին 21.02.2017 թվականի ուղղված զեկուցագրի հիման վրա, որով առաջարկվել է Ընկերությանը վերադարձնել ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին 17,798,732.0 դրամ, այդ թվում՝ «Մեյն Ավիէյշն Տեքնիքս» ՍՊԸ-ից 13,332.7 հազ. դրամ (5,000.0 + 8,332.7), որը հաշվարկներով նվազեցվել է, ինչպես նաև 4,466.0 հազ. դրամի գումար՝ «Արմենիա էյրվեյզ» ՓԲԸ-ից: Այդ նպատակով Ընկերության և «Մեյն Ավիէյշն Տեքնիքս» ՍՊԸ-ի կողմից հաստատվել է 2015 թվականին ավելի վճարված գումարի հետգանձման ժամանակացույց՝ ըստ որի 13,332.7 հազ. դրամի հետգանձման գործընթացը նախատեսվել և ավարտվել է 2018 թվականի օգոստոս ամսին: Ինչ վերաբերում է «Արմենիա էյրվեյզ» ՓԲԸ-ին, ապա 2018 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ ընկերության կողմից հաշվարկված գումարի վերադարձը չի ապահովվել:

2018 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ ընկերության կողմից հաշվարկված գումարի վերադարձը չի ապահովվել

3. Ընկերության և «Մեյն Ավիէյշն Տեքնիքս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի և վճարված գումարների վերաբերյալ

Համաձայն Ընկերության 2017 թվականի գնումների պլանի՝ նախատեսվել է իրականացնել Diamond DA 40 ինքնաթիռի կամ համարժեք սերիայի օդանավի վարձակալություն 129,600.0 հազ. դրամ (480 ժամ x 270.0 հազ. դրամ), իսկ 2018 թվականի համար՝ 129,472.1 հազ. դրամ (501 ժամ 50 րոպե x 258.2 հազ. դրամ) գումարով:

2017-2018 թվականներին Ընկերությունը օդաչու-ուսանողների ուսումնական պրակտիկայի անցկացման (ոչ կոմերցիոն) նպատակով «Մեյն Ավիէյշն Տեքնիքս» ՍՊԸ-ի հետ 2017 թվականի հունվարի 11-ին կնքել է թիվ 17/01 պայմանագիրը 480 թռիչքային ժամի և 2018 թվականի ապրիլի 27-ին՝ թիվ 18/1 պայմանագիրը 300 թռիչքային ժամի համար:

2017 թվականի փետրվարի 22-ի թիվ 4 պայամանագրին կից 08.11.2016 թվականի հաշվարկում օդանավի վարձակալության համար հաշվարկվել է 123,638.4 հազ. դրամ, կամ 1 թռիչքային ժամվա համար նախատեսվել է 257.58 հազ. դրամի չափով վարձավճար, իսկ 2018 թվականի մայիսի 4-ի թիվ 2 պայամանագրին կից 04.05.2018 թվականի հաշվարկում օդանավի 300 թռիչքային ժամի համար վարձակալության վճարը հաշվարկվել է 72,000.0 հազ. դրամ, կամ 1 ժամվա համար նախատեսվել է 240.0 հազ. դրամ: Ընդ որում, ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2018 թվականին, բացակայում են օդանավի վարձակալության մեկ ժամվա միավոր արժեքի հաշվարկման հիմնավորումները՝ չնայած այն հանգամանքին, որ մատուցվող նույն տիպի ծառայությունների դիմաց 2017 թվականին՝ 2018 թվականի համեմատ, մեկ ժամվա համար ավել է հաշվարկվել 17.6 հազ. դրամ, ընդամենը՝ 8,438.4 հազ. դրամ:

Բացակայում են օդանավի վարձակալության մեկ ժամվա միավոր արժեքի հաշվարկման հիմնավորումները

Ընկերությունը «Մեյն Ավիէյշն Տեքնիքս» ՍՊԸ-ին օդանավի վարձակալության համար 2017 թվականին վճարել է 123,638.4 հազ. դրամ (ներառյալ՝ աուդիտի ակտով 5,000.0 հազ. դրամ նվազեցումը), 2018 թվականի 72,000.0 հազ. դրամ (ներառյալ՝ աուդիտի ակտով 8,332.7 հազ. դրամ նվազեցումը):

Նույն հաշվարկում (2017 թվականի փետրվար 22-ի թիվ 4 պայամանագրին կից 08.11.2016 թվականի հաշվարկ) որևէ հիմնավորում չունի նաև թռիչքային առաջադրանքի կազմման համար նախատեսված գումարը (1 ժամվա համար 4.0 հազ. դրամ), որով հաշվարկվել և «Արմենիա էյրվեյզ» ՓԲԸ-ին՝ համաձայն 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 17/02 պայմանագրի, վճարվել է 1,920.0 հազ. դրամ: 2018 թվականին թռիչքային առաջադրանքի կազմման գործառույթն իրականացրել է Ընկերությունը:

Առաջին կիսամյակում նախատեսված 300 թռիչքային ժամ ուսումնավարժանքային թռիչքների իրականացումը կատարվել է ժամկետային անհամապատասխանություն-ներով

Հարկ է նշել, որ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 29.12.2017թ. հաստատված 2018 թվականին նախնական պատրաստման դասընթացների պլան գրաֆիկով նախատեսված է եղել 6 օդաչու-ուսանողների համար 501 ժամ 50 րոպե թռիչքային ժամ, որից 300 ժամը առաջին կիսամյակում, իսկ 201 ժամ 50 րոպեն՝ երկրորդ կիսամյակում: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ առաջին կիսամյակում նախատեսված 300 թռիչքային ժամ ուսումնավարժանքային թռիչքների իրականացումը կատարվել է ժամկետային անհամապատաս-խանություններով՝ այն երկարաձգվել է մինչև 2018 թվականի սեպտեմբեր ամիսը՝ ներառյալ, իսկ երկրորդ կիսամյակում նախատեսված 201 ժամ 50 րոպե թռիչքային ժամն ընդհանրապես չի իրականացվել, որի արդյունքում ուսանողները համարվել են կուրսը չավարտած և ավարտական վկայական չեն ստացել: 6 օդաչու-ուսանողների հաշվով 2016-2018 թվականներին ուսումնական պլանով նախատեսվել է 1020 թռիչքային ժամ, փաստացի իրականացվել է 818 ժամ 10 րոպե, կամ ուսումնական պլանից շեղումը կազմել է 201 ժամ 50 րոպե

Ընկերության կողմից պայմաններ չեն ստեղծվել օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների թռիչքային ժամերի ամբողջական իրականացման համար, ինչպես նաև միջոցներ չեն ձեռնարկվել ուսման ավարտն ապահովելու և իր կանոնադրությամբ սահմանված պարտավորությունների կատարման ուղղությամբ

Փաստորեն, ի սկզբանե՝ տեղեկացված լինելով Diamond DA 40 ինքնաթիռի և պտուտակի պիտանիության ժամկետի ավարտի մասին, Ընկերության կողմից պայմաններ չեն ստեղծվել օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների թռիչքային ժամերի ամբողջական իրականացման համար, ինչպես նաև միջոցներ չեն ձեռնարկվել ուսման ավարտն ապահովելու և իր կանոնադրությամբ սահմանված պարտավորութ-յունների կատարման ուղղությամբ:

Միաժամանակ, հաշվարկները ցույց են տվել, որ 6 ուսանողների հաշվով 2016-2018 թվականների ընթացքում ծախսվել է շուրջ 267,148.5 հազ դրամ, այդ թվում՝ համապատասխանաբար՝ 2016 թվականին 103,828.6 հազ դրամ, 2017 թվականին՝ 84,619.9 հազ դրամ, 2018 թվականին՝ 78,700.0 հազ. դրամ:

4. Ընկերության կողմից Diamond DA 40 ինքնաթիռի վարձակալության վերաբերյալ

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ընկերության կողմից Diamond DA 40 ինքնաթիռի վարձակալության համար «Մեյն Ավիէյշընն Տեքնիքս» ՍՊԸ-ին 2013 թվականից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 2434 ժամ 50 րոպե թռիչքային ժամերի համար վճարվել է ընդամենը 592,077.3 հազ. դրամ:

Ստորև ներկայացված աղյուսակում բերված են ըստ տարիների վճարված գումարների վերաբերյալ տվյալները՝

հազ. դրամ

ժամ	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	Ընդամենը
	223ժամ 40 րոպե	547ժամ 55 րոպե	345 ժամ 05 րոպե	538ժամ 10րոպե	480ժամ	300ժամ	**2434ժամ 50 րոպե**
Գումար	48,969.6	119,960.9	88,886.8	138,620.1	123,639.9	72,000.0	**592,077.3**
Մեկ ժամվա գինը	218.9	218.9	257.58	257.57	257.58	240.0	
Օդաչու-ուսանողների թիվը	8	9	9	10	10	6	**52**

Ըստ էության վարձավճարը 2013-2018 թթ. համար կազմել է 592,077.3 հազ. դրամ, իսկ նմանատիպ նոր օդանավի շուկայական արժեքը Ռուսաստանում՝ համաձայն http://avrussia.ru/catalog/airplanes/se/da40.html կայքի, կազմում է 550 000 ԱՄՆ դոլար: Իսկ կոնկրետ Ընկերության կողմից վարձակալված օդանավի մասով, համաձայն 04.07.2013 թվականի (գրանցման համարը՝ C 9892) մաքսային հայտարարագրի՝ «FLYING PICTURES» ՍՊԸ-ի (Մեծ Բրիտանիա) կողմից արտահանվել և «Մեյն Ավիէյշընն Տեքնիքս» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել Diamond DA 40 ինքնաթիռը, որի ընդամենը արժեքը կազմել է 86,217.3 հազ. դրամ, այդ թվում՝ ինքնաթիռի արժեքը 110,0 հազ. ֆունտ ստերլինգ կամ 68,973.3 հազ. դրամ, այլ ծախսերը՝ 2,869.0 հազ. դրամ, ԱԱՀ-ն՝ 14,368.5 հազ. դրամ, մաքսավճարը՝ 6.5 հազ. դրամ: Այսինքն, օդանավի վարձակալության նպատակով ծախսված գումարը գրեթե 7 անգամ գերազանցել է այդ օդանավի ձեռք բերման արժեքը:

Օդանավի վարձակալության նպատակով ծախսված գումարը գրեթե 7 անգամ գերազանցել է այդ օդանավի ձեռք բերման արժեքը

5. ՈՒսումնավարժանքային թռիչքային առաջադրանքի ձևակերպման վերաբերյալ

Ընկերության կողմից ուսումնավարժանքային թռիչքային առաջադրանքի ձևակերպման համար «Արմենիա» Էյրվեյզ ավիաընկերություն» ՓԲԸ-ին և «Հայկ Ավիա» ՍՊԸ-ին յուրաքանչյուր թռիչքային ժամի համար հաշվարկվել է 4.0 հազ. դրամ և վճարվել է համապատասխանաբար՝ 2271 ժամ 05 րոպեի համար՝ 7,883.9 հազ. դրամ և 163 ժամ 45 րոպեի համար՝ 655.1 հազ. դրամ:

6. Գնումների վերաբերյալ

Ընկերության 2018 թվականի գնումների պլանով նախատեսված «Diamond DA - 40» կամ համարժեք սերիայի ինքնաթիռի վարձակալության ծառայության ձեռք բերման համար ստեղծվել է գնահատող հանձնաժողով:

19.03.2018 թվականին «ԱՈՒԿ-ՀԲՄԾՁԲ-18/01» ծածկագրով տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի նիստ, որով հաստատվել է գնում կատարելու համար մասնակիցներին տրամադրվող հրավերը, որը տրամադրվել է լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարության կայքում հրապարակելու նպատակով:

19.03.2018 թվականին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի նիստ, որով հաստատվել է «ԱՈՒԿ-ՀԲՄԾՁԲ-18/01» ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, որը կատարվել է էլեկտրոնային գնումների www. armeps. am կայքի միջոցով:

Արձանագրվել է, որ միակ հայտ ներկայացրած մասնակիցը «Մեյն Ավիէյշընն Տեքնիքս» ՍՊԸ-ն է, որի հայտը կազմվել և ներկայացվել է սահմանված կարգին համապատասխան: Ընտրված մասնակցի գնային առաջարկը կազմել է 72,000.0 հազ. դրամ, այդ թվում՝ 12,000.0 հազ. դրամ ԱԱՀ:

Հանձնաժողովը 25.04.2018 թվականի թիվ 4 արձանագրությամբ որոշել է՝ «ԱՈՒԿ-ՀԲՄԾՁԲ-18/01» ծածկագրով գնման մասով հաղթող ճանաչել «Մեյն Ավիէյշընն Տեքնիքս» ՍՊԸ-ին:

7. Վառելիքի ծախսերի վերաբերյալ

Ընկերության 2017 թվականի փաստացի ծախսը վառելիքի գծով կազմել է 1,122.2 հազ. դրամ, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 932.1 հազ. դրամ:

Ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանում շահագործվել է ԳԱԶ 31-10 մակնիշի մեկ ավտոմեքենա, որի շահագործման համար 2017 թվականին և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ օգտագործվել է համապատասխանաբար՝ 3100 և 2400 լիտր վառելիք:

Ավտոմեքենայի երթուղային թերթերում հաշվառումը կատարվել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի

Վառելիքի ծախսում ներառվել են նաև շաբաթ և կիրակի օրերի ծախսերը

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ավտոմեքենայի երթուղային թերթերում հաշվառումը կատարվել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի: Ընդ որում, վառելիքի ծախսում ներառվել են նաև շաբաթ և կիրակի օրերի ծախսերը, մինչդեռ այդ օրերի համար չեն արձակվել հրամաններ, դրանք աշխատանքային օր համարելու վերաբերյալ: Ելնելով վերոնշյալից՝ շաբաթ-կիրակի և տոն օրերի համար դուրս գրված վառելիքի քանակը կազմում է 2017 թվականին՝ 913 լիտր և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 753 լիտր:

Հաշվարկները ցույց են տվել, որ 2017 թվականին ավելի վճարված գումարը կազմել է 360.0 հազ. դրամ, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 292.0 հազ. դրամ:

Ընկերության վառելիքի ծախսի վերաբերյալ լրացվում են մարդատար (բեռնատար) ավտոմեքենայի երթուղային թերթիկներ, որոնք չեն համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016 թվականի թիվ 37-Ն հրամանի ձև Ծխ-6 ձևաչափերին: Իրականում երթուղային թերթիկում մեքենաների երթուղին լրացված է ամսական, իսկ մեքենայի վազքն՝ ամբողջական: Այս պարագայում երթուղային թերթիկներում կիլոմետրով արտահայտված ընդհանուր վազքի ցուցանիշների ճշտությունը հնարավոր չէ գնահատել, քանի որ երթուղային թերթիկները լրացվել են ընդհանրական՝ որպես վազքի չափ նշելով օդանավակայան - Երևան երթուղին:

Ծանոթություն՝ *Հաշվեքննության ընթացքում հայտնաբերված վերոգրյալ փաստերը պարունակող արձանագրությունները «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվել են հաշվեքննության օբյեկտի ղեկավարին: Վերջինիս կողմից որոշ փաստերի վերաբերյալ ներկայացվել է դիրքորոշում, որը կցվում է հավելվածում:*

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ ՔԱԳՎ) աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը ստեղծվել է ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի թիվ 202-Ն որոշմամբ, որով հաստատվել են նաև կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը:

Համաձայն «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի, «ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը ստացել է նախարարությանը ենթակա մարմնի կարգավիճակ, և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 09.07.2018 թվականի թիվ 499-Ա հրամանով հաստատվել են քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ ՔԱԿ) կանոնադրությունն ու կառուցվածքը:

ՔԱԳՎ-ն իր խնդիրների և նպատակների իրականացման համար իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

- քաղաքացիական ավիացիայի բնագավառում թռիչքային և ավիացիոն անվտանգության, ինչպես նաև՝ աէրոնավիգացիոն սպասարկման հետ կապված հարցերով քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության ներկայացում,
- քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրների վարում,
- քաղաքացիական ավիացիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ՀՀ օրենսդրության պահանջների և միջազգային ավիացիոն կազմակերպությունների հրապարակած թռիչքային ու ավիացիոն անվտանգության և տեխնիկական փաստաթղթերի դրույթների կատարումն ապահովող կանոնակարգերի մշակում և հաստատում, դրանց ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում և ներդրում,
- օդանավերի թռիչքային պիտանիության սերտիֆիկատներ տալու (ճանաչելու), սերտիֆիկատների գործողության ժամկետները երկարաձգելու, կասեցնելու կամ դադարեցնելու նպատակով օդանավի թռիչքատեխնիկական և ռեսուրսային վիճակի ուսումնասիրում՝ դրանց պիտանիությունը որոշելու համար,
- օդանավերի թռիչքային պիտանիության, թռիչքային պիտանիության պահպանման կառավարման և տեխնիկական սպասարկման ու վերանորոգման կազմակերպությունների սերտիֆիկատների վավերականության ժամանակահատվածում դրանց համապատասխանության ստուգումների և վերահսկողության իրականացում,
- օդանավ շահագործողի վկայականի տրամադրում,
- ուսումնական և հատուկ բնույթի որոշակի թռիչքների իրականացման նպատակով լրացուցիչ պայմաններ և պահանջներ պարունակող հատուկ կարգերի սահմանում և այլն:

ՔԱԳՎ-ի հաստիքացուցակով 2017-2018 թվականների հունվարի 1-ի դրությամբ աշխատողների թվաքանակն՝ ըստ հաստատված հաստիքացուցակի, կազմել է 63 հաստիք: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ փաստացի աշխատողների թվաքանակը կազմել է 58, որից զբաղված հաստիքների թվաքանակը՝ 49-ը (այդ թվում՝ 28 քաղաքացիական ծառայող և 9 արտահաստիքային աշխատող): 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ փաստացի աշխատողների թվաքանակը կազմել է 55, որից զբաղված հաստիքների թվաքանակը՝ 50 (այդ թվում՝ 26 քաղաքացիական ծառայող և 5 արտահաստիքային աշխատող):

Բյուջետային ծախսերի վերաբերյալ

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ 2017 թվականի ՀՀ պետական բյուջեով ՔԱԳՎ-ի համար ծախսերը հաստատվել են 240,131.7 հազ. դրամ գումարով, ֆինանսավորումը կազմել է 239,202.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 241,877.8 հազ. դրամ, որը գերազանցել է նախատեսված ցուցանիշը 1,746.1 հազ. դրամով: 2017 թվականին փաստացի ծախսերից 226,194.2 հազ. դրամը կամ ընդհանուր ծախսերի 93.5%-ն ուղղվել է «աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով ծախսերի կատարմանը: Ընդհանուր ծախսերում «ծառայությունների և ապրանքների ձեռք բերում» հոդվածով փաստացի ծախսերի տեսակարար կշիռը կազմել է 6.4% կամ 15,458.3 հազ. դրամ՝ նախահաշվով հաստատված 13,113.6 հազ. դրամի փոխարեն:

2018 թվականին պետական բյուջեով ՔԱԳՎ-ի ծախսերը հաստատվել են 246,693.9 հազ. դրամի չափով, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ֆինանսավորումը կազմել է 164,349.6 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 160,495.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 9,337.7 հազ. դրամով կամ 5.5%-ով: 2018 թվականի նախահաշվով «աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով ծախսերը նախատեսվել են 215,562.6 հազ. դրամի չափով, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 153,463.2 հազ. դրամ, կամ փաստացի ծախսերի 95.6%-ը: «Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում» հոդվածով 2018 թվականին նախատեսվել են 17,512.5 հազ. դրամի չափով ծախսեր, որը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 33.5%-ով և կազմել ընդհանուր ծախսերի 7.1%-ը: Տվյալ հոդվածով փաստացի ծախսերը 2018 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 6,828.6 հազ. դրամ, կամ տարվա համար նախատեսվածի 39.0%-ը:

2017-2018 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին կապիտալ ծախսեր չեն նախատեսվել և չեն կատարվել:

ՀՀ պետական բյուջեից «միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և «կրթական, մշակութային և սպորտային նպաստների բյուջեից» ծրագրերով հատկացվող նպաստների վերաբերյալ

2017 թվականին ՔԱԳՎ-ի համակարգի «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին միջին մասնագիտական կրթության գծով 09030201 ծրագրով «ուսանողական նպաստների տրամադրում» հոդվածով հատկացվել է 26,019.5 հազ. դրամ, իսկ կրթաթոշակ վճարելու նպատակով 09030202 ծրագրով՝ 1,786.0 հազ. դրամ: Նշված հոդվածներով ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով:

2018 թվականին ՔԱԳՎ-ի համակարգի «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին միջին մասնագիտական կրթության գծով 09030201 ծրագրով «ուսանողական նպաստների տրամադրում» հոդվածով նախատեսվել է հատկացնել է 24,234.0 հազ. դրամ, իսկ կրթաթոշակ վճարելու նպատակով 09030202 ծրագրով՝ 1,710.0 հազ. դրամ: Ըստ նշված հոդվածների 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 15,970.2 և 874.0 հազ. դրամ:

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում աէրոնավիգացիոն սպասարկման ապահովում իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

Իր առջև դրված նպատակներն իրականացնելու համար Ընկերությունը զբաղվում է տնտեսական գործունեության հետևյալ հիմնական տեսակներով՝

- Հայաստանի Հանրապետության օդային տարածքում օդային երթևեկության կազմակերպում,
- Հայաստանի Հանրապետության օդային տարածքում իրականացվող չվերթների աէրոնավիգացիոն տեղեկատվության ապահովում,
- օդային երթևեկության կազմակերպում, ինչպես նաև աէրոնավիգացիոն տեղեկատվության ապահովում Հայաստանի Հանրապետության օդային տարածքից դուրս համաձայն գործող պայմանագրերի և համաձայնագրերի,
- թռիչքների ռադիոտեխնիկական ապահովման և կապի սարքավորումների տեխնիկական ներդնում, սպասարկում, մոնտաժում, վերանորոգում և շահագործում ըստ գործող նորմերի,
- Հայաստանի Հանրապետության օդային տարածքում թռիչքների անվտանգության կառավարում, ապահովում և այլն:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 392, 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 351, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 352 մարդ:

Ընկերության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ

2017 թվականի հաշվեկշռին կից շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության համաձայն՝ ընդամենը համախառն եկամուտը կազմել է 7,020,919.0 հազ. դրամ, այդ թվում՝

- ծառայությունների մատուցումից հասույթը՝ 6,607,686.0 հազ. դրամ, որում ներառվել են ավիաընկերությունների հետ կնքված պայմանագրերով աէրոնավիգացիոն ծառայություններից (3,778,044.0 հազ. դրամ տարանցիկ և 2,827,715.0 հազ. դրամ ՀՀ օդանավակայաններում չվերթների սպասարկումից), ինչպես նաև այլ մուտքերը (1,376.8 հազ. դրամ ԱԻՊ հրատարակությունից, 385.6 հազ. դրամ պրակտիկայի անցկացումից և 165,0 հազ. դրամ սարքավորումների սպասարկումից),
- այլ եկամուտները՝ 25,257.0 հազ. դրամ (1,738.7 հազ. դրամ հիմնական միջոցների օտարումից մուտքեր և 23,518.2 հազ. դրամ՝ եկամուտներ տույժ, տուգանքից, նյութական վնասի փոխհատուցումից և այլն),
- ֆինանսական եկամուտը՝ 41,716.0 հազ. դրամ (40,478.0 հազ. դրամ բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ և այլն),
- այլ ֆինանսական հոդվածներով եկամուտը՝ 346,260.0 հազ. դրամ (փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ):

Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները կազմել են 3,882,947.0 հազ. դրամ, այդ թվում՝

- աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին՝ 2,499,619.0 հազ. դրամ (ընդհանուր ծախսերի 64.4%-ը),
- մաշվածություն և ամորտիզացիա՝ 675,898.0 հազ. դրամ (17.4%),
- գործուղման ծախսեր՝ 133,356.0 հազ. դրամ (3.4%),

- Եվրոկոնտրոլի անդամավճարների գծով ծախսեր՝ 134,655.0 հազ. դրամ (3.5%),
- կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսեր՝ 57,226.0 հազ. դրամ (1.5%),
- բուժսպասարկում՝ 48,138.0 հազ. դրամ (1.2%) և այլն:

Շահույթը մինչև հարկելը կազմել է 3,137,972.0 հազ. դրամ, հաշվետու տարվա շահութահարկի գումարը՝ 651,578.0 հազ. դրամ, շահույթը՝ 2,486,394.0 հազ. դրամ, ավելացումը՝ 309,773.0 հազ. դրամ(հիմք ընդունելով ՀՀ կառավարության 22.06.06 թվականի թիվ 1238-ն որոշումը), զուտ շահույթը՝ 2,796,167.0 հազ. դրամ (որից 50% շահութաբաժինը բաշխվել է հետևյալ կերպ՝ 60%-ը, կամ 838,850.1 հազ. դրամը՝ ՔԱԳՎ-ին, 40%-ը, կամ 559,233.4 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջե):

2018 թվականին Ընկերության արտադրատնտեսական գործունեության ծախսերի նախահաշվի համաձայն՝ ընդամենը համախառն եկամուտը նախատեսվել է 5,952,500.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդամենը համախառն եկամուտը կազմել է 5,195,672.7 հազ. դրամ, այդ թվում՝

- ծառայությունների մատուցումից հասույթը՝ 5,119,480.6 հազ. դրամ, որում ներառվել են՝ 5,117,611.0 հազ. դրամի չափով ավիաընկերությունների հետ կնքված պայմանագրերով աէրոնավիգացիոն ծառայություններից (2,827,633.0 հազ. դրամ տարանցիկ և 2,289,978.0 հազ. դրամ ՀՀ օդանավակայաններում չվերթների սպասարկումից), ինչպես նաև 1,570.3 հազ. դրամ ԱԻՊ հրատարակությունից և 300.0 հազ. դրամ պրակտիկայի անցկացումից,
- 56,397.5 հազ. դրամ բանկային տոկոսների հաշվեգրումից,
- 2,215.6 հազ. դրամ հիմնական միջոցի օտարումից
- այլ եկամուտները՝ 17,579.0 հազ. դրամ (եկամուտներ տույժերից, տուգանքից, նյութական վնասի փոխհատուցումից, տարածքի վարձակալության հանձնումից և այլն):

Հաստատված նախահաշվով 2018 թվականի ընդամենը ծախսերը նախատեսվել են 4,429,800.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 3,103,415.2 հազ. դրամ, այդ թվում՝

- «աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով ծախսերը նախատեսվել են 2,596,000.0 հազ. դրամի չափով (ընդհանուր ծախսերի 58.6%-ը), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 1,970,802.2 հազ. դրամ,
- «մաշվածություն և ամորտիզացիա» հոդվածով ծախսերը նախատեսվել են 701,800.0 հազ. դրամի չափով (ընդհանուր ծախսերի 15.8%-ը), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 494,662.3 հազ. դրամ,
- գործուղման ծախսերը նախատեսվել են 135,500.0 հազ. դրամ (3.1%), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 97,753.4 հազ. դրամ,
- Եվրոկոնտրոլի անդամավճարների գծով ծախսերը նախատեսվել են 145,400.0 հազ. դրամ (3.3%), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 110,769.8 հազ. դրամ,
- կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը նախատեսվել են 105,600.0 հազ. դրամ (2.4%), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 39,940.9 հազ. դրամ,
- բուժսպասարկման ծախսերը նախատեսվել են 55,000.0 հազ. դրամ (1.2%), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 31,858.5 հազ. դրամ և այլն:

Ստուգման ընթացքում ուսումնասիրվել են Ընկերության գնումների վերաբերյալ ներկայացված՝ ըստ տարիների գնումների պլանները, առանձին ծախսային հոդվածներով կատարված ծախսերի մասով կնքված պայմանագրերը, գնման առարկաների ընտրության հիմնավորումները և այլ տեղեկատվություններ: Ելնելով գնումների ծավալներից և

առանձնահատկություններից, գնումների գործընթացները համապարփակ ուսումնասիրության չեն ընդգրկվել՝ հետագայում այն իրականացնելու նպատակով:

«ԱՎԻԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն (այդ թվում՝ միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման ծառայություններ) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Ընկերության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակներն են՝

- միջին մասնագիտական կրթության ոլորտում թռիչքային անձնակազմի, օդային երթևեկության սպասարկման, օդային փոխադրումների ծառայության աշխատակիցների և ավիացիոն այլ մասնագետների՝ ավիատեխնիկների, բորտուղեկցորդների սկզբնական պատրաստում.
- ձեռնարկությունների և գերատեսչությունների թռիչքային, դիսպետչերական ու ինժեներական անձնակազմի վերապատրաստում այլ ավիացիոն տեխնիկայի համար.
- ավիացիայի ողջ անձնակազմի սահմանված կարգով որակավորում.
- մեթոդական և գործնական ծառայությունների մատուցում ավիաընկերություններին, հիմնարկներին, կազմակերպություններին և ֆիզիկական անձանց՝ ավիացիոն անձնակազմի տեսական պատրաստումը կազմակերպելու և անցկացնելու գործում.
- գործունեության հիմնական տեսակին համապատասխան վճարովի մի շարք ծառայությունների մատուցում.
- միջնորդային գործունեության իրականացում և այլն:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 35, 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 33, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 35 մարդ: 2017 թվականին ժամանակավոր աշխատանքային պայմանագրով դասախոսների թիվը կազմել է 11 մարդ, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 11 մարդ, որոնցից 6-ն այլ կազմակերպություններում աշխատողներն են:

Ընկերության ֆինանսական ցուցանիշները

Ընկերության եկամուտների աղբյուրները և ծախսերի ցուցանիշները ձևավորվում են երեք հիմնական ուղղություններից՝ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներ, օդաչու-սովորողների թռիչքային ծախսեր և հատուկ չվերթերի ծառայությունների ծախսեր:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Ընկերության 2017 թվականի ընդամենը ծախսերը կազմել են 748,161.4 հազ. դրամ (այդ թվում՝ Ընկերության ծախսերը՝ 57,817.2 հազ. դրամ, օդաչու-սովորողների թռիչքային ծախսերը՝ 137,206.9 հազ. դրամ, հատուկ չվերթերի ծառայությունների ծախսերը՝ 553,122.8 հազ. դրամ և փոխարժեքային տարբերությունից ծախսերը՝ 14.5 հազ. դրամ):

2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Ընկերության ընդամենը ծախսերը կազմել են 534,007.5 հազ. դրամ (այդ թվում՝ Ընկերության ծախսերը՝ 45,426.3 հազ. դրամ, օդաչու-սովորողների թռիչքային ծախսերը՝ 80,360.1 հազ. դրամ և հատուկ չվերթերի ծառայությունների ծախսերը՝ 408,221.1 հազ. դրամ):

2017 թվականին Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ընդամենը համախառն եկամուտը նախատեսվել է 66,628.8 հազ. դրամ, փաստացի եկամուտը կազմել է 68,375.3 հազ. դրամ, այդ թվում՝

- որակավորման բարձրացման և վերապատրաստման ծառայությունների մատուցումից հասույթը՝ 31,912.7 հազ. դրամ,
- վճարովի ուսուցումից եկամուտները՝ 5,625.0 հազ. դրամ,
- ՀՀ պետական բյուջեից հատկացումները՝ 27,805.5 հազ. դրամ,
- թռիչքային ծախսերի շահութաբերություն՝ (մեկ տոկոս) 1,372.0 հազ. դրամ,
- այլ եկամուտներ՝ 1,205.0 հազ. դրամ և այլն:

Ընդամենը համախառն եկամտից նվազեցումները (ծախսերը) տարեկան նախահաշվով նախատեսվել են 64,808.7 հազ. դրամի չափով, փաստացի ծախսերը կազմել են 57,817.2 հազ. դրամ, կամ նախատեսվածի 89.2 %-ը:

Փաստացի ծախսերի կազմում շահագործական ծախսերը կազմել են 56,335.8 հազ. դրամ (փաստացի ծախսերի 97.4 %), այդ թվում՝

- աշխատավարձ և հատուցումներ եկամտային հարկի գծով՝ 45,267.5 հազ. դրամ (ընդհանուր ծախսերի 78.3%),
- հիմնական միջոցների մաշվածք՝ 1,650.7 հազ. դրամ (2.9 %),
- կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսեր՝ 1,192.0 հազ. դրամ (2.1%),
- վառելիքի ծախսեր՝ 1,122.2 հազ. դրամ (1.9 %),
- կրթաթոշակի գծով ծախսեր՝ 1,786.0 հազ. դրամ (3.1 %) և այլն:

Այլ ոչ գործառնական ծախսեր (անհատույց տրված ակտիվներ)՝ 1,481.4 հազ. դրամ (2.6%):

Ընդամենը զուտ շահույթը մինչև շահութահարկի ծախսի գծով նվազեցումը կազմել է 10,558.1 հազ. դրամ, իսկ նվազեցումից հետո՝ 8,182.1 հազ. դրամ: Հաշվետու տարվա շահութաբաժնի հաշվարկային գումարը կազմել է 4,831.7 հազ. դրամ (ներառյալ՝ տվյալ տարում նախօրոք օգտագործված գումարը), որը բաշխվել է հետևյալ կերպ՝ 60 %-ը, կամ 2,899.0 հազ. դրամը հատկացվել է ՔԱԳՎ-ին, իսկ 40 %-ը, կամ 1,932.7 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջե:

Միաժամանակ, օդաչու սովորողների թռիչքային ծախսերը (փաստացի) կազմել են 137,206.9 հազ. դրամ, իսկ հատուկ չվերթերի ծառայությունների ծախսերը՝ 553,122.8 հազ. դրամ:

2018 թվականին Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ծախսերի նախահաշվի համաձայն՝ ընդամենը համախառն եկամուտը նախատեսվել է 61,046.8 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդամենը համախառն եկամուտը կազմել է 65,496.6 հազ. դրամ, այդ թվում՝

- որակավորման բարձրացման և վերապատրաստման ծառայությունների մատուցումից հասույթը նախատեսվել է 39,149.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 45,856.8 հազ. դրամ,
- վճարովի ուսուցումից եկամուտները նախատեսվել են 3,796.9 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 2,000.0 հազ. դրամ,
- ՀՀ պետական բյուջեից հատկացումները՝ 17,110.3 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 16,844.2 հազ. դրամ,
- բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ 990.6 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 795.6 հազ. դրամ:

Հաստատված նախահաշվով 2018 թվականի ընդամենը ծախսերը նախատեսվել են 51,559.5 հազ. դրամի չափով, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 45,426.3 հազ. դրամ: Փաստացի ծախսերի կազմում շահագործական ծախսերը

նախատեսվել են 50,354.5 հազ. դրամ (փաստացի ծախսերի 97.7 %-ը), 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ փաստացի ծախսը կազմել է 44,235.3 հազ. դրամ այդ թվում՝

- աշխատավարձ և հատուցումներ եկամտային հարկի գծով ծախսերը նախատեսվել են 38,409.5 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 36,179.1 հազ. դրամ,
- հիմնական միջոցների մաշվածքի գծով ծախսերը նախատեսվել են 1,750.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 1,325.6 հազ. դրամ,
- կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը նախատեսվել են 2,500.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 1,371.4 հազ. դրամ,
- վառելիքի ծախսերը նախատեսվել են 1,050.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 932.1 հազ. դրամ,
- կրթաթոշակի գծով ծախսեր՝ 1,282.5 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 874.0 հազ. դրամ, և այլն:

Այլ ոչ գործառնական ծախսերը (անհատույց տրված ակտիվներ) նախատեսվել են 1,205.0 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 1,191.0 հազ. դրամ:

2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ օդաչու-սովորողների փաստացի թռիչքային ծախսերը կազմել են 80,360.1 հազ. դրամ, իսկ հատուկ չվերթերի ծառայությունների ծախսերը՝ 408,221.1 հազ. դրամ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության վերաբերյալ

1. ՔԱԳՎ-ի կողմից ավտոմեքենաների երթուղային թերթերում վառելիքի հաշվառումը կատարվել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի, իսկ վառելիքի ծախսում ներառվել են նաև շաբաթ և կիրակի օրվա ծախսերն՝ առանց դրանք որպես աշխատանքային օր համարելու վերաբերյալ հրամաններ արձակելու: Արդյունքում, այդ օրերի համար դուրս գրված վառելիքի քանակը (2017 թվականին՝ 3776 լիտր և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 2636 լիտր) որակվում է որպես փաստաթղթերով չհիմնավորված, իսկ գումարն՝ ավելի կատարված ծախս: Բացի այդ, երկու ավտոմեքենայի ցուցիչները 13046կմ-ով գերազանցել են երթուղային թերթում նշված տվյալները:

2. ՔԱԳՎ-ի գնումների պլանում միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ բացակայում են շուկայական գների փաստաթղթավորված վերլուծական հիմնավորումները: Օդորակիչների գնման գործընթացում գնման առարկայի հատկանիշները չեն համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջին, մեկ այլ դեպքում ինքնությունը հաստատող քարտեր տպագրող մեքենայի համար նախատեսվել է ծրագրային ապահովման գնում՝ առանց հստակ և բազմակողմանիորեն նկարագրելու դրա նշանակությունը, ավտոմատային հեռախոսային կայանների համակարգեր ձեռք բերելու համար նախատեսվել է 16,000.0 հազ. դրամ, այն դեպքում, երբ ինտերնետային կայքերում զետեղված տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող վաճառքի առավելագույն գներն՝ արտահայտված ԱՄՆ դոլարին և ՌԴ ռուբլուն համարժեք ՀՀ դրամի փախարժեքով, կազմել են շուրջ 6,091.9 հազ. դրամ, իսկ ԱԱՀ-ով՝ 7,310.2 հազ. դրամ:

3. ՔԱԳՎ-ի վարչական շենքի աշխատասենյակների և տանիքի վերանորոգման աշխատանքների նախահաշվային ցուցանիշները հաշվարկելիս չեն ուսումնասիրվել կատարվելիք աշխատանքի իրական ծավալները և քանակը, դրանք չեն ճշգրտվել նաև փորձաքննության ժամանակ՝ հանգեցնելով

նախահաշվային արժեքի 1,474.75 հազ. դրամով ավելացմանը: Միաժամանակ, պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվել են թերի:

Արդյունքում, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից չի պահպանվել կապարողականի հաշվեքննության տնտեսման սկզբունքը:

4. ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման գործընթացներում թույլ են տրվել տարաբնույթ թերություններ և գործող օրենսդրությունից շեղումներ՝ հայտերի ոչ հիմնավոր մերժման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման և տեսչական ստուգումների կատարման հետ կապված գործողումների ձևակերպումների ժամանակ գործընթացների հերթականության չպահպանման, օդանավերի պետական ռեգիստրի վարման վերաբերյալ «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ՔԱԳՎ-ի պետի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 192-Ն հրամանով հաստատված՝ «ՀՀ օդանավերի պետական գրանցման, օդանավերի պետական ռեգիստրի վարման ու թռիչքային պիտանիության սերտիֆիկատների տրման և օտարերկրյա թռիչքային պիտանիության սերտիֆիկատների ճանաչման» կարգի 6-րդ կետի և 6-րդ կետի բ) ենթակետի, 3-րդ կետի, 29-րդ կետի ե) ենթակետի պահանջների չկատարման դեպքեր:

5. Առանձին դեպքերում չի ապահովվել նաև ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայականի տրման գործընթացում «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 963-Ն որոշմամբ հաստատված՝ «Օդանավ շահագործողի վկայական տալու» կարգի 10-րդ կետի 8-րդ ենթակետով, 11-րդ կետի 2-րդ ենթակետով, 39-րդ կետի 5-րդ ենթակետով, 41-րդ կետով սահմանված պահանջների կատարումը: Իսկ մի շարք հարցեր դեռևս կանոնակարգված և հստակեցված չեն՝ հանգեցնելով գործառույթների իրականացման ընթացքում տարընթերցումների առաջացմանը և խտրական մոտեցման դրսևորմանը:

6. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն չունի օրենսդրությամբ ամրագրված իրավասություն ՀՀ-ում գրանցված և այլ երկրներում բազավորված օդանավերի ու դրանց կողմից իրականացվող գործունեության ուղղությունների և ստացվող եկամուտների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

7. ՔԱԳՎ-ի կողմից մշակված և ընդունված չէ հատուկ պաշտպանվածություն պահանջող բլանկների շրջանառությունը կարգավորող որևէ իրավական ակտ, չի իրականացվում դրանց նկատմամբ վերահսկողություն, բլանկների հաշվառման գործառույթներն ամրակցված չեն և ոչ մի ստորաբաժանմանը, որի

արդյունքում 369 հատուկ պաշտպանվածություն պահանջող բլանկ բացակայում է:

8. Հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի բաժնի աուդիտի առաջադրանքներում կատարվել են փոփոխություններ և պլանավորված ուսումնասիրությունների քանակի նվազեցում, չնայած դրան՝ նախատեսված ուսումնասիրությունները թերի են իրականացվել:

9. Աշխատակիցներին պարգևատելու վերաբերյալ հրամանները չեն պարունակել չափանիշներ և կատարված աշխատանքների արդյունքների գնահատականներ, որոնք թույլ կտան գնահատել պարգևատրման ենթակա պաշտոնատար անձանց (հանրային ծառայողների) ընտրությունը, նրանց պարգևատրման հիմքերը և չափերը: 2017 թվականին ՔԱԳՎ-ի պետը՝ շրջանցելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջն, իր արձակած հրամաններով իրեն պարգևատրել է 2,683.0 հազ. դրամի չափով: Որոշ աշխատակիցներ՝ չունենալով ՔԱԳՎ-ում բավարար աշխատանքային ստաժ, առանց հիմանվորման, պարգևատրվել են 5,371.0 հազ. դրամի չափով, իսկ որոշները՝ չհանդիսանալով քաղաքացիական ծառայող, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի շրջանցմամբ, պարգևատրվել են:

10. ՀՀ տարածքում աշխատողների ներքին և օտարերկրյա պետություններ գործուղումների ձևակերպման, վճարումների կատարման գործում չի ապահովվել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Ընդհանուր դրույթներ» գլխի 9-րդ և 10-րդ կետի պահանջների կատարումը:

11. Թերություններով է կատարվել ներկայացուցչական ծախսերի ձևակերպումը՝ ըստ ներկայացված փաստաթղթերի, հյուրասիրության նպատակով ապրանքները ձեռք են բերվել պատվիրակության մեկնելուց հետո կամ հաշիվ-ապրանքագրով ծառայության մատուցումն իրականացվել է հյուրասիրության ավարտից հետո:

12. ՔԱԳՎ-ի կողմից պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել ֆինանասական հոսքերի կառավարման, ոլորտի զարգացմանը և կանոնադրական նպատակների լիարժեք իրականացմանն ուղղված եկամուտների ավելացման ուղղությամբ՝ թռիչքային անձնակազմի անդամներին վկայականների տրամադրման, դրանց գործողության ժամկետի երկարձգման, օտարերկրյա ավիացիոն իշխանությունների կողմից թռիչքային անձնակազմի անդամներին տրված

վկայականների ճանաչման գործառույթների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ վճարումներ չեն նախատեսվել, ինչը տնտեսական նպատակահարմարության և շահավետության տեսանկյունից չունի խելամիտ և բավարար հիմնավորվածություն: Թռիչքային անվտանգության վերահսկման, ստուգումների օրինականության և արդյունավետության բարձրացման նպատակով չեն մշակվել մեխանիզմներ՝ ավիաընկերությունների միջոցների հաշվին գործուղումների վերաբերյալ հաշվետվողականության օրինականության ապահովման համար:

13. Վճարներ չեն նախատեսվել նաև ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի, ինչպես նաև ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայականի տրման համար:

Արդյունքում, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից չի պահպանվել կատարողականի հաշվեքննության նպատակային արդյունավետության սկզբունքը:

«Հայէրոնավիագացիա» ՓԲԸ-ի վերաբերյալ

1. Չի ապահովվել Ընկերության կանոնադրության 8.3.9. կետի պահանջը՝ երեք ամսվա պարբերականության փոխարեն 2017 թվականի ընթացքում գումարվել է խորհրդի երկու նիստ, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ խորհրդի նիստեր ընդհանրապես չեն գումարվել:

2. Չի պահպանվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ ընկերության ժողովի որոշմամբ խորհրդի ոչ գործադիր և անկախ անդամների համար սահմանվել է աշխատանքի վարձատրություն, որից բացի հաշվարկվել և նրանց վճարվել է նաև լրավճար և պարգևատրման գումար՝ օրենքով նախատեսված պարգևավճարի և (կամ) պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցման փոխարեն:

3. Ընկերությունում համատեղության կարգով աշխատել են 36 աշխատակից, այդ թվում՝ ՔԱԳՎ-ի 5 աշխատակիցներ, որոնցից մեկը ԱևԳԿՏ տրանսպորտի բաժնում, երկուականը՝ ԱևԳԿՏ կադրերի կառավարման և ընդհանուր բաժնում: 5 աշխատակիցներից 4-ը փաստացի աշխատած ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկագրում կատարված նշումներով աշխատել են ժամը 18^{00}-ից

հետո, իսկ նրանցից 2-ը՝ գտնվելով վերապատրաստման և գործուղման մեջ, այդ օրերի համար Ընկերությունից բացակայելու պայմաններում վարձատրվել են 4-ժամյա աշխատաժամանակի դիմաց: Մեկ աշխատակից ձևակերպվել է 0.5 դրույքով որպես լիցքավորող, մինչդեռ Ընկերությունում ավտոմեքենաների վառելիքը հատկացվում է կտրոններով:

4. Ընկերության կողմից ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին պակաս է փոխանցվել 13,164.4 հազ. դրամի չափով շահութաբաժնի գումար:

5. Ընկերության և «Ավիաբուժ» ԲԿ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով վերջինս մատուցել է պարտադիր բուժստուգումների անցկացման ծառայություններ, որի շրջանակներում նախատեսված ռեկրեացիոն ծառայությունների ցանկի ոչ հստակ ձևակերպման հետևանքով, առկա չեն դրանց կատարման հսկողական մեխանիզմները:

6. «Ներկայացուցչական ծախսեր» հոդվածով կատարված ծախսերից 532.9 հազ. դրամի ծախսը (2017 թվականին 413.7 հազ. դրամ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 119.2 հազ. դրամ) փաստաթղթերով չի հիմնավորվել և, թեև շահութաբաժնի հաշվարկման ժամանակ զուտ շահույթի որոշման ընթացքում դրանք չեն ներառվել նվազեցվող ծախսերի գումարի մեջ, այդուհանդերձ՝ առանց հիմնավորող փաստաթղթերի այդ ծախսերը ենթակա չէին վճարման:

7. Ընկերության վառելիքի ծախսի վերաբերյալ երթուղային թերթիկները չեն համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016 թվականի թիվ 37-Ն հրամանի ձև Ծխ-6 և Ծխ-7 ձևաչափերին, դրանցում մեքենաների երթուղին լրացված է ըստ օրերի, իսկ մեքենայի վազքն՝ ամբողջական, ինչը անվերահսկելի է դարձնում ընդհանուր օրական վազքի ցուցանիշների ճշտության գնահատումը:

Արդյունքում, «Հայաէրոնավիագացիա» ՓԲԸ-ի կողմից չի պահպանվել կատարողականի հաշվեքննության նպատակային արդյունավետության սկզբունքը:

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի վերաբերյալ

1. Ընկերության տնօրենի 29.12.2017թ. հաստատված 2018 թվականին նախնական պատրաստման դասընթացների պլան-գրաֆիկով նախատեսվել է 6 օդաչու-ուսանողների համար 501 ժամ 50 րոպե ուսումնավարժանքային թռիչքների իրականացում, որից 300 ժամը առաջին կիսամյակում, իսկ 201 ժամ 50 րոպեն՝

երկրորդ կիսամյակում: Առաջին կիսամյակում նախատեսված 300 թռիչքային ժամ ուսումնավարժանքային թռիչքների իրականացումը կատարվել է ժամկետների խախտմամբ՝ այն երկարաձգվել է մինչև 2018 թվականի սեպտեմբեր ամիսը՝ ներառյալ, իսկ երկրորդ կիսամյակում նախատեսված 201 ժամ 50 րոպե թռիչքային ժամն ընդանրապես չի իրականացվել, որի արդյունքում ուսանողները համարվել են կուրսը չավարտած և ավարտական վկայական չեն ստացել: Նշված օդաչու-ուսանողների ուսուցման ծախսերը կազմել են 267,148.5 հազ դրամ:

Արդյունքում, «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից չի պահպանվել կապարողականի հաշվեքննության նպատակային արդյունավետության սկզբունքը:

2. Ավտոմեքենայի երթուղային թերթերում վազքի հաշվառումը կատարվել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի, որի պարագայում երթուղային թերթիկներում կիլոմետրով արտահայտված ընդհանուր վազքի ցուցանիշների ճշտությունը հնարավոր չէր գնահատել: Վառելիքի ծախսը հաշվարկելիս ներառվել են նաև շաբաթ, կիրակի և տոն օրերի ծախսերը: Նշված օրերի համար դուրս գրված վառելիքի քանակը կազմում է 2017 թվականին 913 լիտր՝ 360.0 հազ. դրամ և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 753 լիտր՝ 292.0 հազ. դրամ գումարով: Ավտոմեքենայի ցուցիչի և երթուղային թերթում նշված ցուցմունքի տվյալների մեջ կան էական տարբերություններ:

3. Համաձայն մաքսային հայտարարագրի՝ Diamond DA 40 ինքնաթիռի ձեռք բերման արժեքը կազմել է 86,217.3 հազ. դրամ, կամ օդանավի վարձակալության նպատակով ծախսված գումարը գրեթե 7 անգամ գերազանցել է այդ օդանավի ձեռք բերման արժեքը:

Արդյունքում, «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից չի պահպանվել կապարողականի հաշվեքննության տնտեսման սկզբունքը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարությանը

Քննարկել թռիչքային անձնակազմի անդամներին վկայականների տրամադրման, դրանց գործողության ժամկետի երկարձգման, օտարերկրյա ավիացիոն իշխանությունների կողմից թռիչքային անձնակազմի անդամներին տրված վկայականների ճանաչման, ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի, ինչպես նաև ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայականի տրման դիմաց վճարների (պետական տուրքի) գանձման նպատակահարմարության հարցը՝ նպատակ ունենալով ավելացնել պետական բյուջեի մուտքերը:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին

1. Իրականացնել արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվող ծախսերի արդյունավետ պլանավորում՝ հետագայում դրանց տնտեսումը և նպատակային օգտագործումն ապահովելու համար: Ծախսերը պլանավորելիս հաշվի առնել ձեռք բերվող աշխատանքների, ապրանքների և ծառայությունների իրական պահանջարկը և նախորդ տարիներին կատարված փաստացի ծրագրային ծախսերը:

2. Տնօրենի և աշխատողների պարգևատրման ժամանակ բացառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, ինչպես նաև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների չկատարման դեպքերը: Վճարման կարգը սահմանել այնպես, որ պարգևատրումները կատարվեն աշխատանքների դիմաց՝ ավելի ծախսված գումարներից խուսափելու համար:

3. Գործուղման ծախսերի ձևակերպման, հաշվարկման և վճարումների կատարման ընթացքում խստորեն պահպանել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջները:

4. Ապահովել ներկայացուցչական ծախսերի կատար-

ման նպատակայնությունն ու ձևակերպումների հիմնավորվածությունը:

5. Ծառայողական մեքենաների երթուղային թերթիկները լրացնել ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. թիվ 37-Ն հրամանով հաստատված ԾԽ-6 ձևին համապատասխան, շաբաթ-կիրակի և տոն օրերին կատարված վառելիքի ծախսը հաշվարկել և դուրս գրել միայն այդ օրերը որպես աշխատանքային համարելու վերաբերյալ ՔԱԿ-ի տնօրենի կողմից արձակված հրամանների հիման վրա՝ չհիմնավորված ծախսերը բացառելու նպատակով:

6. Հաշվի առնելով միջազգային փորձն, ինչպես նաև ոլորտի զարգացմանը և կանոնադրական նպատակների լիարժեք իրականացմանն ուղղված եկամուտների ավելացման անհրաժեշտությունը՝ նախաձեռնել թռիչքային անձնակազմի անդամներին վկայականների տրամադրման, դրանց գործողության ժամկետի երկարձգման, օտարերկրյա ավիացիոն իշխանությունների կողմից թռիչքային անձնակազմի անդամներին տրված վկայականների ճանաչման, ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի, ինչպես նաև ՀՀ-ում օդանավ շահագործողի վկայականի տրման դիմաց վճարների (պետական տուրքի) գանձման մեխանիզմների մշակման և ներդրման գործընթացը:

7. Քննության առնել ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրման գործընթացներում թույլ տրված տարաբնույթ թերությունները և գործող օրենսդրությունից շեղումները պայմանավորող պատճառները, մշակել կոնկրետ միջոցառումներ դրանց, ինչպես նաև չկանոնակարգված գործառույթների և հարցերի վերացման ուղղությամբ:

8. Մշակել և ներդնել հսկողական մեխանիզմներ՝ ՀՀ-ում գրանցված և այլ երկրներում բազավորված օդանավերի և դրանց կողմից իրականացվող գործունեության ուղղությունների և ստացվող եկամուտների նկատմամբ՝ ավիաընկերությունների ներգրավվածությունն ապօրինի գործունեության մեջ բացառելու և նրանց

իրական եկամուտները հայտարարագրելու նպատակով:

9. Մշակել և ընդունել հատուկ պաշտպանություն պահանջող բլանկների շրջանառությունը կարգավորող իրավական ակտ (հրաման), սահմանել խիստ հսկողության դրանց նկատմամբ:

10. Միջոցներ ձեռնարկել գնումների գործընթացում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ՝ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային և տնտեսվար օգտագործումն ապահովելու նպատակով:

11. Խստացնել հսկողությունը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող աշխատանքների և ծառայությունների՝ կնքված պայմանագրերով նախատեսված ծավալների նախագծման և ամբողջական կատարման նկատմամբ:

12. Բարձրացնել ներքին աուդիտի բաժնի գործունեության արդյունավետությունը պլանավորված ուսումնասիրությունների արդյունքների մակարդակի, պետական միջոցների օգտագործման, գնումների գործընթացի օրինականության ապահովման գործում:

«Հայաէրոնավիագացիա» ՓԲԸ-ի խորհրդին

1. Ապահովել խորհրդի նիստերի գումարման հաճախականության վերաբերյալ Ընկերության կանոնադրության 8.3.9 կետի կատարումը:

2. Վերանայել և հստակեցնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ կետից բխող՝ խորհրդի անդամներին վճարվող գումարների հաշվարկման ու վճարման հիմքում ընկած խորհրդի որոշումներով սահմանված հասանելիք վճարումների անվանացանկը:

3. Աշխատակիցների աշխատավարձերը հաշվարկել և վճարել համաձայն փաստացի կատարված աշխատանքների, իսկ նրանց հաճախելիությունը հաշվարկել և ճշգրտորեն արտացոլել աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում:

4. Միջոցներ ձեռնարկել Ընկերության կողմից ՔԱԳՎ-ի արտաբյուջետային հաշվին 13,164.4 հազ. դրամի չափով

գումարը փոխանցելու ուղղությամբ:

5. Վերանայել Ընկերության և «Ավիաբուժ» ԲԿ ՓԲԸ-ի միջև բուժստուգումների անցկացման ծառայությունների մասով կնքված պայմանագրի շրջանակներում մատուցվող ռեկրեացիոն ծառայությունների ցանկը՝ հստակորեն ամրագրելով դրանց գնագոյացման հիմքերը: Խստորեն վերահսկել ռեկրեացիոն ծառայությունների ամբողջական իրականացումը՝ այդ մասին տեղեկատվությունն արտացոլելով վճարման նպատակով ներկայացվող կատարողական ակտերում:

6. Խստացնել հսկողությունը ներկայացուցչական ծախսերի վճարման և ձևակերպման նկատմամբ՝ բացառելով առանց հիմնավորող փաստաթղթերի այդ ծախսերի դիմաց վճարումների կատարումը:

7. Համապատասխանեցնել շահագործվող ավտոմեքենաների վառելիքի ծախսի վերաբերյալ երթուղային թերթիկները ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016 թվականի թիվ 37-Ն հրամանի ձև Ծխ-6 և Ծխ-7 ձևաչափերին, վերացնել արձանագրված թերություններն՝ ուղղված ավտոմեքենաների օրական վազքի հաշվառմանը և վերահսկելիության ապահովմանը:

8. Ապահովել գործուղումների կազմակերպման, վճարման և ձևակերպման գործընթացների համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.02.2005 թվականի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված պահանջներին:

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին

1. Միջոցներ ձեռնարկել ծրագրից՝ 501 ժամ 50 րոպեից չավարտված 201 ժամ 50 րոպե ուսումնավարժանքային թռիչքային ժամն ավարտին հասցնելու և 6 օդաչու-ուսանողներին վկայական տալու ուղղությամբ:

2. Ընկերության վառելիքի ծախսը հաշվարկելիս մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթիկները լրացնել ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016 թվականի թիվ 37-Ն հրամանի ձև Ծխ-6 ձևաչափով: Վառելիքի ծախսը հաշվարկելիս երթուղային թերթերում հաշվարկներն իրականացնել մեքենայի փաստացի կատարված օրական վազքով՝ ըստ շահագործվող

մեքենայի ցուցիչի տվյալների:

3. Ապահովել ՔԱԳՎ-ի, «Ավիաուսումնական կենտրոն» և «Արմենիա» Էյրվեյզ ավիաընկերություն» ՓԲԸ-ների հետ 14.12.2016 թվականին աուդիտորական վերջնական հաշվետվության հիման վրա կազմված ժամանակացույցով նախատեսված՝ «Արմենիա էյրվեյզ» ՓԲԸ-ից 4,466.0 հազ. դրամի չափով գումարի գանձումը:

4. Հետագայում, օդաչու-ուսանողների ուսումնավար-ժանքային թռիչքներ իրականացնելու դեպքում, քննարկել օդանավի ձեռք բերման նպատակահարմարությունը կամ ավելի էժան գներով օդանավի վարձակալության հնարավորությունները:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն եզրակացությունն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հաշվեքննության օբյեկտի ղեկավարները Հաշվեքննիչ պալատին տրամադրում են ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասով

1. Արձանագրության Ընդհանուր մասի առաջին հատվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՔԱԳՎ-ն «Ավիացիայի մասին» օրենքով և վերոնշյալ Որոշմամբ հաստատված կանոնադրությամբ իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

- ներքին և միջազգային օդային հաղորդակցությունների իրավունքների և այդ իրավունքներին վերաբերող միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող միջազգային պայմանագրերի նախապատրաստում, քննարկում, բանակցությունների վարում.
- առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրեր և թույլտվությունների տրամադրում՝ ավիացիայի համակարգում առևտրային գործունեություն իրականացնելու համար.
- քաղաքացիական ավիացիայի գործունեության սահմանում, ներառյալ՝ օդանավակայանային գործունեության և աերոնավիգացիոն սպասարկման, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների թռիչքային ու ավիացիոն անվտանգության պահանջները, կանոնակարգումը և վերահսկողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով.
- քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող անձանց, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ու դրանց որակի, թռիչքային և ավիացիոն անվտանգության նկատմամբ վերահսկողության իրականացում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԻԿԱՕ-ի և Հայաստանի Հանրապետության անդամակցած միջազգային այլ կազմակերպությունների ապահովության և անվտանգության գործող պահանջներին դրանց շարունակական համապատասխանությունն ապահովելու նպատակով.
- ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, վկայականների և թույլտվությունների տրամադրում.
- Հայաստանի Հանրապետության տարածք թռիչքներ իրականացնող այլ պետությունների օդանավերի ստուգումների իրականացում.
- ավիացիոն մասնագետներին (թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական, օդային երթևեկության կարգավարների կազմին) վկայականների տրամադրում, երկարաձգում, կասեցում, դրանց գործողության ժամկետների դադարեցում.
- վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներն իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումների սպասարկումն իրականացնող կազմակերպություններին թույլտվությունների տրամադրում:»:

2. Արձանագրության «Անհամապատասխանության վերաբերյալ գրառումներ» մասի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝

1) ՄԱՍ II <<Անհամապատասխանության վերաբերյալ գրառումներ>> բաժնի 1-ին կետի <<Բյուջետային ծախսերի վերաբերյալ>> ենթաբաժնի առաջին պարբերության վերաբերյալ հայտնում ենք, որ ֆինանսավորման և փաստացի կատարված ծախսի տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծախսվել են նաև հիմնարկի կարիքների համար պահեստավորված միջոցներից /Ձև4 Հաշվետվություն <<Հիմնարկների դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահստավորված միջոցների մասին>> 31.12.2017թ/

2) ՄԱՍ II <<Անհամապատասխանության վերաբերյալ գրառումներ>> բաժնի 3-րդ կետում արձանագրված ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց պարգևատրման գործընթացների վերաբերյալ հայտնում ենք, որ աշխատողները պարգևատրվել են կատարված աշխատանքների համար՝ անկախ նրանից, թե քանի օր են աշխատել և արդյունքում ոչ մի իրավական ակտ չի խախտվել:

Այդուհանդերձ, նոր աշխատակիցների գծով պարգևատրման նախկին մոտեցումները Կոմիտեի ղեկավարության կողմից վերանայվել են և հետագայում նոր մոտեցումներ հաշվի կառնվեն այդպիսի դեպքերի համար:

3) ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի <<Ընդհանուր դրույթներ>> գլխի 9-րդ կետի պահանջի վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում ենք, որ 2017 թվականին բյուջետային ծախսերի իրականացման համար 422100 տնտեսագիտական հոդվածով հատկացվել է 294.6 հազար դրամ, որից 1-ին եռամսյակի համար կատարվել է 29.5 հազար դրամ հատկացում, որը բավարար չի եղել կատարված գործուղումների ծախսերի վճարման համար, ուստի հատկացված միջոցների անբավարարության դեպքում անհրաժեշտություն է առաջացել վճարումները կատարել արտաբյուջետային միջոցների հաշվից: Քանի որ 2017 թվականի և 2018 թվականի <<Արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման նախահաշիվները>> հաստատվել են համապատասխանաբար՝ 30.03.2017թ. թիվ 309-Ն որոշմամբ և 05.04.2018թ. թիվ 368-Ն որոշմամբ, ապա 24.03.2017թ. թիվ 13-Ա, 29.03.2017թ. թիվ 90-Ա, 19.02.2018թ. թիվ 38-Ա, 23.02.2018թ. թիվ 15-Ա, 04.04.2018թ. թիվ 103-Ա հրամաններով կատարված գործուղումների համար վճարումները հնարավոր չէր իրականացնել գործուղում մեկնելուց մեկ օր առաջ:

4) 31.05.17թ. թիվ 58-Ա, 31.05.17թ. թիվ 57-Ա, 12.07.17թ. թիվ 192-Ա, 27.07.17թ. թիվ 88-Ա, 06.10.17թ. թիվ 120-Ա, 23.11.17թ. թիվ 146-Ա, 13.11.17թ. թիվ 138-Ա, 25.06.18թ. թիվ 58-Ա, 27.03.18թ. թիվ 24-Ա, 13.03.18թ. թիվ 20-Ա հրամանների վերաբերյալ հայտնում ենք, որ վերը նշված գործուղումների վճարումները կատարվել են հրամանների ստացումից հետո (վճարումների ֆինանսավորումը պահանջում է որոշակի բանկային գործընթացի իրականացում, որը կատարվել է առավելագույնս արագ):

5) 29.03.17թ.թիվ 90-Ա հրամանով գործուղման վերաբերյալ հայտնում ենք, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպում, որի արդյունքում ավել է վճարվել 19,200 դրամ, որը հետ կպահվի աշխատակցից: Նույն հրամանով գործուղված աշխատակցին ապրիլի 1-ի համար վճարվել է օրապահիկ, որը չի խախտում ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման դրույթները (օրապահիկի համար ժամային կարգավորում նախատեսված չէ):

6) ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի <<Ընդհանուր դրույթներ>> գլխի 10-րդ կետի պահանջի վերաբերյալ հայտնում ենք, որ արձանագրված 114.0 հազար դրամ ավել վճարված գումարը ետ կգանձվի համապատասխան աշխատակիցներից:

7) Վառելիքի ծախսերի վերաբերյալ հայտնում ենք, որ հաշվարկները կատարվել են ամսական կտրվածքով ՔԱԳՎ պետի հրամանների հիման վրա:

   Այդուհանդերձ, 2018թ. Կոմիտեի ներքին աուդիտի կողմից իրականացված ուսումնասիրության հաշվետվության համաձայն առաջարկվել է վերանայել վառելիքի ծախսերի նորմաները, օպտիմալացման առումով վերանայել հաշվարկները և կատարել վազքի նվազեցում կոնկրետ առաջարկներով, որի իրականացման գործընթացը ներկայումս մեկնարկել է

8) Կատարված ներկայացուցչական ծախսերի վերաբերյալ արձանագրված թերությունները հիմնականում պայմանավորված են ներկայացված հաշիվ-ապրանքագրերում առկա թերություններով, ինչպես նաև հանձման-ընդունման արձանագրությունները ներկայացվել են ժամկետային խախտումներով, որից էլ բխում է հաշվապահական հաշվառման մի շարք գործընթացների ճիշտ կազմակերպման աշխատանքների անհնարինությունը:

3. Արձանագրության 5.2 գլխով ներկայացված ՀՀ-ում օդանավերի պետական գրանցման, ապագրանցման, թռիչքային պիտանիության սերտիֆիկատի տրամադրման վերաբերյալ հարցերի շուրջ հիմնավորումները և նյութերը կցվում են սույն գրությանը:

4. Արձանագրության Հատուկ պաշպանվածություն պահանջող՝ պետական նշանակության փաստաթղթերի շրջանառության վերաբերյալ մասի Բլանկների շրջանառության պարբերությունում կատարել փոփոխություններ՝ կապված.

1) Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության կողմից օգտագործված պետական նշանակության փաստաթղթերի հետ, հաշվի առնելով, որ վարչությունը ստացել է 14 հատ, որոնցից 5-ը վերադարձվել է 1-ին բաժին, 2-ը գտնվում են վարչությունում, իսկ 7-ը տրամադրվել են կազմակերպություններին, ինչի մասին վարչության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 2-ին հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձանց տրամադրվել է տեղեկանք.

2) Օդային փոխադրումների կարգավորման վարչության կողմից տարվում են աշխատանքներ նախկինում առաջին բաժնի կողմից օդային փոխադրումների կարգավորման վարչությանը տրամադրած և ետ չվերադարձրած 166 բլանկների հայտնաբերման ուղղությամբ:

Այսուհետ Կոմիտեի կողմից նախատեսվում է իրականացնել Հատուկ պաշպանվածություն պահանջող՝ պետական նշանակության փաստաթղթերի շրջանառության կանոնակարգում և խիստ վերահսկողություն:

5. Արձանագրության «Գնումների գործընթացի վերաբերյալ» գլխում ներկայացված հարցերի առնչությամբ հայտնում ենք, որ գործընթացի օրինականության ուսումնասիրության արդյունքում, ըստ էությամբ արձանագրվել է միայն գնումների մասին օրենքի 13-րդ կետի խախտման դեպքեր: Սակայն Կոմիտեի կողմից նշված խախտումն ընդունելի չի համարվում ելնելով այն հանգամանքից, որ տեխնիկական բնութագրերում հղում է կատարվել միայն այն դեպքերում երբ դժվարություններ են առաջացել կազմել պահանջվող գնման առարկայի բնութագրերը առանց հղում կատարելու ապրանքների մոդելներին: Նշված դեպքերում գնումների մասին օրենքի 13-րդ կետի պահանջներին համապատասխան բոլոր մրցույթների տեխնիկական բնութագրերում նշվել է «կամ համարժեք» բառակապակցությունը:

Անդրադառնալով արձանագրությունում նշված այն դատողություններին, ինչպիսիք են «գնումների պլանում միավորի կողմնորոշիչ գների վերաբերյալ բացակայում են շուկայական գների փաստաթղթավորված վերլուծական նյութեր» կամ «մրցույթի հիմքում բացակայում են մասնագիտական շուկայական գների հաշվարկ» և այլն, ապա պետք է նշել, որ նախ և առաջ գնումների գործընթացը կանոնակարգող որևէ փաստաթղթով առկա չէ նմանատիպ պահանջներ, ինչով էլ պայմանավորված փաստացի իրականացված վերլուծությունները չեն փաստաթղթավորվել: Միաժամանակ պետք է նշել, որ ֆինանսական ծախսերի պլանավորման գործընթացը իր մեջ արդեն իսկ ներառում է գների վերլուծությունների իրականացման գործընթացներ և անհնար է առանց որևիցե ուսումնասիրության և վերլուծության կազմել գնումների պլան: Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ կիրառված ձևակերպումները չեն համապատասխանում փաստացի կատարված աշխատանքներին, ինչպես նաև չեն բխում ոլորտը կանոնակարգող իրավական դաշտի պահանջներից:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ գնումների գործընթացի օրինականության ուսումնասիրության արդյունքներով չեն արձանագրվել որևիցե դեպք երբ մրցույթի հաղթող ճանաչվել է ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի պահանջների խախտմամբ: Ինչը վկայում է այն մասին, որ էլեկտրոնային համակարգով իրականացված գնումներին բոլոր պոտենցիալ մատակարարները ունեցել են հավասար պայմաններ և ազատ կարող էին մասնակցել ցանկացած մրցույթի և սահմանված կարգով նվազագույն գին ներկայացրած մասնակիցը ճանաչվեր հաղթող: Ուստի Կոմիտեն չի կարող երաշխավորել, այն հանգամանքը, որ յուրաքանչյուր անցկացված մրցույթի արդյունքում ձեռք բերված ապրանքի գինը նվազագույն է շուկայում կամ առնվազն լավագույն է: Ամփոփելով վերոգրյալը պետք է փաստել, որ յուրաքանչյուր մատակարար կազմակերպության հետ Կոմիտեն կնքել է համապատասխան պայմանագրեր բացառապես գործող օրենսդրության պահանջների սահմաններում, ինչը նաև փաստարկված է հաշվեքննություն իրականացնող հանձնաժողովի արձանագրությունում: Հետևաբար ներկայացնել այնպիսի դիտարկումներ, որ ձեռք բերված ապրանքներից համացանցում կարելի է գտնել առավել մատչելի գնով տեղին չէ, քանի դեռ գնումներ կազմակերպող պետական մարմինը օրենքով պարտավորված չէ շուկայում առկա ամենաէժան գին ներկայացնողին պարտադրի մասնակցել համապատասխան մրցույթին: Իսկ եթե դիտարկումն իրականացվել է այն տրամաբանությամբ թե գինը պլանավորվել է ի սկզբանե բարձր, ապա տվյալ դեպքում պետք է հաշվի առնել, որ ցանկացած տիպի ապրանքի գին շուկայում առաջարկվում են իրարից երբեմն պատիկներով տարբերվող արժեքով, ինչը ունի օբյեկտիվ և հիմնավոր պատճառներ: Տվյալ դեպքում Կոմիտեն գների պլանավորման համար ընտրել է որակական բարձր չափանիշներ

ունեցող ապրանքների շուկայական արժեքները և Կոմիտեն գործել է բացառապես ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ-ի մասով

1. Արձանագրության II բաժնի 2-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք,որ <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի համաձայն խորհուրդը ձևավորվում է բաժնետերերի ժողովի որոշմամբ և իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը: Նույն օրենքով սահմանվում է Ընկերության ժողովի, խորհրդի և գործադիր մարմնի (գործադիր տնօրենի) իրավասությունները: Գործադիր մարմինը (գործադիր տնօրենը) չունի իրավասություններ խորհրդի աշխատանքների կազմակերպման, հսկման ու գնահատման հարցում և պարտավոր է կատարել խորհրդի և ժողովի որոշումները:

Այսպիսով, Ընկերության խորհրդի անդամներին վճարումներ կատարելիս Ընկերությունը ղեկավարվել է <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի իա) կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով և 10.12.2012թ.-ի Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ, Ընկերության արտադրատնտեսական ցուցանիշների կատարողականի արդյունքներով:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ խորհրդի անդամներին կատարված վճարումները շահութաբաժնի հաշվարկման ժամանակ չեն ներառվել նվազեցվող ծախսերում:

2. Արձանագրության II բաժնի 3-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ երկու աշխատակիցների մասով աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրերում առկա են անհամապատասխանություններ, սակայն դրանց առաջացման պատճառները հնարավոր չէ պարզել, քանի որ նշված աշխատակիցների տեղեկագրերը կազմած անմիջական ղեկավարը մահացել է իսկ աշխատակիցներն ազատված են աշխատանքից: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ անհամապատասխանության հետևանքով ավել վճարած աշխատավարձը վերականգնելու նպատակով երկու նախկին աշխատակիցները ծանուցվել են (կից 2 թերթ):

Ինչ վերաբերվում է այն հարցին, թե վառելիքի հաշվառումը և բաշխումը կատարվում է կտրոններով, իսկ 21.02.2018թ.-ից մինչև 12.06.2018թ.-ը Ընկերությունում աշխատել է վառելիք լիցքավորող, հայտնում ենք, որ նշված աշխատանքի անհրաժեշտությունն առաջացել է կապված վառելիքի մատակարարի լցակայաններում վառելիքի լիցքավորման ճշտության ստուգման և հսկողության իրականացման հետ: Վերջինիս տրամադրվել են կտրոնները, որի կողմից տրանսպորտային միջոցները տարվել են լիցքավորման՝ մատակարարի լցակայանում:

3. Արձանագրության II բաժնի 4-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ Ընկերությունում կատարված ստուգման արդյունքում 12.10.2017թ. կազմված թիվ 44-Ա ակտով արձանագրված փաստերի վերաբերյալ ընկերությունը բողոքարկել ՀՀ կառավարություն, որի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարավել քննարկել բողոքը: 2017 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՀ ֆինանսների նախարարի գրությամբ ՀՀ կառավարությանը պատասխանվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը քննության առնելով նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից ՀՀ ԿԱ ՔԱԳՎ- <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ում կատարված ստուգման արդյունքում 12.10.2017թ. կազմված թիվ 44-Ա ակտով արձանագրված փաստերի վերաբերյալ կատարել է ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահաբաժնի գումարի վերահաշվարկ, որի արդյունքում <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահաբաժնի գումարը կազմել է 9,789.2 հազ. դրամ (նույն թվում 2014թ. արդյունքներով՝ 3,616.9 հազ. դրամ, 2015թ.՝ 3,113.4 հազ. դրամ, իսկ 2016թ.՝ 3,058.9 հազ. դրամ)՝ ներառյալ 1,012.9 հազ. դրամի տույժի գումարը: Նշված գրությունը կառավարությունից ուղղարկվել է ՀՀ ԿԱ ՔԱԳՎ, որն էլ վերջինիս կողմից ուղղվել է ընկերությանը:

Հայտնում ենք, որ գրությամբ առանձնացված չէ ՔԱԳՎ-ի անվամբ բացված հաշվին վճարվելիք գումարը և ընկերության կողմից ամբողջ գումարը փոխանցվել է ՀՀ պետական բյուջեի շահութաբաժնի համապատասխան հաշվին: ՔԱԳՎ-ի հաշվին առանց հիմնավոր փաստաթղթի գումար փոխանցելու դեպքում այն կարող էր դիտվել, որպես նվիրատվություն բաժնետիրոջը:

4. Արձանագրության II բաժնի 5-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ նշված աշխատակիցների աշխատանքը Ընկերությունում համարվում է հիմնական աշխատանք: Ընկերության բոլոր աշխատողները աշխատում են աշխատանքային պայմանագրերով սահմանված աշխատաժամանակով: Այլ կազմակերպություններում աշխատելու վերաբերյալ տեղեկատվություն չունենք:

5. Արձանագրության II բաժնի 6-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ <<Ավիաբուժ>> ԲԿ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերում ներառվել են դեռատիզացիոն և դեզինվեկցիոն ծառայությունները, հաշվի առնելով որ <<Ավիաբուժ>> ԲԿ ՓԲԸ-ի կողմից մատուցվում են նաև նման ծառայություններ, ինչպես նաև կապված ավիացիոն փակ, հսկվող և արգելված գոտիներում գտնվող օբյեկտներ մուտք գործելու <<Ավիաբուժ>> ԲԿ ՓԲԸ-ի հնարավորությունը :

6. Արձանագրության II բաժնի 7-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ 14.07.2017 թվականին ՌԴ ՕԷԿ պետական կորպորացիայի գլխավոր տնօրինության աշխատակիցների և <<Monitor Soft>> տնօրենի ընդունելության շրջանակում կատարված 126,5 հազ. դրամի ծախսերը փաստաթղթերով հիմնավորված են, որի վերաբերյալ կից ներկայացնում ենք ծախսն հիմնավորող փաստաթղթերի պատճեները:

Մյուս դեպքերի համար վճարումները կատարվել են, քանի որ ներկայացուցչական ծախսերը կատարվել են նպատակային, սակայն ելնելով կատարման վայրի առանձնահատկություններից (վերնիսաժ, գյուղմթերքի շուկա, պատմամշակույթային կառույցների հարակից տարածք և այլն) նշված ծախսերը հնարավոր չի եղել փաստաթղթերով հիմնավորել:

Միաժամանակ հայտնում ենք, որ նշված կետով կատարված վճարումները շահութաբաժնի հաշվարկման ժամանակ չեն ներառվել նվազեցվող ծախսերում:

7. Արձանագրության II բաժնի 8-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ ընկերության վառելիքի ծախսի նորմաներում տեղ գտած անճշտություններն 2019 թվականից գլխավոր տնօրենի հրամանով համապատասխանեցվել են ՀՀ կառավարության 01.06.2005 թվականի թիվ 1001 որոշման պահանջներին: Միևնուն ժամանակ ուզում ենք պարզաբանել, թեև, 2017 և 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, համաձայն Ընկերությունում գործող հաստատված վառելիքի ծախսի նորմաների արձանագրվել է 91.4 հազար դրամի կամ 258 լիտր ավել տրամադրած վառելիք ДТ -75 թրթռուռավոր տրակտորի շահագործման նպատակով, սակայն իրականում վերոհիշյալ տեխնիկան հատկացված է Ընկերության <<Մռավյան>> օբյեկտ, տարվա մեջ գրեթե 8 ամիս, հերթափոխ տեղափոխելու, ինչպես նաև երբեմն ճանապարհին անցանելի դարձնելու նպատակով և շահագործման ընթացքում շատ լուրջ դժվարություններ են առաջանում, կապված տեղանքի դժվարությունների, եղանակային անբարենպաստ պայմանների, անանցանելի ճանապարհի, տրակտորի տեխնիկական վիճակի և այլ հիմնավոր պատճառներով: Արդյունքում երբևէ փաստացի վառելիքի ավելցուկ չի արձանագրվել:

8. Արձանագրության II բաժնի 9-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ հաշվի առնելով այն, որ Ընկերության և ՔԱԳՎ-ի միջև 23.02.2016 թվականին կնքված թիվ 7.1 պայմանագրով նախատեսված տրանսպորտային միջոցի պահպանման ծախսերը գերազանցել են պայմանագրով նախատեսված տարեկան վճարի չափը, ուստի Ընկերության կողմից շահութաբաժնի հաշվարկման ժամանակ նշված ծախսերը չեն ներառվել նվազեցվող ծախսերում:

9. Արձանագրության II բաժնի 10-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ հաշվի առնելով արձանագրությամբ նշված դիտողությունը՝ կապված գործուղման հրամաններում գործուղման օրերի միջև ընկած ժամանակահատվածի համար միատիպ ձևակերպում տալու հետ, այսուհետ Ընկերության գործուղման հրամաններում տրվում են միատիպ ձևակերպումներ՝ մշտապես կիրառելով <<ներառյալ>> բառը:

Ինչ վերաբերվում է գործուղման ծախսերի հաշվետվություններն 1-ից 8 օրով ուշացնելուն, ապա հայտնում ենք, որ այն պայմանավորված է հերթափոխով աշխատող, արձակուրդում գտնվող, ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող և այլ պատճառներով աշխատանքի ներակայանալու ժամկետի հետ:

10. Արձանագրության II բաժնի 11-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ Ընկերությունը պարտավոր է փոխհատուցել վերապատրաստման նպատակով գործուղվող անձանց գործուղման ծախսերը: Որոշ դեպքերում Ընկերության կողմից նախապես նախատեսվել է գործուղման ծախսերի մի մասը, այդ թվում՝ օրապահիկի մի մասը, կատարել վերապատրաստման դասընթացների կազմակերպման

պայմանագրերով, իսկ ավիատոմսի, մուտքի վիզայի ձեռք բերման, ապահովագրության, ինչպես նաև Ընկերության կոլեկտիվ պայմանագրի 29-րդ կետով նախատեսված օրապահիկի ծախսերը անմիջապես փոխհատուցել գործուղվողին կամ վճարել համապատասխան կազմակերպությանը (ավիատոմս, մուտքի վիզա):

Հայտնում ենք, որ վերոնշյալ գործուղումների գծով օրապահիկի գծով ծախսը, դա՝ վերապատրաստման դասընթացների կազմակերպման պայմանագրերով նախատեսված օրապահիկի գծով ծախս հանդիսացող գումարների և Ընկերության կոլեկտիվ պայմանագրի 29-րդ կետով նախատեսված օրապահիկի (20 Ֆունտ ստեռլինգ կամ 20 Եվրո) գումարների հանրագումարն է, որը չի գերազանցում ՀՀ Կառավարության առ 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2335-Ն որոշման Հավելված 2-ով սահմանված օրապահիկի սահմանաչափը:

Ինչ վերաբերվում է օրապահիկի գումարի չափի հաշվարկի հիմնավորմանը, հայտնում ենք, որ այն հիմնավորվում է ՀՀ Կառավարության առ 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ՝ սահմանելով օրապահիկի չափերը՝ առանց ծախսը հիմնավորող փաստաթղթերի պահանջի: Ուստի օրապահիկի ծախսի համար Ընկերությունը իրավունք չունի գործուղվողից պահանջելու ինչ որ ծախս հավաստող փաստաթուղթ:

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի մասով

1. Ընկերության հաստիքացուցակով նախատեսված, թռիչքային գործունեության ծառայության պետի պաշտոնի համար, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին առաջարկ կներկայացնենք՝ վերանայելու և նոր հաստիք սահմանելու հարցում:

2. 6 օդաչու-ուսանողների ուսումնական պրակտիկայի անցկացման համար երկրորդ կիսամյակում նախատեսված 201 ժամ 50 րոպե թռիչքային պրակտիկան ավարտին չի հասցվել: <<Ավիաուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեյում քննարկել է տարբերակ՝ թռիչքային պրակտիկան կազմակերպել Piper տիպի օդանավի վրա, քանի որ տվյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում՝ <<Զվարթնոց>> օդանավակայանում էր գտնվում Piper տիպի օդանավը: Ձեռք է բերվել համաձայնություն օդանավի սեփականատիրոջ հետ, բայց քանի որ օդանավի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում ուներ որոշակի կազմակերպչական խնդիրներ, այդ թվում և ժամանակի, իսկ ուսումնական պլանով նախատեսված թռիչքային պրակտիկան պետք է ավարտին հասցնել, այդ իսկ պատճառով տարվում են աշխատանքներ 201ժամ 50րոպե թռիչքային պրակտիկան ավարտին հասցնելու համար՝ մշակելով հնարավոր տարբերակներ:

3. Համաձայն 2019 թվականի փետրվարի 14-ի արձանագրության, մանրամասնում եմ Diamond DA 40 ինքնաթիռի վարձակալության վերաբերյալ տեղեկատվությունը:

a. Ընկերության կողմից Diamond DA 40 ինքնաթիռի վարձակալության համար <<Մեյն Ավիէյշն Տեքնիքս>> ՍՊԸ-ն 2013-2017 թվականներին՝ համաձայն պայմանգրերի, պարտավոր է պայմանագրի գործողության ընթացքում ապահովել օդանավի թռիչքային պիտանիությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Գործողության ընթացքում ապահովել՝ օդանավի ապահովագրությունը, օդանավում գտնվող թռիչքային անձնակազմի /օդաչու-հրահանգչի, օդաչու-ուսանողների/ ապահովագրությունը և երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրությունը: Սեփական միջոցներով կատարել օդանավի տեխնիկական սպասարկումը, պահեստամասերի և շարժիչների փոխարինումը և այլ ընթացիկ սպասարկման աշխատանքներ:

4. <<Ավիաուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թռիչքային առաջադրանքի կազմման և ձևակերպման գնման գործընթացի հետ, համաձայն 2013-2017 թվականների պայմանագրերի՝ սահմանված է, որ պատվիրատուն պարտավոր է կազմակերպել և իրականացնել ուսումնավարժանքային թռիչքային պրակտիկան ըստ հաստատված թռիչքային ծրագրի:Այս պատճառով <<Ավիաուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը կազմակերպել և իրականացրել է ուսումնավարժանքային թռիչքային առաջադրանքի կազմման և ձևակերպման գնման գործընթացը:

a. Ուսանողների անվտանգության ապահովման համար 2013-2017 թվականների <<Մեյն Ավիեյշն Տեքնիքս>> ՍՊԸ պայմանագրերում նախատեսված է , որ Պատվիրատուն պարտավոր է սեփական միջոցներով յուրաքանչյուր թռիչքից առաջ ձևակերպել թռիչքային առաջադրանքների փաստաթղթերը՝ Կատարողի հետ նախապես համաձայնեցված շահագործող ավիաընկերության միջոցով:

b. Համաձայն <<Արմենիա Էյրվեյզ>> ավիաընկերություն ՓԲԸ-ն 2013-2017 թվականների պայմանագրերի՝ նախատեսված աշխատանքները ամբողջությամբ կատարվել են և ընդունվել երկու ընկերությունների կողմից ստորագրված, կնքված հանձնման-ընդունման ակտերով:

5. <<Ավիաուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից շահագործվել է ԳԱԶ 31-10 մակնիշի մեկ մեքենան, որի համար 2017 թվականին և 2018 թվականի հոկտմբերի 1-ի դրությամբ օգտագործվել է համապատասխանաբար՝ 3100 և 2400 լիտր վառելիք: <<Ավիաուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ավտոմեքենայի երթուղային թերթերում հաշվառումը կատարել է ամսական կտրվածքով՝ առանց օրական հաշվարկի: Ընկերությունը աշխատում է շաբաթական 5 օր, շաբաթ-կիրակի և տոն օրերին չի աշխատում, այդ իսկ պատճառով վառելիքը նախատեսված է միայն աշխատանքային օրերի համար և չի ներառվել վառելիքի ծախսերի մեջ: Վառելիքը օգտագործվել է տնօրենի, ընկերության կարիքների և հատուկ չվերթերի կազմակերպման աշխատանքները իրականացնելու համար , որի պատճառով մեքենան հաճախ է երթևեկել կենտրոն:

Տեղեկատվություն
2017-2018թթ. ՀՀ պետական և քաղաքացիական օդանավերի գրանցման վերաբերյալ

Հավելված 1

գրանցման տարեթիվ	Գրանցման սերտիֆիկատի համար	Ժամկետ	Ազգային գրանցման նիշերը	Օդանավ արտադրողը և տարեթիվը	Օդանավի տեսակը և սերիայի համարը	Օդանավի նշանակությունը	Օդանավի սեփականատերը	Սեփականատիրոջ գտնվելու վայրը	Օդանավի շահագործողը
2017թ.									
12.04.2017	3240	12.04.2018	EK 26005	KiAPO, 1982	An-26B, 122-05	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	«Մարս Ավիա» ՓԲԸ
23.03.2017	3239	23.03.2018	EK 26006	KiAPO, 1982	An-26B, 121-02	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	«Սկիվա էյր» ՍՊԸ
12.04.2017	3241	12.04.2018	EK 26006	KiAPO, 1982	An-26B, 121-02	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	«Մարս Ավիա» ՓԲԸ
19.01.2017	3236	19.01.2018	EK 26133	KiAPO, 1983	An-26B, 133-06	բեռնատար	«Վուլկան էյր (ՊՏՎԱՅ) Ատդ»	Մահե, Սեյշելներ	«Սկիվա էյր» ՍՊԸ
13.04.2017	3245	19.01.2018	EK 26133	KiAPO, 1983	An-26B, 133-06	բեռնատար	Վուլկան (ՊՏՎԱՅ) Ատդ»	Մահե, Սեյշելներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
24.11.2017	3266	24.11.2019	EK 2801	«PZL-Mielec», 1988	An-28, 1AJ 005-01	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3243	30.06.2017	EK 2809	«PZL-Mielec», 1990	An-28, 1AJ 009-09	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
20.06.2017	3256	20.06.2018	EK 2809	«PZL-Mielec», 1990	An-28, 1AJ 009-09	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
28.06.2017	3259	28.06.2018	EK 2811	«PZL-Mielec», 1990	An-28, 1AJ007-11	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3244	24.10.2017	EK 2815	«PZL-	An-28,	բեռնատար	«Կռատոլ	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա»

				Mielec», 1988	1AJ004-15		Ավիէյշն Ֆզս»		ՓԲԸ
27.07.2017	3261	27.07.2018	EK 2815	«PZL-Mielec», 1988	An-28, 1AJ004-15	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
25.05.2017	3253	25.05.2018	EK 32002	Airbus, 1997	A320-211, 0726	ուղևորատար	«Արոլովա էնտերպրայզես	Նիկոսիյա, Կիպրոս	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
16.06.2017	3255	16.06.2018	EK 32008	Airbus, 1992	A320-211, 0229	ուղևորատար	«Յունիբսունկ» ՓԲԸ	Երևան, ՀՀ	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
20.10.2017	3263	20.10.2018	EK 32008	Airbus, 1992	A320-211, 0229	ուղևորատար	«Յունիբանկ» ՓԲԸ	Երևան, ՀՀ	«Տանդեմ-Աերո» ՍՊԸ
24.01.2017	3237	24.01.2018	EK 32400	KAP Aviant 1991	An-32B, 2410	բեռնատար	Գալֆ Ատաս Աէրոսպեյս Ֆզս»	Պանապա սիտի, Պանամա	«Սկիվա էյր» ՍՊԸ
12.04.2017	3242	12.04.2018	EK 32400	KAP Aviant 1991	An-32B, 2410	բեռնատար	Գալֆ Ատաս Աէրոսպեյս Ֆզս»	Պանապա սիտի, Պանամա	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3246	13.04.2018	EK 32408	KAP Aviant 1987	An-32A, 1408	բեռնատար	Իգլս գլոբալ էքսպրես Ֆզե»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3250	01.12.2017	EK 32703	KAP Aviant 1988	An-32A, 1703	բեռնատար	«Աքուլայն Ինթերնեյշնլ Քորպորայշն	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
24.11.2017	3265	24.11.2019	EK 32703	KAP Aviant 1988	An-32A, 1703	բեռնատար	«Աքուլայն Ինթերնեյշնլ Քորպորայշն	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
22.02.2017	3238	22.02.2018	EK 72928	KSAMC, 1988	An-72-100, 365.720.60.640	բեռնատար	«Մարիտայմ էյր	Լիմասսոլ, Կիպրոս	«Սկիվա էյր» ՍՊԸ
13.04.2017	3249	22.02.2018	EK 72928	KSAMC, 1988	An-72-100, 365.720.60.640	բեռնատար	«Մարիտայմ էյր	լիմասոլ, Կիպրոս	«Մարս Ավիա» ՓԲԸ

22.06.2017	3257	22.06.2018	EK 73736	Boeing, 1996	B737-505, 26336	ուղևորատար	«Ռաֆ Տրեյդ Կուրպորեյշն»	Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ
16.01.2017	3234	16.01.2018	EK 73772	Boeing, 1998	B737-505, 28472	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
16.01.2017	3235	16.01.2018	EK 73775	Boeing, 1998	B737-505, 28475	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
09.06.2017	3254	09.06.2018	EK 73776	Boeing, 1997	B737-505, 28471	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
21.04.2017	3252	11.04.2017	EK 73797	Boeing, 1994	B737-500, 26297	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
06.11.2017	3264	06.11.2019	EK 74008	KSAMC, 1992	An-74S-100, 365.470.95.900	բեռնատար	«Շելտի Տրեյդ	Գլազգո Միացյալ Թագավորություն	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3247	20.07.2017	EK 74036	KSAMC, 1995	An-74-200, 365.470.98.965	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
21.07.2017	3260	21.07.2018	EK 74036	KSAMC, 1995	An-74-200, 365.470.98.965	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3251	29.06.2017	EK 74052	KSAMC, 1994	An-74-200, 365.470.98.944	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
27.06.2017	3258	27.06.2018	EK 74052	KSAMC, 1994	An-74-200, 365.470.98.944	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2017	3248	27.07.2017	EK 74923	KSAMC, 1992	An-74-200, 365.470.96.	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական	«Մարս Ավիա» ՓԲԸ

					923			Վիրջին Կղզիներ	
28.07.2017	3262	28.07.2018	EK 74923	KSAMC, 1992	An-74-200, 365.470.96. 923	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
գրանցման տարեթիվ	**Գրանցման սերտիֆիկատի համար**	**Ժամկետ**	**Ազգային գրանցման նիշերը**	**Օդանավ արտադրողը և տարեթիվը**	**Օդանավի տեսակը և սերիայի համարը**	**Օդանավի նշանակությունը**	**Օդանավի սեփականատերը**	**Սեփականատիրոջ գտնվելու վայրը**	**Օդանավի շահագործողը**
2018թ.									
15.01.2018	3267	15.01.2019	EK 73772	Boeing, 1998	B737-505, 28472	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
15.01.2018	3268	15.01.2019	EK 73775	Boeing, 1998	B737-505, 28475	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
16.02.2018	3270	16.02.2020	EK 32008	Airbus, 1992	A320-211, 0229	ուղևորատար	«Յունիբանկ» ՓԲԸ	Երևան, ՀՀ	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
6/12/2018	3281	անժամկետ	EK 26005	KiAPO, 1982	An-26B, 122-05	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	«Մարս Ավիա» ՓԲԸ
29.03.2018	3272	անժամկետ	EK-B001	«RUSBAL» CJSC, 2018	AT-104, X55TA, 00118	մասնավոր	Նաիրի Արեգի Բարսեգյան	Երևան, ՀՀ	Նաիրի Արեգի Բարսեգյան
05.04.2018	3273	05.04.2020	EK 32408	KAP Aviant 1987	An-32A, 1408	բեռնատար	Ալնա Աէրո Դիստրիբյուշն ֆայնեշլ հոլդինգ ՖԶԵ	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
12.04.2018	3274	12.04.2020	EK 32400	KAP Aviant 1991	An-32B, 2410	բեռնատար	«Գալֆ Ատլաս Աէրոսպեյս Ֆզս»	Պանապա սիտի, Պանամա	«Մարս Ավիա» ՓԲԸ
13.04.2018	3275	անժամկետ	EK 225	DIAMOND AIRCRAFT INDUSTRI	DA40TDI, D4.225	հատուկ կիրառման	«Մեյն Ավիէյշըն Տեքնիքս»	Երևան, ՀՀ	«Մեյն Ավիէյշրն Տեքնիքս»

				ES GMBH, 2006			Սպը		Սպը
19.04.2018	0003	անժամկետ	ARMENIA 701	Airbus, 1992	A319-132, 0913	պետական, ոչ ռազմական	ՔԱԳՎ	Երևան, ՀՀ	-
5/24/2018	3276	5/24/2019	EK 32002	Airbus, 1997	A320-211, 0726	ուղևորատար	«Արոլովա էնտերպրայզես	Նիկոսիյա, Կիպրոս	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
5/30/2018	3277	5/9/2019	EK 73797	Boeing, 1994	B737-500, 26297	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
6/5/2018	3278	6/5/2020	EK 73776	Boeing, 1997	B737-505, 28471	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
6/5/2018	3279	6/5/2020	EK 74052	KSAMC, 1994	An-74-200, 365.470.98.944	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
6/5/2018	3280	6/5/2020	EK 4104	LET	L-410 UVP-E 861606	ուղևորատար	«KUSH AIR»	Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
6/15/2018	3282	6/20/2019	EK 73736	Boeing, 1996	B737-505, 26336	ուղևորատար	«Ռաֆ Տրեյդ Կուրպորեյշն»	Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ
6/19/2018	3283	անժամկետ	EK 31001	Airbus, 1997	A310-325, 636	ուղևորատար	«ARMENIA Airways» aircompany	Երևան, ՀՀ	«ARMENIA Airways» aircompany
6/19/2018	3284	անժամկետ	EK-H001	Robinson Helicopter Company	R66, 0546	ուղևորատար	«ARMENIAN Helicopters» aircompany	Երևան, ՀՀ	«ARMENIAN Helicopters» aircompany
6/25/2018	3285	անժամկետ	EK 31002	Airbus, 1997	A310-325, 644	ուղևորատար	«ARMENIA Airways» aircompany	Երևան, ՀՀ	«ARMENIA Airways» aircompany
6/26/2018	3286	անժամկետ	EK 72425	KSAMC,	An-72-100D,	ուղևորատար	«V-BERD	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա»

					365.720.30.425		AVIA» LTD		ՓԲԸ
7/19/2018	3287	անժամկետ	EK 74923	KSAMC, 1992	An-74-200, 365.470.96.923	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջինա Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ
7/27/2018	3288	անժամկետ	EK 2815	«PZL-Mielec», 1988	An-28, 1AJ004-15	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	«Մարս Ավիա» ՓԲԸ
8/24/2018	3289	անժամկետ	EK 32003	Airbus,	A320-231, 0260	ուղևորատար	«Gratsyn Enterprises Corp» LTD	Ք.Բեիլզ Բելիզ	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
9/18/2018	3290	անժամկետ	EK-H002	Airbus, Helicopters	EC 130T2, 8167	ուղևորատար	«ARMENIAN Helicopters» aircompany	Երևան, ՀՀ	«ARMENIAN Helicopters» aircompany
30.01.2018	3269	30.01.2020 ապագրանցվել է 11,05,2018թ	EK 74036	KSAMC, 1995	An-74-200, 365.470.98.965	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	«Մարս Ավիա» ՓԲԸ

2017 և 2018թթ. ՀՀ գրանցված օդանավերը ըստ բազավորման վայրի

Հավելված 2

հ/հ	Ազգային գրանցման նիշերը	Օդանավ արտադրողը և տարեթիվը	Օդանավի տեսակը և սերիայի համարը	Օդանավի նշանակությունը	Օդանավի սեփականատերը	Սեփականատիրոջ գտնվելու վայրը	Օդանավի բազավորման վայրը	Օդանավի շահագործողը
	2017							
1	EK 26005	KiAPO, 1982	An-26B, 122-05	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	Ք.Ջուբա Հարավ. Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
2	EK 26006	KiAPO, 1982	An-26B, 121-02	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Սկիվա էյր» ՍՊԸ
	EK 26006	KiAPO, 1982	An-26B, 121-02	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
3	EK 26133	KiAPO, 1983	An-26B, 133-06	բեռնատար	«Վուլկան էյր (ՊՏՎԱՅ) Ատդ»	Մահե, Սեյշելներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Սկիվա էյր» ՍՊԸ
	EK 26133	KiAPO, 1983	An-26B, 133-06	բեռնատար	Վուլկան (ՊՏվՎԱՅ) Ատդ»	Մահե, Սեյշելներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
4	EK 2801	«PZL-Mielec», 1988	An-28, 1AJ 005-01	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
5	EK 2809	«PZL-Mielec», 1990	An-28, 1AJ 009-09	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
6	EK 2811	«PZL-Mielec», 1990	An-28, 1AJ007-11	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ

7	EK 2815	«PZL-Mielec», 1988	An-28, 1AJ004-15	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
8	EK 32002	Airbus, 1997	A320-211, 0726	ուղևորատար	«Արոլովա էնտերպրայզես	Նիկոսիյա, Կիպրոս	ք. Սալոնիկիի օդանավակայան, Հունաստան	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
9	EK 32008	Airbus, 1992	A320-211, 0229	ուղևորատար	«Յունիբսունկ» ՓԲԸ	Երևան, ՀՀ	ք.Կիշենև, Մոլդովա	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
10	EK 32408	KAP Aviant 1987	An-32A, 1408	բեռնատար	Իգլս գլոբալ էքսպրես Ֆզե»	Շարժա, ԱՄԷ	ք. Նաջմենա, Չադ	«Մարս Ավիա» ՓԲԸ
11	EK 32703	KAP Aviant 1988	An-32A, 1703	բեռնատար	«Աքուլայն Ինթերնեյշնլ Քորպորայշն	Շարժա, ԱՄԷ	ք. Նաջմենա, Չադ	«Մարս Ավիա» ՓԲԸ
12	EK 72928	KSAMC, 1988	An-72-100, 365.720.60.640	բեռնատար	«Մարիտայմ էյր	Լիմասսոլ, Կիպրոս	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Սկիվա էյր» ՍՊԸ
	EK 72928	KSAMC, 1988	An-72-100, 365.720.60.640	բեռնատար	«Մարիտայմ էյր	լիմասոլ, Կիպրոս	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
13	EK 73772	Boeing, 1998	B737-505, 28472	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	ք.Խարտում, Հյուսիսային Սուդան	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
14	EK 73775	Boeing, 1998	B737-505, 28475	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	ք. Խարտում, Հյուսիսային Սուդան	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
15	EK 74008	KSAMC, 1992	An-74S-100, 365.470.95.900	բեռնատար	«Շելտի Տրեյդ	Գլազգո Միացյալ Թագավորություն	Մոսկվա «Օստաֆևո» օդանավակայան, ՌԴ	«Մարս Ավիա» ՓԲԸ

16	ԵՔ 74036	KSAMC, 1995	An-74-200, 365.470.98.965	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
17	ԵՔ 74052	KSAMC, 1994	An-74-200, 365.470.98.944	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
18	ԵՔ 74923	KSAMC, 1992	An-74-200, 365.470.96.923	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
1	ԵՔ 32400	KAP Aviant 1991	An-32B, 2410	բեռնատար	Գալֆ Ատաս Աէրոսպեյս Ֆզս»	Պանապա սիտի, Պանամա	«Շիրակ» օդանավակայան	«Սկիվա էյր» ՍՊԸ
	ԵՔ 32400	KAP Aviant 1991	An-32B, 2410	բեռնատար	Գալֆ Ատաս Աէրոսպեյս Ֆզս»	Պանապա սիտի, Պանամա	«Շիրակ» օդանավակայան	«Մարս Ավիա» ՓԲԸ
2	ԵՔ 73736	Boeing, 1996	B737-505, 26336	ուղևորատար	«Ռաֆ Տրեյդ Կուրպորեյշն»	Բրիտանական Վիրջին Կղզիներ	Երևան, ՀՀ	«Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ
3	ԵՔ 73776	Boeing, 1997	B737-505, 28471	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Շիրակ» օդանավակա\սն	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
4	ԵՔ 73797	Boeing, 1994	B737-500, 26297	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	ք. Գյումրի, «Շիրակ» օդանավակայան	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
	2018							
1	ԵՔ 73772	Boeing, 1998	B737-505, 28472	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	ք.Խարտում, Հյուսիսային Սուդան	«Տարոն-Ավիա» ՍՊԸ

2	EK 73775	Boeing, 1998	B737-505, 28475	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	ք. Խարտում, Հյուսիսային Սուդան	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
3	EK 32008	Airbus, 1992	A320-211, 0229	ուղևորատար	«Յունիբանկ» ՓԲԸ	Երևան, ՀՀ	ք.Կիշենև, Մոլդովա	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
4	EK 26005	KiAPO, 1982	An-26B, 122-05	բեռնատար	«Պլանո Տռեյդինգ	Վարշավա Լեհաստան	Ք.Ջուբա Հարավ. Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
5	EK 32408	KAP Aviant 1987	An-32A, 1408	բեռնատար	Ալնա Աէրո Դիստրիբյուշն ֆայնեշլ հոլդինգ ՖԶԵ	Շարժա, ԱՄԷ	Մոսկվա «Օստաֆևո» օդանավակայան, ՌԴ	«Մարս Ավիա» ՓԲԸ
6	EK 32002	Airbus, 1997	A320-211, 0726	ուղևորատար	«Արոլովա էնտերպրայզես	Նիկոսիյա, Կիպրոս	ք. Սալոնիկիի օդանավակայան, Հունաստան	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
7	EK 74052	KSAMC, 1994	An-74-200, 365.470.98.944	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
8	EK 4104	LET	L-410 UVP-E 861606	ուղևորատար	«KUSH AIR»	Ջուբա, Հարավային Սուդան	Ք.Ջուբա Հարավ. Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
9	EK 72425	KSAMC,	An-72-100D, 365.720.30.425	ուղևորատար	«V-BERD AVIA» LTD	Շարժա, ԱՄԷ	Ք.Կիմշասա Կոնգո	«Մարս Ավիա» ՓԲԸ
10	EK 74923	KSAMC, 1992	An-74-200, 365.470.96.923	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջինա Կղզիներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
11	EK 2815	«PZL-Mielec», 1988	An-28, 1AJ004-15	բեռնատար	«Կռատոլ Ավիէյշն Ֆզս»	Շարժա, ԱՄԷ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ

12	EK 32003	Airbus,	A320-231, 0260	ուղևորատար	«Gratsyn Enterprises Corp» LTD	Ք.Բեիլզ Բելիզ	Ք.Բակեու Ռումինիա	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
13	EK 74036	KSAMC, 1995	An-74-200, 365.470.98.965	բեռնատար	«Գելեոն Թրեյդ Ավիա	Թորթոլա Բրիտանական Վիրջին Կղզիներ	ք. Ջուբա, Հարավային Սուդան	«Մարս Ավիա» ՓԲԸ
1	EK-H002	Airbus, Helicopters	EC 130T2, 8167	ուղևորատար	«ARMENIAN Helicopters» aircompany	Երևան, ՀՀ	Երևան, ՀՀ	«ARMENIAN Helicopters» aircompany
2	EK 73736	Boeing, 1996	B737-505, 26336	ուղևորատար	«Ռաֆ Տրեյդ Կուսպորեյշն»	Բրիտանական Վիրջին Կղզիներ	Երևան, ՀՀ	«Ավիակոմպանիա Արմենիա» ՍՊԸ
3	EK 31001	Airbus, 1997	A310-325, 636	ուղևորատար	«ARMENIA Airways» aircompany	Երևան, ՀՀ	Երևան, Զվարթնոց օդակայան	«ARMENIA Airways» aircompany
4	EK-H001	Robinson Helicopter Company	R66, 0546	ուղևորատար	«ARMENIAN Helicopters» aircompany	Երևան, ՀՀ	Երևան, ՀՀ	«ARMENIAN Helicopters» aircompany
5	EK 31002	Airbus, 1997	A310-325, 644	ուղևորատար	«ARMENIA Airways» aircompany	Երևան, ՀՀ	Երևան, Զվարթնոց օդակայան	«ARMENIA Airways» aircompany
6	EK 73797	Boeing, 1994	B737-500, 26297	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	ք. Գյումրի, «Շիրակ» ք.Կիշենև, Մոլդովա	«Ատլանտիս Յուրոփիան էյրվեյզ» ՍՊԸ
7	EK 73776	Boeing, 1997	B737-505, 28471	ուղևորատար	«Մերիդիեն (Ֆզե)»	Շարժա, ԱՄԷ	«Շիրակ» օդանավակայան	«Տարոն-Ավիա» ՍՊԸ
8	EK 32400	KAP Aviant 1991	An-32B, 2410	բեռնատար	«Գալֆ Ատլաս Աէրոսպեյս Ֆզս»	Պանապա սիտի, Պանամա	«Շիրակ» օդանավակայան	«Մարս Ավիա» ՓԲԸ

9	EK 225	DIAMOND AIRCRAFT INDUSTRIES GMBH, 2006	DA40TDI, D4.225	հատուկ կիրառման	«Մեյն Ավիէյշընն Տեքնիքս» Սպը	Երևան, ՀՀ	Երևան, ՀՀ Էրեբունի օդակայան	«Մեյն Ավիէյշրոն Տեքնիքս» Սպը
10	ARMENIA 701	Airbus, 1992	A319-132, 0913	պետական, ոչ ռազմական	ՔԱԳՎ	Երևան, ՀՀ	Երևան, ՀՀ	-
11	EK-B001	«RUSBAL» CJSC, 2018	AT-104, X55TA, 00118	մասնավոր	Նաիրի Արեգի Բարսեգյան	Երևան, ՀՀ	Երևան, ՀՀ	Նաիրի Արեգի Բարսեգյան

Հավելված 3

Տեղեկանք
Որոշ երկրներում թռիչքային անձնակազմի անդամներին վկայականի տրամադրման, դրանց փոփոխության, որակավորման նիշերի գործողության ժամկետի երկարաձգման համար գանձվող վճարների վերաբերյալ[2]

Գործառույթի տեսակը	*Իռլանդիա (եվրո)*	*Գերմանիա (եվրո)*	*Լատվիա (եվրո)*	*Լիտվա (եվրո)*	*Վրաստան (լարի)*	*Անգլիա (եվրո)*	*Ֆիլիպիններ (պեսո)*
Թռիչքային անձնակազմի անդամներին (ԹԱԱ) նոր տիպի վկայականի տրամադրում (փոխարինում)	1000-2300	800-1500	700-1000	700-1000	125-250	137-775	1260-2450
ԹԱԱ (սրահի անձնակազմ) նոր տիպի վկայականի տրամադրում (փոխարինում)	500-1000	400-800	200-500	300-500	35-125	26-262	420-2100
ԹԱԱ վկայականներում ինքնաթիռի տիպի և/կամ սարքավորումներով թռիչքներ կատարելու որակավորման նիշերի գործողության ժամկետի երկարաձգում	400-3000	300-2500	200-900	100-1000	125-250	26-262	420-2100

1) https://www.caa.co.uk/General-aviation/Pilot-licences/Applications/Process/Licence-fees-and-costs/
2) https://www.iaa.ie/personnel-licensing/maintenance-engineer---amel-licensing/ame-application-forms-templates/application-forms-templates-details/docs/default-source/publications/forms/personnel-licensing-forms/maintenance-engineer-forms/rppl-f-120
3) http://www.gcaa.ge/geo/CertificationandLicensing.php
4) http://www.caa.lv/en/forms/personal-licensing
5) https://www.caa.lt/index.php?2639595671
6) https://www.lba.de/EN/Home/home_node.html